ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի, Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքները

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ

Նիդերլանդների թագավորություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ

Զեկույցը տպագրվում է Նիդերլանդների կառավարության և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի համատեղ ֆինանսավորմամբ Հելսինկյան Քաղաքացիական Վասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավապաշտպանական կարողությունների և գործունեության արդյունավետության բարձրացումը» եռամյա ծրագրի շրջանակներում:

Վանաձոր 2009

Խմբագրակազմ՝

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Հեղինակ՝ Հայկուհի Հարությունյան

Սրբագրիչներ՝ Մարիետա Թեմուրյան
Տաթևիկ Մատինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնողների կողմից 5

Ներածություն 6

Փակ և կիսափակ հաստատություններում իրականացված մոնիթորինգի մեթոդաբանություն 8

Ներկայացվող զեկույցում օգտագործված հիմնական հասկացություններ 11

Մարդու իրավունքների վիճակը «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում . 12

Ընդհանուր տեղեկություններ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ 12

Առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ 13

Խցեր, հիվանդասենյակներ, պատժախցեր, հացադուլի և կարանտինային սենյակներ 13

Սնունդ 16

Սանիտարահիգիենիկ վիճակ 18

Կապն արտաքին աշխարհի հետ 20

Կարճատև տեսակցություններ 20

Երկարատև տեսակցություններ 20

Հեռախոսակապ 21

Նամակագրություն 21

Հանձնուքներ 22

Բուժսպասարկում 22

Հանգստի և ազատ ժամանցի կազմակերպում 24

Զբոսանք 25

Վերաբերմունք 27

Մարդու իրավունքների վիճակը Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում 29

Ընդհանուր տեղեկություններ Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության վերաբերյալ 29

Առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ 30

Ննջասենյակներ 30

Դասապատրաստման սենյակներ 31

Սնունդ 31

Կրթություն 35

Վերաբերմունք 37

Հանգստի և ազատ ժամանցի կազմակերպում 40

Կապն արտաքին աշխարհի հետ 41

Այցելություններ 41

Հեռախոսակապ 41

Բուժսպասարկում 42

Եզրակացություն փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ 45

Առաջարկություններ փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի բարելավման վերաբերյալ 46

Լոռու մարզային հոգեբուժական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը և Վանաձորի մանկատանը 2007 թվականին իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկումներ 48

Վանաձորի մանկատանն իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկման հետևանքով առանձնացված համակարգային և հաստատությանը հատուկ խնդիրներ և դրանց լուծման կապակցությամբ առաջարկություններ 49

Վանաձորի ծերատանն իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկման հետևանքով առանձնացված համակարգային և հաստատությանը հատուկ խնդիրներ և դրանց լուծման կապակցությամբ առաջարկություններ 50

Լոռու մարզային հոգեբուժական դիսպանսերում իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկման հետևանքով առանձնացված համակարգային և հաստատությանը հատուկ խնդիրներ և դրանց լուծման կապակցությամբ առաջարկություններ 52

Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքներ 54

2008 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների դիտորդության արդյունքներ 58

Հետընտրական հասարակական-քաղաքական գործընթացներ 72

Հավելվածներ 82

Նախաձեռնողների կողմից

Սույն զեկույցի տպագրությունը նախաձեռնող խումբը իր շնորհակալությունն է հայտնում բոլոր նրանց, ում անմիջական օգնությամբ և մասնակցությամբ հնարավոր դարձավ նշված աշխատանքների իրականացումը և արդյունքների տպագրությունը:

Հայկուհի Հարությունյանը, Արայիկ Ջալյանը, Սյուզաննա Ղարաղաշյանը, Ելենա Սարգսյանը, Արթուր Սուքիասյանը, Նարինե Սուքիասյանը, Մարիետա Թեմուրյանը, Անի Ղամբարյանը, Լուսինե Նգոյանը, Մարիամ Այվազյանը, Ադրինե Մուրադյանը, Լուսինե Թումանյանը, Արևիկ Միքայելյանը, Աստղիկ Էհտիբարյանը, Աշխեն Բաբայանն անմիջականորեն իրականացրեցին մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությունները «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Քաղաքացիական հասարակության ինստիտուտի փորձագետներ Արման Դանիելյանին և Լիլիթ Պետրոսյանին:

Իրենց պատրաստակամության և ուսումնասիրությունների իրականացման ընթացքում մոնիթորներին ցուցաբերած աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության աշխատակիցներին:

Ներածություն

Սույն զեկույցում ներկայացվում է մարդու իրավունքների վիճակը Լոռու մարզի փակ և կիսափակ[1] հաստատություններում՝ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում:

Զեկույցը տեղեկություններ է տրամադրում նաև 2008-2009 թթ. ընթացքում Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր և Սպիտակ քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքների, ինչպես նաև 2008 թ. փետրվարին կայացած ՀՀ նախագահի ընտրությունների և հետընտրական իրադարձությունների վերաբերյալ:

Մարդու իրավունքների մոնիթորինգ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում

2006 թ. նոյեմբեր ամսին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն իրականացնում է «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավապաշտպանական կարողությունների և գործունեության արդյունավետության բարձրացումը» եռամյա ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ձևավորել Լոռու մարզում մարդու իրավունքների խախտումների արագ արձագանքման խումբ՝ Լոռու մարզի 5 քաղաքներից նոր կամավորների ընդգրկմամբ:

- Լոռու մարզից ընդգրկվեցին 16 կամավորներ, որոնց համար ծրագրի շրջանակներում կազմակերպվեցին մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված տարբեր դասընթացներ: Դասընթացների արդյունքում ձեռք բերած գիտելիքները մասնակիցները կիրառեցին պրակտիկ գործողություններում, որոնցից էր նաև մարդու իրավունքների մոնիթորինգը Լոռու մարզի փակ և կիսափակ հաստատություններում:

2008 թ. սեպտեմբերի 8-11-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության թույլտվությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 6 աշխատակիցների կողմից[2] ուսումնասիրություններ են իրականացվել «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, իսկ 2008 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում 10 աշխատակիցների կողմից՝ Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում:

Արդյունավետ մոնիթորինգի իրականացման համար կազմակերպության թվով 16 աշխատակիցների համար նախապես կազմակերպվել է 2 դասընթաց՝ «Քրեակատարողական հիմնարկների մոնիթորինգ» և «Խնամքի կենտրոնների մոնիթորինգ» թեմաներով:

Նշված դասընթացներն իրենց մեջ ներառել են ազգային օրենսդրության, միջազգային ստանդարտների վերաբերյալ տեսական և գործնական պարապմունքներ: Դասըն-

[1] Սրանք այն հիմնարկություններն են, որտեղ մարդիկ շատ հաճախ հայտնվում են ոչ իրենց կամքով որոշակի իրավական ակտերի հիման վրա և պահվում են հատուկ չափորոշիչներին համապատասխան, և այդ հաստատություններում ***սահմանափակվում է նրանց ազատ տեղաշարժման իրավունքը:***

[2] Կազմակերպությունը խնդրել էր ՀՀ արդարադատության նախարարությանը քրեակատարողական հիմնարկում ուսումնասիրություն իրականացնել 10 օրերի ընթացքում, սակայն նախարարությունը թույլատրեց իրականացնել ուսումնասիրությունը ընդամենը 3 օր, բացի այդ կազմակերպության պատասխան գրությամբ քրեակատարողական վարչությունը «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ մուտքի թույլտվություն էր տրամադրել ներկայացված 6 մոնիթորներին, իսկ քրեակատարողական հիմնարկին տրամադրել էր ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացված 6 աշխատակիցներից միայն երկուսի անուն ազգանունները: Արդյունքում մոնիթորինգի առաջին օրը քրեակատարողական հիմնարկ են մտել միայն երկու մոնիթոր, իսկ մյուս օրերին լրացուցիչ թույլտվության արդյունքում ևս 4 մոնիթոր:

թացների ընթացքում մշակվել են մոնիթորինգի իրականացման հիմնական գործիքները, մոնիթորինգների իրականացման պլանները, որոնց հիման վրա իրականացվել են մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությունները «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում:

Նշված հաստատություններում բացահայտված յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ ձևակերպվել են համապատասխան առաջարկություններ:

Մոնիթորինգի արդյունքում պատրաստված սույն զեկույցը հանդիսանում է Լոռու մարզի փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի մասին տեղեկատվություն տրամադրող լավագույն միջոցներից մեկը: Այն հասցեագրվում է

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը
- ՀՀ առողջապահության նախարարությանը
- «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկին
- Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությանը
- ինչպես նաև այն կառույցներին ու շահագրգիռ անձանց, ովքեր հետաքրքրվում են Հայաստանում մարդու իրավունքների վիճակով, առկա խնդիրներով և դրանց լուծմանն աջակցելու պատրաստակամություն են դրսևորում:

Լոռու մարզի հինգ քաղաքներում իրականացված իրավախորհրդատվություն

Լոռու մարզի հինգ քաղաքներում իրավախորհրդատվությունն իրականացվել է կազմակերպության տեղական ներկայացուցչությունների միջոցով: Կազմակերպվել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն, որի հիման վրա էլ ամիսը երկու անգամ նշված քաղաքներ այցելության արդյունքում տեղում քաղաքացիներին տրամադրվել է անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն:

2008 թ. նախագահական ընտրությունների շրջանում կազմակերպության կողմից իրականացվել է նախընտրական քարոզչության, քվեարկության գործընթացի, ինչպես նաև հետընտրական իրադարձությունների դիտորդություն: Դիտորդության ընթացքում հայտնաբերված խախտումների կապակցությամբ կազմակերպությունը համապատասխան իրավական միջոցներ է ձեռնարկել:

Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը և Վանաձորի մանկատանը 2007 թվականին իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկումներ

2008 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են Վանաձորի ծերատանը, Վանաձորի մանկատանը և Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում իրականացված մոնիթորինգի արդյունքների 6 քննարկումներ:

Քննարկումներին մասնակցել են ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, հասարակական կազմակերպությունների, Լոռու մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտպանության, առողջապահության բաժնի, Հայ օգնության ֆոնդի, Վանաձորի ծերատան, Վանաձորի մանկատան, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի աշխատակիցները:

Քննարկումների ընթացքում ներկայացված խնդիրների շուրջ տրվել են պարզաբանումներ և մշակվել են առաջարկություններ խնդիրների լուծման կապակցությամբ:

Փակ և կիսափակ հաստատություններում իրականացված մոնիթորինգի մեթոդաբանություն

Փակ և կիսափակ հաստատություններում մոնիթորինգն իրականացվում և այդ հաստատություններում մարդու իրավունքների վիճակը գնահատվում է միջազգային և ազգային օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափորոշիչների համաձայն: Մոնիթորինգի միջոցով պարզվում է՝ որքանով են պահպանվում սահմանված չափորոշիչները:

Փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի գնահատման առաջին պայմանն ազգային օրենսդրության մեջ միջազգային չափորոշիչների արտահայտման աստիճանն է:

Գնահատման համար երկրորդ կարևոր հանգամանքն այդ չափորոշիչների պրակտիկ կիրարկումն է:

Նշված չափորոշիչներն են

- առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ կենսապայմանները՝ սնունդը, սանիտարահիգիենիկ և կենցաղային պայմանները
- հանգստի և ազատ ժամանցի կազմակերպումը
- բժշկական օգնության ապահովումը
- մարդու արժանապատվությունը նվաստացնող, անմարդկային կամ այլ դաժան վերաբերմունքից, պատժից և բռնություններից զերծ մնալու իրավունքը /այդ թվում սոցիալ-հոգեբանական ծառայության ապահովում/
- անձնական կյանքը հարգելու և անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովումը
- արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը /նամակագրություն, հեռախոսային կապ, տեղեկատվություն ստանալու իրավունք, տեսակցություններ/
- կրթության իրավունքի ապահովումը:

Վերը նշված չափորոշիչները բխում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերից և կոնվենցիաներից, մասնավորապես՝

- «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա և դրան կից կամընտիր արձանագրություն
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիա
- Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ
- «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Եվրոպական կոնվենցիա
- Երեխաների իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիա
- ՄԱԿ-ի բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ
- ՀՀ սահմանադրություն
- ՀՀ քրեակատարողական օրենսգիրք
- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության N 153-Ն որոշում
- Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում /մանկատուն, գիշերօթիկ/ երեխաների տեղավորման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1735-Ն որոշում

- Երեխաների ցերեկային խնամք տրամադրելու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1877-Ն որոշում
- ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին 1324-Ն որոշում
- ՀՀ կառավարության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին ՀՀ կառավարության 413-Ն որոշում:

Մոնիթորինգի իրականացման ժամանակ հիմնական տեղեկատվությունը ստացվել է հետևյալ մեթոդներով.

- անհատական հարցազրույցներ նշված հաստատություններում ապրողների և աշխատակիցների հետ
- տվյալ հաստատության պայմանների դիտարկումներ
- փաստաթղթերի ուսումնասիրություն
- ազգային և միջազգային օրենսդրության վերլուծություն
- տեղեկատվություն ստանալու գրավոր հարցումներ:

Անհատական հարցազրույցներ: Հարցազրույցներն իրականացվել են հատուկ մշակված հարցաշարերի միջոցով անհատապես «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում գտնվող 27 ազատազրկվածների հետ /ընդհանուր 13 խցից/: Հարցվողներից 3-ը եղել են նախնական կալանքի մեջ գտնվող, 24-ը՝ դատապարտյալ, որոնցից 2-ը եղել են հիվանդասենյակում պահվողներ, 1-ը՝ պատժախցում, 1-ը՝ հացադուլի սենյակում և 2-ը տնտեսական մասի աշխատողներ: Հարցազրույցներ են անցկացվել նաև բուժմասի, խոհանոցի, հանձնուքների ստացման կետի, բանտային խանութի աշխատողների, տնօրենի հետ:

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում հարցազրույցներն իրականացվել են 6-18 տարեկան 56 երեխայի հետ, մասնավորապես՝

- 6 տարեկան- 2 երեխա
- 7 տարեկան- 2 երեխա
- 8 տարեկան- 2 երեխա
- 9 տարեկան- 5 երեխա
- 10 տարեկան- 5 երեխա
- 11 տարեկան- 6 երեխա
- 12 տարեկան- 8 երեխա
- 13 տարեկան- 7 երեխա
- 14 տարեկան- 10 երեխա
- 15 տարեկան- 6 երեխա
- 16 տարեկան- 2 երեխա
- 18 տարեկան- 1 երեխա

Հարցազրույցներ են իրականացվել նաև 6 դաստիարակների, ավագ դաստիարակի, 2 դայակների/սպասուհիների, 2 սոցիալական աշխատողների, բժշկի, ավագ բուժքրոջ, 3 բուժքույրերի, դիետ բուժքրոջ, հոգեբանի, գրադարանավարի, խոհարարի, մատուցողի, քույր-տնտեսուհու, լվացքարարի, տնօրենի հետ:

Դիտարկումներ: Դիտարկումներն իրականացվել են նախապես մշակված դիտարկման քարտերի միջոցով, որոնց մեջ գրանցվել են ընդհանուր շենքային պայմանները՝ սենյակներ, խոհանոց, սանհանգույց, լողասենյակներ, տեսակցությունների սենյակներ, զբոսանքի և ազատ ժամանցի սենյակներ, գրադարաններ, պահեստներ, քրեակատարողական հիմնարկում՝ հեռախոսախցեր, հացադուլի, կարանտինային սենյակներ, պատժախցեր, երկարատև և կարճատև տեսակցությունների սենյակներ, հանձնուքների ստացման սենյակ, բանտային խանութ:

Փաստաթղթերի վերլուծություն: Փաստաթղթերի վերրլուծությունը ներառել է յուրաքանչյուր հաստատության օրվա ռեժիմը, սննդի համար նախատեսված ճաշացանկը, իրավունքների և պարտականությունների մասին իրազեկող թերթիկը:

Օրենսդրության վերլուծություն: Օրենսդրության վերլուծությունը ներառել է տվյալ հաստատության գործունեության ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորող ՀՀ իրավական ակտերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած և տվյալ ոլորտին առնչվող միջազգային համաձայնագրերը, պայմանագրերը, կոնվենցիաները:

Տեղեկատվություն ստանալու գրավոր հարցումներ: Պաշտոնական գրության միջոցով կազմակերպությունը ՀՀ կառավարությունից տեղեկություն է ստացել պետական բյուջեից գիշերօթիկ հաստատությանը հատկացված ֆինանսական միջոցների չափի վերաբերյալ:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի իրականացմանն աջակցության համար կազմակերպությունն իր առանձնահատուկ շնորհակալությունն է հայտնում քրեակատարողական հիմնարկի, գիշերօթիկ հաստատության տնօրինությանը և աշխատակիցներին՝ դրսևորած պատրաստակամության և ցուցաբերած օժանդակության համար:

Ներկայացվող զեկույցում օգտագործված հիմնական հասկացություններ

քրեակատարողական հիմնարկ ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արաք թույլ տված անձանց պահելու համար նախատեսված վայր

խուց քրեակատարողական հիմնարկում չորս անձի ապրելու համար նախատեսված սենյակ

պատժախուց պատժախցում առանձնացվում են այն ազատազրկվածները, ովքեր թույլ են տվել քրեակատարողական հիմնարկի ներքին կարգ ու կանոնով նախատեսված արգելված արարք:

կարանտինային բաժանմունք /սենյակ/ քրեակատարողական հիմնարկ ընդունվող անձին հատկացվող սենյակ մինչև խուց տեղափոխելը

հացադուլի սենյակ քրեակատարողական հիմնարկներում առանձնացված հացադուլի սենյակները նախատեսված են այն ազատազրկվածներին պահելու համար, ովքեր ինչ-որ բողոք ունեն և որպես բողոքի դրսևորման միջոց հրաժարվում են սնունդ ընդունել:

տնտեսմասի աշխատող ազատազրկված անձինք, որոնք միաժամանակ աշխատում են քրեակատարողական հիմնարկում

տեսակցությունների սենյակ քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածների և հարազատների հանդիպման համար առանձնացված սենյակ

հանձնուքի սենյակ սենյակ, որտեղ իրականացվում է դրսից ազատազրկվածների համար բերվող իրերի հանձնումը և ընդունումը

սոցիալական պաշտպանություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջմունքները բավարարելու, հասարակության մեջ ինտեգրվելու, ինչպես նաև կյանքի դժվարին վիճակը կանխարգելելու նպատակով ընտանիքին տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն

սոցիալական աջակցության խորհուրդ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ սոցիալական ծառայություններ տրամադրող մարմիններին կից հասարակական հիմունքներով գործող մարմին է, որի կազմում ընդգրկվում են տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման ներկայացուցիչը, զբաղվածության տարածքային մարմնի ներկայացուցիչը և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները:

ՄԱՍ 1

Գլուխ 1

Մարդու իրավունքների վիճակը «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում

Ընդհանուր տեղեկություններ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը /այսուհետ՝ նաև ՔԿՀ/ 2007 թ. սկզբին տեղափոխվել է նոր կառուցված շենք, որը լիովին համապատասխանում է Եվրոխորհրդի կողմից նման հաստատությունների համար ներկայացվող պահանջներին: Հիմնարկում առկա են կալանավորված և ազատազրկման դատապարտված անձանց պահելու համար միջազգային չափորոշիչներով նախատեսված բոլոր պայմանները:

Շենքը 4 հարկանի է, 1-ին հարկում տեղակայված են 6 կարանտինային սենյակները, 4 պատժախցերը /պատժախցերը նախատեսված են 1 հոգու համար/ և 2 հացադուլի սենյակները:

Հիմնարկի 2-րդ հարկում տեղակայված է նաև բուժմասը, որտեղ կան 3 խցեր՝ յուրաքանչյուրը նախատեսված 2 անձի համար:

Տարվա ընթացքում 2 անգամ իրականացվում է ազատազրկվածների ընդհանուր բուժզննություն՝ կենտրոնացված համակարգով:

Քրեակատարողական հիմնարկի 3-րդ և 4-րդ հարկերում տեղակայված են 21-ական խցեր:

Բոլոր խցերը նախատեսված են 4 անձի համար, յուրաքանչյուր խցի մակերեսը 16 քմ է, լուսամուտի մակերեսը՝ մոտավորապես 0.5մ*1.5 մ:

Յուրաքանչյուր հարկում աշխատում են նվազագույնը 2 հսկիչներ և 1 պատասխանատու սպա:

Յուրաքանչուր հարկի միջանցքն առանձնացված է միջնապատով /լոկալ գոտիով/, յուրաքանչյուր հաստատվածը վերահսկվում է 1 հսկիչի կողմից:

Լոգարանները տեղակայված են 2-րդ, 3-րդ, 4-րդ հարկերում, յուրաքանչյուր հարկում՝ 3 լոգարան:

Քրեակատարողական հիմնարկի յուրաքանչյուր հարկում կան 2 քարտաֆոնային հեռախոսներ: Գործում է վստահության հեռախոսահամար, որով ազատազրկվածները կարող են իրենց անանուն բողոքները հայտնել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է 220 ազատազրկվածի համար՝ ներառյալ կարանտինային սենյակները, պատժախցերը, հիվանդասենյակները և հացադուլի սենյակները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչների այցելության պահին «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրում էին 211 ազատազրկվածներ:

8 ազատազրկվածներ աշխատում են տնտեսական մասում, որոնցից 6-ը տեխնիկատնտեսական սպասարկման մասում կատարում են մաքրման աշխատանքներ, օգնում են խոհանոցում:

Գլուխ 2

Առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ

Խցեր, հիվանդասենյակներ, պատժախցեր, հացադուլի և կարանտինային սենյակներ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի խցերը, հիվանդասենյակները և կարանտինային սենյակներն ունեն նույն կահավորանքն ու վերանորոգումը, բացառություն են կազմում պատժախցերը և հացադուլի սենյակները /պատժախցի և հացադուլի սենյակների մասին ավելի մանրամասն տե՛ս էջ 15/: Տարբերվում են այն խցերը, որտեղ ազատազրկվածներն իրենց միջոցներով վերանորոգման աշխատանքներ են իրականացրել և կահավորել: Նշված դեպքերում ևս պահպանվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափորոշիչները[1]:

[1] «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված փետրվարի 6-ին, 2002 թ., ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ընդունված դեկտեմբերի 24-ին, 2004 թ., ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին Կառավարության N 153-Ն որոշում, ընդունված օգոստոսի 3-ին, 2006 թ.:

Բոլոր սենյակներն ունեն նույն 16 քմ մակերեսը՝ ներառյալ զուգարանի համար առանձնացված տարածքը: Սենյակների հատակը փայտե է, ներկված, պատերը՝ բաց մոխրագույն ներկի և սպիտակ կավճի համադրությամբ: Պատերի երկարությամբ տեղավորված են երկհարկանի փայտե մահճակալներ /բացառությամբ պատժախցի և հացադուլի սենյակի. հացադուլի սենյակում մեկհարկանի մեկ տեղանոց մահճակալներ են, իսկ պատժախցում՝ երկաթե մահճակալ, որը ամրացված է պատին և բացվում է միայն երեկոյան ժամերին/: Մահճակալներն անշարժացված են՝ երկաթե ոտքերով զոդված հատակին:

Անկողնային պարագաները՝ ներքնակը, ծածկոցը, տրամադրում է հիմնարկը, սպիտակեղենը ևս, սակայն ազատազրկվածի ցանկությամբ հիմնարկը թույլատրում է օգտագործել հարազատների կողմից բերվածը:

Մահճակալին զուգահեռ տեղադրված է փայտե սեղան, որի 2 կողմից երկարությամբ երկաթով զոդված են 2 փայտե նստարաններ: Սեղանն իրեն ամրացված նստարանների հետ հնարավոր է տեղաշարժել դեպի սենյակի ցանկացած մաս: Սեղանի շուրջ միաժամանակ կարող են տեղավորվել չորս մարդ:

Բոլոր սենյակների, այդ թվում նաև աշխատողների սենյակների լուսամուտները ճաղավանդակներով են: Վերջինս հաստ երկաթներով մոտ 2 սմ հաստությամբ 10 սմ լայնությամբ և 15 սմ երկարությամբ վանդակների ցանց է:

Լուսավորությունը ցերեկային ժամերին ապահովվում է լուսամուտի միջոցով: Պատուհանը տարածվում է ամբողջ սենյակի լայնությամբ մոտ 3*1.20 քմ մակերեսով, բաղկացած է 2 մեծ հատվածից, որոնց մեջտեղի մասը մոտ կես մետր լայնությամբ բացվում է ներսից, մյուս հատվածներն անշարժացված են: Երեկոյան լուսավորությունը բավարար է, անվտանգության համար սենյակն ունի նաև գիշերային լուսավորություն: Այն տեղադրված է դռան վերևում, ունի մոտ 60 Վտ հզորություն, բացի այդ փակված է խիտ սպիտակ, պլաստմասե ճաղավանդակով: Սա նախատեսված է սենյակի ներսում գտնվողին քնի ժամանակ չխանգարելու համար:

Գիշերային լուսավորությունը հնարավոր է միացնել միայն դրսից՝ միջանցքից:

Ընդհանուր օդափոխումն իրականացվում է լուսամուտի բացվող հատվածի միջոցով: Ջեռուցումը իրականացվում է կենտրոնացված համակարգով: Լուսամուտի ներքևում տեղադրված է 1 մարտկոց՝ 7 բաժանումներով:

Նշված սենյակների դռները երկաթյա են, փակվում են դրսից, որի դռան վերևի հատվածը ամրացվում է /փակվում է/ երկաթե շղթայով, իսկ մեջտեղի հատվածում փակվում բանալիով, որի կողպեքը միջին մեծության է:

Դռան մեջտեղում մոտ 5 սմ տրամագծով շրջանակ է բացված, որը հնարավոր է փակել նույն տրամագծով երկաթե փականի միջոցով: Այս անցքը ևս հնարավոր է բացել և փակել միայն դրսից: Նախատեսված է, առանց ընդհանուր դուռը բացելու, հսկիչի կողմից հսկողության համար:

Դռան ներքևի հատվածում կա նաև

մոտ 15 սմ տրամագծով կամարաձև բացվածք, որը նախատեսված է ներսում գտնվողին սնունդ տրամադրելու համար: Օրվա մյուս ժամերին այն փակ է:

Զուգարանը զբաղեցնում է 2.5-3 մ երկարությամբ և 2 մ լայնությամբ առանձին փոքր տարածք: Այստեղ և՛ պատերը, և՛ հատակը կաֆելապատ են, եվրոպական ոճի զուգարանակոնքով, լվացարանով:

Սառը ջուրը մշտական է, բացառությամբ այն դեպքերի, երբ վթարվում է ընդհանուր համակարգը:

Անհատական հիգիենայի պարագաների մի մասը տեղավորված են զուգարանում, մյուս մասն առանձին պոլիէթիլենային տոպրակներով՝ պահվում են պահարանում:

Սենյակների պատերին փակցված են օրվա կարգացուցակը ու արգելված իրերի ցանկը:

Խուցը կահավորված է ընդհանուր օգտագործման միջին մեծության պահարանով: Պահարանը ներսում բաժանված է առանձին մասերի՝ խցի անդամների թվին համապատասխան:

Հացադուլի սենյակում պահարաններ չկան, մահճակալները մեկհարկանի, մեկտեղանոց են, հացադուլի սենյակում միաժամանակ կարող են պահվել 2 անձինք:

Պատժախցում մահճակալը երկաթե է, երկաթե վանդակացանց մակերեսով, որի վրա էլ դրվում է 1 ներքնակ: Մահճակալը մի ծայրով ամրացված է պատին, իսկ հանդիպակաց ծայրը բարձրացվում և միանում է պատին ամրացված հատվածին՝ փակվում է: Փակված մահճակալի բանալին պահվում է հսկիչի մոտ և վերջինիս կողմից էլ բացվում է միայն երեկոյան: Մահճակալը ցերեկային ժամերին ոչ նստելու, ոչ պառկելու համար չի թույլատրվում օգտագործել: Մահճակալի պատին ամրացված հատվածին կից հատակին ամրացված են երկու երկաթե աթոռակներ՝ մոտ 20 սմ տրամագծով:

Մտահոգիչ է այն, որ

- *ազատազրկվածները խցերում սնունդը և անձնական հիգիենայի պարագաներն առանձին պահելու հնարավորություն չունեն և դրանք պահում են նույն պահարանում /տե՛ս հավելված 1,153-Ն որոշում, հոդված 46, 65/*

- *պատժախցերը կահավորված չեն՝ չկա ո՛չ պահարան, ո՛չ սեղան, և պատժախցում գտնվող ազատազրկվածը ստիպված է իրեն տրվող սնունդը, ներառյալ հացը, թողնել հատակին: Բացի այդ, մահճակալը, աթոռն ու սեղանը անհարմար են օգտագործման համար*
- *խցերում հսկիչին կանչելու համար նախատեսված կանչի կոճակ չկա*
- *խցերում ազատազրկվածների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկ փակցված չէ:*

Առաջարկություն

- *խցերում տեղադրել 2 տեսակի պահարաններ՝ սննդի և անհատական հիգիենայի պարագաների պահման համար*
- *պատժախցերը կահավորել պահարանով, ընդհանուր տիպի մահճակալով, աթոռով և սեղանով*
- *ազատազրկվածներին պահելու համար նախատեսված սենյակներում տեղադրել հսկիչների կանչի կոճակ*
- *ազատարկվածներին պահելու համար նախատեսված սենյակներում փակցնել իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկ:*

Սնունդ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը մյուս քրեակատարողական հիմնարկների նման սնունդը ստանում է կենտրոնացված համակարգով:

Մշակված ռեժիմի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածները սնվում են օրական երեք անգամ՝ նախաճաշ, ճաշ և ընթրիք: Ազատազրկվածները նշում են, որ նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար սահմանված ժամերը չեն խախտվում:

Շաբաթվա ճաշացանկը մշակվում և նախապես փակցվում է խոհանոցում: Ճաշացանկը համապատասխան տեսականիով ճաշարանի վարիչի ներկայացմամբ հաստատում է ՔԿՀ-ի պետը: Խոհանոցի և սննդի սանիտարական վերահսկողությունն իրականացվում է ճաշարանի վարիչի կողմից: Պատրաստվող սննդի չափաբաժինները ստա-

նում և կշռում են ճաշարանի պետը և օրվա հերթափոխի պետը:

Ազատազրկվածների մի մասը նշում է, որ օգտվում է դրսից բերվող սննդից: Նրանք նշել են, որ քրեակատարողական հիմնարկի սննդից չեն օգտվում, քանի որ պատրաստվում է սոխով: Մի մասն էլ նշում է, որ յուղի որակը լավը չէ և ճաշերից երբեմն տհաճ հոտ է գալիս: Ազատազրկվածների մյուս մասը նշում է, որ քրեակատարողական հիմնարկում տրվող սննդից գոհ է. ճաշը միշտ մատուցվում է տաք վիճակում, համեղ է և պահպանված են սանիտարահիգիենիկ կանոնները:

Քրեակատարողական հիմնարկում գտնվող բոլոր ազատազրկվածներն օգտվում են հիմնարկում տրվող հացից: Հացի որակից բոլոր ազատազրկվածները գոհ են: Այն թխվում է «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի միջոցներով կառուցված քրեակատարողական հիմնարկին կից գործող փռում:

Անհրաժեշտության դեպքում, բժշկի թույլտվությամբ, քրեակատարողական հիմնարկում տրվում է դիետիկ սնունդ՝ ձու և կարագ: Այցելության պահին քրեակատարողական հիմնարկում 23 ազատազրկվածների համար պատրաստվում էր դիետիկ սնունդ:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի մեկ շաբաթվա սննդացանկը, ինչպես նաև ազատազրկված անձինք վկայում են, որ կենտրոնացված համակարգով ստացվող սննդի հիմնական մասը կազմում են ձավարեղենը /բրինձ, ոսպ, հնդկաձավար/, մակարոնեղենը, կաղամբը և կարտոֆիլը: Քրեակատարողական հիմնարկը ստանում է պահածոյացված միս, որով էլ հիմնականում կաղամբապուր է պատրաստվում: Ազատազրկվածներին հասանելիք շաքարավազը տրվում է թեյի մեջ լուծված: Ազատազրկվածների խոսքերով՝ հյութ տրվում է ամեն օր, ձու՝ միայն Սուրբ Զատիկի կապակցությամբ: Երբեմն տրվում է ձուկ, պանիր: Միրգ ընդհանրապես չի տրվում:

Քրեակատարողական հիմնարկի խոհանոցում աշխատում են 4 ազատազրկվածներ՝ 1 գլխավոր խոհարար, 1 խոհարարի օգնական և 2 աշխատակից ազատազրկվածներին ճաշ բաժանելու համար: Ազատազրկվածներին ճաշերը բաժանվում են դույլերով: Գլխավոր խոհարարն ունի համապատասխան մասնագիտություն և մեկ տարի իր մասնագիտությամբ աշխատել է Գերմանիայում:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկն ունի բոլոր տեսակի սննդի պահման համապատասխան հնարավորություններ՝ մեծ և փոքր պահեստներ, սառնարան: ՔԿՀ-ն ունի 4 պահեստ, որոնք տեղակայված են ազատազրկվածների պահման շենքից և վարչական շենքից դուրս: Պահեստներից մեկը նախատեսված է ձավարեղենի, մակարոնեղենի, յուղի համար, երկուսը՝ կարտոֆիլի, կաղամբի, սոխի և այլ նման մթերքների համար: Այս պահեստներից մեկում կա նաև ձմռանը թթու պահելու համար հատուկ տարա: Օրվա վերջում պահեստները զմրսվում են:

Ընդանուր մաքրությունը նորմալ է:

«Վանաձոր» ՔԿՀ-ի խոհանոցի համար նախատեսված տարածքը զբաղեցնում է հիմնարկի առաջին հարկը: Ընդհանուր խոհանոցի հատվածը ունի 9 սենյակ՝ մթերքների պահման սենյակ, ճաշարան, ամանների լվացման սենյակ, ճաշ պատրաստելու սենյակ, խոհանոցի աշխատողների հանդերձարան, ճաշարանի վարիչի աշխատասենյակ և այլն: Բացի այդ, խոհանոցի հատվածում կա առանձնացված զուգարան, բաղնիք:

Խոհանոցում կա էլեկտրական մեծ սալիկ՝ 1.5 մ*1.5 մ չափսերով: Սալիկը մաքուր է, գրեթե նոր: Սալիկի վերևում տեղադրված է օդափոխիչ: Խոհանոցի օդափոխումն իրականացվում է ընդհանուր օդափոխման համակարգով:

Կա ապուրներ եփելու համար մեծ էլեկտրական կաթսա՝ 100լ տարողությամբ:

Խոհանոցում կա մինչև 5 կգ կշռող կշեռք:

Ընդհանուր խոհանոցային սպասքը /կաթսաներ, ճաշերը տեղափոխելու դույլեր, շերեփներ/ պահվում է ճաշերը եփելու սենյակից դուրս՝ առանձին սենյակում:

Խոհանոցում կա մշտական սառը ջուր, տաք ջուրը միացվում է կենտրոնացված հա-

մակարգով, երբ անհրաժեշտ է լինում: Խոհանոցի սառնարանում միայն սննդի փորձանմուշներ են պահվում:

Խոհանոցի ափսեները լվանալու սենյակն ապահովված է սենյակի ողջ երկարությամբ ձգվող լվացարանով, որը բաժանված է 2 մեծ և 6 փոքր լվացարանների:

Մտահոգիչ է այն, որ

- *քրեակատարողական հիմնարկը ՀՀ կառավարության 413-Ն /տես հավելված 2/ որոշմամբ սահմանված սննդի տեսականիով չի ապահովվում /օրինակ քրեակատարողական հիմնարկին կենտրոնացված համակարգով չի հատկացվում թարմ միս, ձուկ, միրգ/*
- *միսը տրվում է ոչ թե չափաբաժնով, այլ ընդհանուր պատրաստված ապուրի մեջ, հետևաբար բոլոր ազատազրկվածները չեն, որ օգտվում են իրենց հասնելիք մսից:*

Առաջարկություն

- *ապահովել քրեակատարողական հիմնարկին տրվող սննդի բազմազանությունն ու կալորիականությունը:*

Սանիտարահիգիենիկ վիճակ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, ըստ ազատազրկվածների, ամիսը մեկ անգամ հատկացվում են անձնական հիգիենայի պարագաներ՝ օճառ, ատամի մածուկ, ատամի խոզանակ, լվացքի փոշի, 2 ածելի: Նախատեսված ժամկետից շուտ անձնական հիգիենայի պարագաները վերջանալու դեպքում դիմում են հիմնարկի ղեկավարությանը և ստանում նորը: Հիգիենայի պարագաներ ստանալիս ազատազրկվածները ստորագրում են համապատասխան մատյանում: Ազատազրկվածները դժգոհում են տրամադրվող սանիտարահիգիենիկ պարագաներից, մասնավորապես՝ օճառի և ատամի խոզանակի որակից, որը նրանց կարծիքով, կոշտ է: Այդ պատճառով էլ ազատազրկվածների մի մասը նշում է, որ չի օգտվում հիմնարկի կողմից հատկացված անձնական հիգիենայի պարագաներից և դրանք ստանում է դրսից:

Ըստ ազատազրկվածների՝ ամաններ լվանալու հեղուկ չի տրամադրվում, բայց անհրաժեշտ է, այդ պատճառով էլ ստանում են դրսից:

Քրեակատարողական հիմնարկում խցերը մաքրում են ազատազրկվածները՝ սահմանված հերթապահության համաձայն: Քրեակատարողական հիմնարկում 6 ազատազրկվածներ աշխատում են տեխնիկատնտեսական սպասարկման մասում, կատարում են մաքրման աշխատանքներ, օգնում են խոհանոցում:

Հիմնարկի կողմից ազատազրկվածներին հատկացվում են անկողնային պարագաներ և սպիտակեղեն: Անկողնային սպիտակեղենն, ըստ ազատազրկվածների, նորացվում է 3 ամիսը մեկ անգամ, սակայն ազատազրկվածների մեծ մասն անկողնային սպիտակեղենը ստանում է դրսից:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկն ունի լվացքատուն, որն ապահովված է 5 կգ-անոց LG մակնիշի 4 լվացքի մեքենայով: Լվացված շորերը պոլիէթիլենային պարկերով տեղափոխվում և չորացվում են սպորտդահլիճին կից մեծ սենյակում: Նույն կարգով էլ ազատազրկվածների կեղտոտ շորերը տեղափոխում են լվացքի սենյակ, քանի որ լվացքի սենյակում դրանք պահելու հնարավորություն չկա: Չնայած քրեակատարողական հիմնարկում լվացքի համար ունեցած առկա հնարավորություններին, ազատազրկվածներն իրենց հագուստը և սպիտակեղենը լվացքատուն չեն տալիս: Նրանց խոսքերով՝ անկողնային սպիտակեղենը խառնվում է, լվացվում ընդհանուր, և հետո իրենց օգտագործած սպիատակեղենն իրենց չի վերադարձվում: Այդ պատճառով

էլ ազատազրկվածների մեծ մասն ինքն է լվանում իր հագուստն ու սպիտակեղենը կամ ուղարկում է տուն:

Քրեակատարողական հիմնարկում 2-րդ, 3-րդ, 4-րդ հարկերից յուրաքանչյուրում կան 3-ական բաղնիքներ:

Բաղնիքի ընդհանուր տարածքը բաղկացած է 2 մասից՝ հանդերձասրահ և լոգասենյակ: Լոգասենյակը կահավորանք չունի, միայն կախիչներ են և նստարաններ:

Լոգասենյակը բաղկացած է 2 նույն տիպի լողախցիկներից, որոնց՝ թե՛ հատակը, թե՛ պատերի կեսը՝ ներքևից վերև ընկած հատվածը, կաֆելապատ են: Հատակին լողանալու ժամանակ վրան կանգնելու հատուկ փայտե պատվանդան կա: Յուրաքանչյուր լողախցիկում տեղադրված է 1 ցնցուղ: Ազատազրկվածները լողանում են 10 օրը 1 անգամ, յուրաքանչյուրը 15 րոպեով, սակայն կարող են լողանալ նաև խցերում: Լողանալու համար նախատեսված հատուկ օրերին տաք ջուրը միացվում է ընդհանուր ջեռուցման համակարգով, ամսվա մյուս օրերին քրեակատարողական հիմնարկում տաք ջուր չի լինում: Հայելի չկա ընդհանուր անվտանգությունը ապահովելու պատճառով. ազատազրկվածները կարող են ջարդել հայելին ու միմյանց վնասել:

Քրեակատարողական հիմնարկում մազերը կտրելու համար հիմնարկի աշխատակիցները տրամադրում են համապատասխան գործիքներ:

Մտահոգիչ է այն, որ

1. *քրեակատարողական հիմնարկում հատկացվող անձնական հիգիենայի պարագաների որակը բավականին ցածր է*
2. *ազատազրկվածները չեն օգտվում քրեակատարողական հիմնարկի լվացքատնից:*

Առաջարկություն

1. *քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածներին ապահովել բարձր որակի սանիտարահիգիենիկ պարագաներով՝ օճառ, ատամի խոզանակ*
2. *քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածների սպիտակեղենը և հագուստը չխառնելու և առանձին պահպանելու համար դրանց վրա ունենալ տարբերանշաններ ըստ խցի համարի և ազատազրկվածի անվան:*

Գլուխ 3

Կապն արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում առանձնացված են երկարատև և կարճատև տեսակցությունների սենյակները: Կարճատև տեսակցությունների սենյակը տեղեկայված է շենքի 1-ին հարկում: Այն մոտ 50 քմ մակերեսով սենյակ է:

Կարճատև տեսակցությունների սենյակը նախատեսված է մի քանի ազատազրկվածների միաժամանակյա տեսակցության համար: Սենյակում տեղավորված են 7 փայտե սեղաններ՝ 2 կողմից երկաթով ամրացված փայտե նստարաններով, այնպես որ հանդիպման ժամանակ ազատազրկվածը և նրան տեսակցող անձը կարող են նստել դեմ դիմաց: Սեղանները դասավորված են 2 շարքով՝ մոտ 0.5 մ հեռավորությամբ: Սեղաններն իրարից առանձնացնող միջնապատ չկա: Կարճատև տեսակցությունների ժամանակ միշտ ներկա է լինում հսկիչը, սակայն ըստ ազատազրկվածների՝ իրենց խոսակցությունները չի լսում: Ազատազրկվածները տեղեկացրել են, որ քրեակատարողական հիմնարկում կարճատև տեսակցությունները տևում են 2 ժամ, սակայն ցանկության դեպքում կարող են երկարացվել: Կարճատև տեսակցությունների համար, ըստ ազատազրկվածների, դիմում են ներկայացնում քրեակատարողական հիմնարկի պետի անունով՝ նշելով նաև այն անձի անունը, ում հետ տեսակցելու են: Տեսակցության տանելիս նախապես ստուգում են և՛ ազատազրկվածին, և՛ այցելուին:

Երեխաների այցելության դեպքում տեսակցությունը լինում է մանկական սենյակում:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում կարճատև տեսակցությունների հետ կապված խնդիրներ չկան:

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար /3 օր/ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է 2 սենյակ: Երկարատև տեսակցությունների սենյակները մոտ 20 քմ մակերես ունեցող սենյակներ են: Դրանք կահավորված և վերանորոգված են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին համապատասխան՝ հատակը փայտե է, պատերը սպիտակ կավճի ու մոխրագույն ներկի համադրությամբ: Սենյակները կահավորված են բազկաթոռներով, փոքր սեղանով, երկտեղանոց փայտե մահճակալով, կա նաև հեռուստացույց: Սենյակում կան նաև լուսամուտներ, որոնցից մեկը կախիչներով է՝ նախատեսված հագուստի համար:

Սենյակի ցերեկային լուսավորությունն ապահովում է լուսամուտների միջոցով, երեկոյան լուսավորության համար սենյակն ապահոված է 3 լուսամփոփներով:

Սենյակի ջեռուցումն ապահովվում է կենտրոնացված ջեռուցման համակարգի միջոցով: Նույն սենյակում առանձնացված է խոհանոցի հատվածը՝ համապատասխան կահավորանքով: Երկարատև տեսակցությունների սենյակում փչացող մթերքները տեղում պահելու, տեղում ճաշեր պատրաստելու և տաքացնելու հնարավորություն չկա: Ճաշերի տաքացման և դրանց պահպանման համար օգտագործվում է քրեակատարողական հիմնարկի ընդհանուր սառնարանն ու էլեկտրական սալիկը:

Երկարատև տեսակցությունների ժամանակ հիմնարկի կողմից տրվում են անհրաժեշտ հիգիենիկ պարագաներն ու մաքրող միջոցները, սակայն երկարատև տեսակցությունների ժամանակ լողանալու հնարավորություն չկա:

Երեխաների համար երկարատև տեսակցությունների ժամանակ նախատեսված է մեկ այլ սենյակ: Այն կահավորված է երեխաներին հարմարեցված տարբերակով: Այստեղ կա մեկ բազմոց երկու բազկաթոռներով, հատակին գորգ է փռված, տեղադրված է փոքր սեղան, երկու փոքր աթոռներ: Սենյակը նորոգված է մյուս սենյակների նման, պատից նաև մանկական նկար է կախված:

Մտահոգիչ է այն, որ

- *երկարատև տեսակցությունների ժամանակ տեղում փչացող մթերքներ պահելու, ճաշեր պատրաստելու և տաքացնելու հնարավորություն չկա: Չկա նաև լոգասենյակ:*

Առաջարկություն

- *քրեակատարողական հիմնարկի երկարատև տեսակցությունների սենյակներն ապահովել սառնարանով, էլեկտրական սալիկով, լոգասենյակով:*

Հեռախոսակապ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, ըստ ազատազրկվածների, սահմանված գրաֆիկին համապատասխան /երկու օրը մեկ անգամ/ անարգել կարողանում են օգտվել հեռախոսից: Ցանկության դեպքում կարող են օգտվել նաև սահմանված գրաֆիկից դուրս: Հեռախոսից թույլատրվում է խոսել անսահմանափակ ժամանակով՝ կախված տաքսաֆոնային քարտի տևողությունից: Հեռախոսները տեղադրված են միջանցքներում: Հեռախոսային քարտերն ազատազրկվածները ձեռք են բերում իրենց միջոցներով, հարազատներն ուղարկում են նաև դրսից: Հեռախոսային խոսակցությունների ժամանակ պարտադիր ներկա է լինում հսկիչը, որը հեռու է կանգնում: Ըստ ազատազրկվածների՝ հեռախոսների տեղադրման դիրքը հարմար չէ, և խոսակցությունների գաղտնիության ապահովման խնդիր է առաջանում: Յուրաքանչյուր հարկում գործում է երկու հեռախոս, որոնք ուղղակի ամրացված են ընդհանուր միջանցքի պատից. հեռախոսախցիկներ չկան:

Գործում է վստահության հեռախոսահամար, որով ազատազրկվածները կարող են իրենց անանուն բողոքները հայտնել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին, սակայն ազատազրկվածները նշում են, որ այդքան էլ չեն վստահում այդ հեռախոսահամարին և գրեթե չեն օգտվում: Ըստ ազատազրկվածների՝ վստահության հեռախոսահամարը կարող է գործել, եթե տվյալ մարմինն անկախ լինի:

Առաջարկություն

- *«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում հեռախոսակցությունների գաղտնիության ապահովման համար տեղադրել համապատասխան հեռախոսախցիկներ:*

Նամակագրություն

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, ըստ ազատազրկվածների, նամակագրության հետ կապված խնդիրներ չկան: Անձնական նամակներ ուղարկելու համար ազատազրկվածները ծրարը ձեռք են բերում իրենց միջոցներով, որի համար վճարում են յոթանասուն դրամ: Պետական մարմիններին ուղղված նամակների ուղարկման ծախսերը հոգում է ՔԿՀ-ն: Պետական մարմիններին ուղղված նամակները հանձնում են բաց վիճակով, ըստ քրեակատարողական հիմնարկի պետի, աշխատակիցների կողմից ուղղագրական որոշակի շտկումներ մտցնելու նպատակով: Անձնական նամակները ստանում և ուղարկում են փակ ծրարով:

Հանձնուքներ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածների հանձնուքների ընդունումն իրականացվում է առանձնացված սենյակում: Այն գտնվում է հիմնարկի առաջին հարկում՝ հիմնարկի ընդհանուր մուտքի մոտ: Հանձնուքների սենյակի պատերը բաց մոխրագույն ներկի և սպիտակ կավճի համադրությամբ են: Սենյակի պատին փակցված է արգելված իրերի ցանկը, իրերի հանձնման ժամն ու կարգը: Սենյակում կան սեղան, աթոռներ, կշեռք: Հանձնուքները ստացվում են լուսամուտից, այնուհետև ստուգվում են հատուկ սարքի միջոցով, տեղում կազմվում է իրերի ցանկ, հանձնուքը տեղափոխվում համապատասխան խուց, որտեղ ազատազրկվածը ստորագրում է իրեն հանձնված իրերի ցանկի տակ: Ըստ ազատազրկվածների՝ հանձնուքներն իրենց են փոխանցվում նույն օրը՝ տասնհինգ րոպեի ընթացքում:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածները հանձնուքների հետ կապված խնդիրներ չեն նշում:

Գլուխ 4

Բուժսպասարկում

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում բուժմասը գտնվում է շենքի երկրորդ հարկում՝ առանձնացված բաժանմունքում: Այստեղ են գտնվում 3 հիվանդասենյակները, աշխատակիցների 1 աշխատասենյակը, ատամնաբուժական սենյակը, որտեղ առանձնացված է լվացարանի հատվածը և ատամնաբուժական սենյակի միջով անցնող պրոցեդուրային սենյակը:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի բուժմասն ունի 4 աշխատող, 2 օրդինար: Գլխավոր բժիշկը մասնագիտությամբ վիրաբույժ է: Մյուս աշխատողները 3-րդ կարգի մասնագետներ են: Հերթապահ բուժակն աշխատում է 24 ժամ, բժիշկը, 3-րդ կարգի մասնագետները՝ 8 ժամ:

Սահմանված է նաև գիշերային հերթապահություն:

Տարին 2 անգամ կենտրոնացված կարգով իրականացվում է ընդհանուր արյան, թոքերի զննություն: Զննության արդյունքների մասին ազատազրկվածներին տեղեկացնում են բանավոր:

Բացի այդ, քրեակատարողական հիմնարկ ընդունելիս իրականացվում է պարտադիր բուժզննում, որի արդյունքների հիման վրա կազմվում է ազատազրկվածի ընդհանուր առողջության պատմությունը:

Ըստ ազատազրկվածների՝ եթե բժիշկն այլ հիվանդի զննելիս չի լինում, հսկիչի միջոցով կանչի դեպքում օգնության է հասնում 5-10 րոպեում: Առաջին բուժօգնության համար ազատազրկվածներին հիմնականում նույն ցավազրկող դեղերն են տալիս: Տեղում ախտորոշելու և մասնագիտացված բուժօգնություն ցուցաբերելու հնարավորություն չկա:

Քրեակատարողական հիմնարկը դեղերը ստանում է կենտրոնացված համակարգով, անհրաժեշտ դեղամիջոցների ցանկը ներկայացվում է քրեակատարողական վարչությանը, և անհրաժեշտ դեղամիջոցները ստացվում է հաջորդ ամսվա ընթացքում, ուստի լինում են դեպքեր, երբ առողջության հետ խնդիր ունեցող ազատազրկվածին անհրաժեշտ դեղորայքը տրամադրվում է ավելի ուշ: Դեղերի պիտանելիության ժամկետների ստուգումն ու ընդունումն իրականացվում է բժշկի կողմից: Ազատազրկվածներին դեղորայքը տրամադրվում է բժշկի ցուցումով բուժակների կողմից: Ըստ ազատազրկվածների՝ հիմնարկի կողմից տրվող դեղերի որակը և արդյունավետությունը բավականին

ցածր է, չկան նեղ մասնագետներ:

Ատամնաբուժական ծառայություններն իրականացվում են տեղում, բացի ռենտգեն նկարահանումից: Ելնելով ակնաբուժական հիվանդության բնույթից անհրաժեշտ բուժումն իրականացվում է կա՛մ տեղում, կա՛մ մասնագիտացված հիվանդանոցում:

Վիրահատության, հիվանդության մասնագիտական ախտորոշման, թերապևտիկ բուժում իրականացնելու նպատակով ազատազրկվածներին տեղափոխում են դատապարտյալների կենտրոնական հիվանդանոցներ, որտեղ բուժսպասարկումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում:

Վարակիչ հիվանդներն առանձնացվում են հատուկ սենյակներում /6 խուց/, որտեղ նրանք պահվում են ազատազրկման ամբողջ ժամանակահատվածում:

Սարքավորումներ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկն ունի հետևյալ սարքավորումների կարիքը.

- պինցետներ, ժգուտներ, ասեղներ, էլաստիկ թելեր, ատամնաբուժական աքցաններ, ռենտգեն ապարատ: Սարքավորումներն ունենալու համար դիմել են վարչությանը և դեռևս սպասում են:

Պրոցեդուրային սենյակ

Պրոցեդուրային սենյակում զննում են առողջության հետ խնդիրներ ունեցող անձանց, վիրակապեր դնում, կաթիլային ներարկումներ իրականացնում:

Պրոցեդուրային սենյակն ունի ճնշման չափման ապարատ, ջերմաչափ, վնասվածքները կարելու համար նախատեսված պարագաներ, ինչպես նաև առաջին բուժօգնության համար անհրաժեշտ պարագաներ՝ սպիրտ, բամբակ, յոդ և այլն: Առողջության հետ խնդիրներ ունեցող ազատազրկվածների մասնագիտական զննության համար անհրաժեշտ գործիքներ, տեխնիկական միջոցներ չկան:

Ատամնաբուժական սենյակ

Ատամնաբուժական սենյակը համալրված է ազատազրկվածների ատամները հեռացնելու, պլոմբելու համար անհրաժեշտ գործիքներով և տեխնիկական միջոցներով՝ ատամնաբուժական բազկաթոռ, աքցաններ, պլոմբանյութեր: Սակայն հիմնարկը չունի ռենտգեն ապարատ և անհրաժեշտության դեպքում ազատազրկվածներին տեղափոխում է քաղաքային հիվանդանոց: Բացի այդ, չկա նաև բոլոր տեսակի ատամները հեռացելու համար նախատեսված աքցաններ:

Ատամնաբուժական սենյակում միջնապատով առանձնացված է լվացարանի հատվածը, որտեղ բժիշկը կարող է լվացվել, թեև օգտագործվում է միանգամյա օգտագործման ռետինե ձեռնոցներ:

Հիվանդասենյակ

Քրեակատարողական հիմնարկի հիվանդասենյակներ տեղափոխում են այն ազատազրկվածներին, որոնց առողջության պահպանության համար շարունակական մասնագիտական բուժօգնություն է անհրաժեշտ, ինչպես նաև այն հիվանդներին, որոնք վիրուսային հիվանդությունների պատճառով կարող են վարակել նաև իրենց խցակիցներին: Ընդհանուր առմամբ հիվանդասենյակն ազատազրկվածների համար նախատեսված նույն խուցն է, նախատեսված է 2 անձի համար:

Մտահոգիչ է այն, որ

- *«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում մասնագիտացված բուժօգնություն տրամադրելու հնարավորություն չկա*
- *«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում տրվող դեղերի որակը և արդյունավետությունը ցածր է*

- *«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը չունի պինցետներ, ժգուտներ, ասեղներ, էլաստիկ թելեր, ատամնաբուժական աքցաններ, ռենտգեն ապարատ:*

Առաջարկություն

- *«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկն ապահովել տեղում մասնագիտացված բուժօգնություն տրամադրելու հնարավորությամբ*
- *քրեակատարողական հիմնարկն ապահովել բարձր արդյունավետությամբ դեղորայքով*
- *«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկին ապահովել պինցետներով, ժգուտներով, ասեղներով, էլաստիկ թելերով, ատամնաբուժական աքցաններով, ռենտգեն ապարատով:*

Գլուխ 5

Հանգստի և ազատ ժամանցի կազմակերպում

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածների հանգիստն ու ազատ ժամանցը կազմակերպվում է զբոսանքի, սպորտդահլիճում մարզումների, ընթերցանության, ինչպես նաև հյուսնությամբ զբաղվելու միջոցով:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկն ունի վերանորոգված ու ընդարձակ սպորտդահլիճ: Սպորտդահլիճի ընդհանուր տարածքում ցանցապատով առանձնացված են ֆուտբոլի, բասկետբոլի խաղադաշտերը և մարզվելու սրահը:

Ըստ քրեակատարողական հիմնարկի պետի՝ ստեղծվել են որոշակի պայմաններ, որով ազատազրկվածները կարողանում են զբաղվել իրենց նախընտրած զբաղմունքով, օրինակ՝ նկարել, քանդակել, հացից զանազան առարկաներ պատրաստել: Ազատազրկվածների խոսքերով՝ իրենց զբաղվածության կազմակերպումը ընդհանուր սկզբունքով չի ընթանում և համակարգված բնույթ չի կրում: Մասնավորապես՝ սպորտդահլիճից ոչ բոլոր ազատազրկվածներն են օգտվում, և ընտրության չափանիշները հստակ չեն: Մի մասի համար սպորտդահլիճից օգտվելը կարող է կիրառվել որպես խրախուսանքի միջոց, մյուս մասի համար՝ ոչ: Ըստ քրեակատարողական հիմնարկի պետի՝ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը փակ տիպի խստացված ռեժիմով հիմնարկ է և այստեղ ազատազրկվածներին ընդհանրապես սպորտդահլիճ հաճախել չի թույլատրվում: Հիմնարկի պետը խնդրանքով դիմել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությանը ազատազրկվածների համար սպորտդահլիճից օգտվելու թույլտվություն ստանալու համար: Ըստ ՔԿՀ-ի պետի՝ սա է պատճառը, որ ոչ բոլոր ազատազրկվածներն են օգտվում սպորտդահլիճից:

Սպորտդահլիճ

«Վանաձորի» քրեակատարողական հիմնարկն ունի վերանորոգված ու ընդարձակ սպորտդահլիճ: Սպորտդահլիճի ամբողջ երկարությամբ տեղավորված են պատուհաններ, որոնք փակված են ճաղավանդակներով: Սպորտդահլիճի ընդհանուր տարածքում ցանցապատով առանձնացված են ֆուտբոլի, բասկետբոլի խաղադաշտերը, մարզվելու սրահը: Ֆուտբոլի և բասկետբոլի համար առանձնացված տարածքը կազմում է մոտ 18 մ երկարությամբ և մոտ 15 մ լայնությամբ տարածք: Նույն տարածքում տեղադրված

են նաև թենիսի երկու սեղաններ: «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկն ունի ֆուտբոլի թիմ, որը ձևավորվել է ազատազրկվածներից՝ հաշվի առնելով վերջիններիս ցանկությունները և ֆուտբոլ խաղալու նրանց կարողությունը:

Սպորտդահլիճի մարզվելու համար նախատեսված տարածքում տեղադրված են թվով 8 մարզասարքեր, որոնք նախատեսված են 12 տեսակի մարմնամարզական վարժությունների համար: Մարզասարքերը նոր են: Սպորտդահլիճին կից կա հանդերձարան, որը սակայն իր նպատակային նշանակությամբ չի օգտագործվում: Նույն տարածքում կա նաև զուգարան և բաղնիք՝ 5 ցնցուղով: Բաղնիքը ևս չի օգտագործվում: Ըստ ազատազրկվածների՝ մարզվելուց հետո բաղնիքում լողանալու հնարավորություն չի լինում, քանի որ ջուրը սառն է լինում:

Զբոսանք

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկն ունի 8 զբոսահրապարակ, որոնք տեղավորված են հիմնարկի երկրորդ հարկում: Զբոսահրապարակը սենյակ է, որը առաստաղի փոխարեն ծածկված է 20*20 քմ մակերեսով վանդակացանցով: Զբոսահրապարակներից 3-ը դասավորված են միջանցքի մի հատվածում, 5-ը՝ մյուս հատվածում՝ իրար դիմաց: Զբոսահրապարակները ունեն նույն ձևը, կահավորանքը, տարբերվում են միայն մակերեսով: Դրանցից 2-ը մեծ են՝ 5*3.5 քմ մակերեսով, մյուսները միջին չափի են՝ 4*3 քմ մակերեսով: Զբոսահրապարակների բարձրությունը 4 մ է, հատակը բետոն է, պատերը՝ սավաղած: Զբոսահրապարակները զբոսանքի ժամանակ հսկիչի կողմից փակվում են դրսից: Զբոսահրապարակում տեղադրված է 1 նստարան՝ երկաթի վրա ամրացված փայտե նստատեղով՝ առանց ծածկի: Զբոսահրապարակում միաժամանակ զբոսնում են նույն խցի ազատազրկվածները՝ մոտ 3-4 անձինք:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում զբոսանքը կազմակերպվում է ըստ հարկերի՝ յուրաքանչյուր խցի համար 1 ժամով: Զբոսանքի ժամանակ ոչ մի ուրիշ բանով ազատազրկվածները չեն զբաղվում, միայն կարող են քայլել զբոսահրապարակի լայնությամբ ու երկարությամբ:

Ազատազրկվածները տեղեկացնում են, որ զբոսանքի գնալիս իրենց ցանկությամբ խցում միշտ ինչ-որ մեկը մնում է: Ոչ բարենպաստ եղանակի դեպքում զբոսանքը չի փոխարինվում մեկ այլ զբաղմունքով:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի, Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքները

Գրադարան

«Վանաձոր» ՔԿՀ-ի գրադարանին հատկացված է երեք սենյակ, որոնք տեղակայված են առաջին հարկում՝ տեսակցությունների սենյակի մոտ:

Մեծ սենյակը, որտեղ պահվում են հիմնարկի գրքերն ու թերթերը, մոտ 36 քմ մակերես ունեցող լուսավոր սենյակ է:

Գրադարանի լուսավորությունը ցերեկային ժամերին ապահովվում է լուսամուտի միջոցով, վերջինս տարածվում է ամբողջ սենյակի երկարությամբ, ունի մոտ 3*1.20 քմ մակերես: Լուսամուտի մեջտեղի հատվածը՝ մոտ 0.5 մ երկարությամբ, բացվում է ներսից, որի միջոցով էլ հիմնականում իրականացվում է սենյակի օդափոխությունը:

Արհեստական լուսավորությունն իրականացվում է 6 լամպերի միջոցով:

Ջեռուցումը իրականացվում է կենտրոնացված համակարգով, գրադարանի աշխատողի խոսքերով՝ սենյակում ցուրտ չի լինում:

Գրքերը պահվում են մեծ պահարանում, թերթերը՝ փոքր: Գրադարանի գրքերը գրանցված են հատուկ մատյանում, գրադարանն ունի 799 գիրք: Ազատազրկվածները հիմնականում կարդում են հայերեն, սակայն գրականության մեծ մասը ռուսերեն լեզվով է: Ազատազրկվածները հիմնականում կարդում են հայերեն բանաստեղծություններ և դետեկտիվ ժանրի գրքեր:

Սահմանված ընթացակարգի համաձայն՝ գրադարանավարը շաբաթը 2 անգամ շրջում է խցերով, ազատազրկվածների ցանկությամբ գրքեր տրամադրում կամ ետ վերցնում արդեն տրամադրածները: Թեև գրադարանում գրքերի ցանկ կա, բայց այն ազատազրկվածներին ամեն անգամ չի ներկայացվում, գրադարանավարը գրադարանում առկա գրքերի մասին ազատազրկվածներին տեղեկացնում է բանավոր: Գրադարանավարի խոսքերով՝ գրադարանից օգտվում է ազատազարկվածների 60%-ը:

Գրադարանի փոքր պահարանում պահվում են հիմնարկի կողմից բաժանորդագրված 4 անուն թերթերը՝ «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Ժամանակ Երևան» և այլն: Ստացված թերթերն արխիվացվում են:

Հիմնարկի կողմից ստացված թերթերն ազատազրկվածներին տրամադրվում են

խուց առ խուց, եթե վերջիններս ցանկանում են թերթ կարդալ: Ազատազրկվածներին կարդալու համար տրվող օրաթերթն ուշացվում է առավելագույնը 2 օր:

Ազատազրկվածներն իրենք գրադարան գալ, գիրք ընտրել կամ տեղում ընթերցել չեն կարող, քանի որ մեծ մասն ազատազրկված են փակ ռեժիմով:

Թեև գրադարանավարը գտնում է, որ ցանկալի կլիներ, որ ազատազրկվածներն անձամբ գրադարան գան և վերցնեն իրենց նախընտրած գրքերը:

Գրադարանի համար առանձնացված մյուս երկու սենյակներից մեկում պահվում են արխիվացված անձնական գործերը, մյուսում՝ ոչինչ չկա:

Գլուխ 6

Վերաբերմունք

Վանաձոր ՔԿՀ-ում ազատազրկվածները անձնակազմի վերաբերմունքից ընդհանուր առմամբ բողոքներ չունեն, սակայն ազատազրկվածները իրենց խոսքում նշում են որոշակի խնդիրներ, որոնք արտահայտում են անձնակազմի կողմից ազատազրկվածների նկատմամբ դրսևորած վերաբերմունքի մասնավոր դեպքերը: ՔԿՀ-ի պետի նախաձեռնությամբ ուրբաթ օրը նշանակվել է ազատազրկվածների համար պետի մոտ ընդունելության օր, որի համար ազատազրկվածները նախապես հերթագրվում են, իսկ արդեն ընդունելության ժամանակ ներկայացնում են իրենց հուզող խնդիրները: Ըստ ՔԿՀ-ի պետի՝ ներկայացվում են թե՛ հիմնարկի գործունեությանը վերաբերող, թե՛ անձնական բնույթի խնդիրներ, որոնց աշխատում են լուծումներ տալ:

Խտրականություն

Սպորտդահլիճից օգտվելու հնարավորությունը ոչ բոլոր ազատազրկվածների համար է մատչելի, ազատազրկվածների մի մասի նկատմամբ այն կիրառվում է որպես խրախուսանք, սակայն խրախուսելի վարքագծի ցանկ ՔԿՀ-ում սահմանված չէ, և ազատազրկվածները չեն հասկանում, թե որ դեպքում և ինչ տիպի վարքագիծը կարող է խրախուսելի դիտարկվել:

Իրավունքների վերաբերյալ իրազեկվածություն

«Վանաձոր» ՔԿՀ-ում ազատազրկվածների համար նախատեսված խցերում վերջիններիս իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվական թերթիկ փակցված չէ: Ազատազրկվածների մեծ մասը նշում է, որ ՔԿՀ-ում իր ունեցած իրավունքների և պարտականությունների մասին տեղյակ է մյուս ազատազրկվածների և իր սեփական փորձից: Այս հանգամանքը ազատազրկվածների համար համապատասխան պայմաններ չի ստեղծում ՔԿՀ-ում նրանց իրավունքների և պարտականությունների իրագործման կապակցությամբ: Օրինակ՝ ազատազրկվածները տեղյակ չեն, որ առողջության հետ խնդիրներ ունենալու դեպքում կարող են օգտվել իրենց կողմից նախընտրած բժշկի ծառայություններից:

ՔԿՀ ընդունելիս ազատազրկվածներին ներկայացնում են իրենց իրավունքների և պարտականությունների մասին արձանագրություն, որը սովորաբար ստորագրվում է ազատազրկվածի կողմից առանց դրան ծանոթանալու, սոցիալ-հոգեբանական ծառայությունը այդ մասով միայն տարվում է փաստաթղթերի կազմման շուրջ, իսկ բացատ-

րական աշխատանքներ ազատազրկվածների հետ նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ չի տարվում:

Իրավաբանական և սոցիալ-հոգեբանական ծառայություն

«Վանաձոր» ՔԿՀ-ում աշխատում է մեկ սոցիալ-հոգեբան և մեկ իրավաբան: Շաբաթվա ընթացքում հոգեբանը պարտադիր այցելում է ազատազրկվածներին, իսկ ազատազրկվածների պահանջի դեպքում կարող է իրականացնել լրացուցիչ այցելություններ: Ազատազրկվածների մեծ մասը նշում է, որ հոգեբանի ծառայություններից չի օգտվում, քանի որ չի վստահում, որ պահպանվում է հոգեբանի հետ զրույցի գաղտնիությունը:

Ըստ ազատազրկվածների՝ «Վանաձոր» ՔԿՀ-ի մեկ իրավաբանի հաստիքը չի բավարարում բոլոր ազատազրկվածներին բավարար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

Ազատազրկվածների մի մասը նշում է, որ ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից դրսևորվում է խտրականություն ազատազրկվածների մի մասի նկատմամբ՝ նրանց սպորտդահլիճ չտանելու միջոցով:

Առաջարկություն

- *սահմանել խրախուսելի վարքագծի ցանկ և դրա մասին իրազեկել բոլոր ազատազրկվածներին*
- *ազատազրկվածների իրավունքների և պարտականությունների իրականացումն ապահովելու համար կազմել ազատազրկվածների իրավունքների և պարտականությունների հուշաթերթիկ և այն փակցնել խցերում:*

ՄԱՍ 2

Գլուխ 1

Մարդու իրավունքների վիճակը Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում

Ընդհանուր տեղեկություններ Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության վերաբերյալ

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունը /այսուհետ՝ նաև գիշերօթիկ հաստատություն/ իրականացնում է սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաների խնամքն ու դաստիարակությունը: Այն պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է 2007 թ. սեպտեմբերի 1-ից ՀՀ կառավարության 2007 թ. հուլիսի 26-ի N 890-Ն որոշման հիման վրա:

Այստեղ երեխաներն ընդունվում են սոցիալական աջակցության խորհրդի[1] առաջարկով այն ընտանիքներից, որոնք հաշվառված են սոցիալական անապահովության համակարգում: Գիշերօթիկ հաստատությունում երեխաներն ապրում են երկուշաբթիից-շաբաթ: Շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև ամառային արձակուրդների ընթացքում՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին, երեխաները վերադառնում են իրենց ընտանիքներ:

Գիշերօթիկ հաստատությունն ունի երկու մասնաշենք, որոնք միմյանցից գտնվում են մոտ 100 մ հեռավորության վրա, փողոցի երկու կողմերում: Մասնաշենքերը փողոցից և հարևան շենքերից անջատվում են մոտ մեկ մետր բարձրությամբ երկաթե պարիսպներով:

1-ին մասնաշենքում տեղակայված են խոհանոցը, ճաշասրահը, ափսեների լվացման սենյակը, մթերքի պահեստները, բուժմասը, դասապատրաստման սենյակները, աշխատողների աշխատասենյակները, ննջասենյակների մի մասը:

2-րդ մասնաշենքում տեղակայված են երեխաների ննջասենյակների մյուս մասը, այցելությունների սենյակը, լողասենյակը, լվացքի, արդուկի սենյակները, վարսավիրական անկյունը /այստեղ երեխաները հարդարում, կտրում, իսկ լողանալուց հետո չորացնում են իրենց մազերը/, մանկավարժական և վերականգնողական բնույթի սպասարկման սենյակները՝ աշխատանքի ուսուցման, ֆիզիոթերապիայի, հեծանվային սպորտի, հոգեբանավերականգնողական աշխատանքների սենյակները, խաղասրահը և դահլիճը:

Բոլոր ննջասենյակները, ինչպես նաև դասապատրաստման սենյակներն ունեն նույն վերանորոգումը և կահավորանքը:

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատութ-

[1] Սոցիալական աջակցության խորհուրդը, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, սոցիալական ծառայություններ տրամադրող մարմիններին կից հասարակական հիմունքներով գործող մարմին է, որի կազմում ընդգրկվում են տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման ներկայացուցիչը, զբաղվածության տարածքային մարմնի ներկայացուցիչը և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները:

յունում 113 երեխաների համար նախատեսված է 9 զուգարան՝ 5 զուգարան 1-ին մասնաշենքում, իսկ 4-ը՝ 2-րդ մասնաշենքում: Զուգարանները առանձնացված են ըստ տարիքի և սեռի:

Գիշերօթիկ հաստատությունն ունի 2 լողասենյակ, որոնցից մեկը գտնվում է 1-ին մասնաշենքի առաջին հարկում: Այս լողասենյակում լողախցիկներ չկան, տեղադրված է միայն երկու ցնցուղ: Այստեղ հնարավոր չէ լողանալ, երեխաները կարող են այստեղ լվանալ իրենց ոտքերը, գլուխը:

Երկրորդ լողասենյակը գտնվում է 2-րդ մասնաշենքի առաջին հարկում, ունի 3 լողախցիկ, յուրաքանչյուր խցիկում տեղադրված է 1 ցնցուղ:

Լվացքի սենյակը գտնվում է հաստատության 2-րդ մասնաշենքում: Այստեղ տեղադրված են 3 կիսաավտոմատ լվացքի մեքենաներ, որոնցից մեկը, սակայն, չի աշխատում:

Հաստատությունն ունի մթերքի 2 պահեստ, որոնցից մեկը գտնվում է 1-ին մասնաշենքի 1-ին հարկում, երկրորդը՝ նույն շենքի նկուղային հարկում:

Գիշերօթիկ հաստատությունը մշտական ջրամատակարարում չունի, ջուրը հավաքվում է մեծ բաքերում:

Գիշերօթիկ հաստատությունն ապահովված չէ ընդհանուր ջեռուցման համակարգով:

Հաստատության 1-ին մասնաշենքը ջեռուցվում է «ARISTON» գազի կաթսաներով, 2-րդ մասնաշենքը ջեռուցվում է էլեկտրական սալիկների միջոցով:

Երկու մասնաշենքերն էլ ունեն երկու մուտք, հակահրդեհային և ազդանշանային համակարգեր:

Գիշերօթիկ հաստատության երկու մասնաշենքերն էլ ունեն խաղահրապարակներ, որտեղ տեղադրված են երեխաների սպորտային վարժություններ իրականացնելու համար համապատասխան սարքավորումներ, ինչպես նաև տաղավար:

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում մոնիթորինգի իրականացման պահին /2008 թ. հոկտեմբեր-նոյեմբեր/ ապրում էր 113 երեխա:

Գլուխ 2

Առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ

Ննջասենյակներ

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության մասնաշենքերում երեխաների համար առանձնացված են 15 ննջասենյակներ, որտեղ տեղադրված են ընդհանուր թվով 125 մահճակալներ: Ննջասենյակներից 8-ը գտնվում են 1-ին, իսկ 7-ը՝ 2-րդ մասնաշենքում:

Երկրորդ մասնաշենքի ննջասենյակներն անցնում են մեկը մյուսի միջով:

Յուրաքանչյուր ննջասենյակը նախատեսված է 3-14 երեխայի համար՝ պայմանավորված սենյակների ընդհանուր մակերեսով: Ննջասենյակների մակերեսը կազմում է 18-67.5 քմ:

Ննջասենյակները հիմնականում առանձնացված են ըստ երեխաների տարիքի և սեռի: Բացառության կարգով երեխաների ցանկությամբ աղջիկների սենյակում կարող են տեղավորվել քույրերը, իսկ տղաների սենյակում եղբայրները՝ չնայած նրանց տարիքային անհամապատասխանությանը:

Ննջասենյակները կահավորված են նույն ձևով: Յուրաքանչյուր սենյակում երեխաների թվին համապատասխան փայտե մեկհարկանի մահճակալներ են, անձնական օգտագործման կողապահարաններ, որտեղ երեխաները պահում են իրենց անձնական իրերը /խաղալիքներ, հագուստի պարագաներ/ և փափուկ աթոռ: Բացի այդ, սենյակում կա նաև սեղան, մեծ պահարան, որտեղ երեխաները պահում են իրենց վերնազգեստները, կոշիկները, նաև գրենական պիտույքները: Ննջասենյակները լուսավոր են, վարագուրված լուսամուտներով: Հատակին գցված են գորգեր:

Սենյակների օդափոխությունը իրականացվում է օդանցքների միջոցով, կան սենյակներ, որոնք ունեն էլեկտրական օդափոխիչներ:

Հաստատության 2-րդ մասնաշենքի յուրաքանչյուր երկու ննջասենյակում ապրող երեխաներին հատկացված է 1 հեռուստացույց կամ երաժշտական կենտրոն, որը տեղադրված է այդ երկտեղ սենյակները տանող նախասրահում: Նախասրահը կահավորված է բազմոցով, բազկաթոռներով, աթոռներով, սեղանով:

Դասապատրաստման սենյակներ

Դասապատրաստման սենյակները 4-ն են, որոնք միայն 1-ին մասնաշենքում են: Դասապատրաստման սենյակները մեծ են, լուսավոր, կահավորված դասապատրաստման համար անհրաժեշտ կահույքով և պարագաներով: Այստեղ կան երեխաների թվին համապատասխան աշակերտական սեղաններ, աթոռներ, ինչպես նաև գրապահարաններ:

Ընդհանուր առմամբ գիշերօթիկ հաստատությունում երեխաների ապրելու պայմանները մոտ են ընտանեկան պայմաններին և համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին:

Առաջարկություն

- *գիշերօթիկ հաստատության ֆինանսավորման շրջանակներում նախատեսել գիշերօթիկ հաստատությունը կենտրոնացված ջեռուցման համակարգով ապահովելու, ինչպես նաև բոլոր ննջասենյակները էլեկտրական օդափոխիչներով ապահովելու ծախսեր:*

Սնունդ

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում երեխաները, օրվա ռեժիմի համաձայն, սնվում են օրական 4 անգամ՝ նախաճաշ՝ 8:15 – 8:45, ճաշ՝ 13:00 – 14:00, հետճաշիկ՝ 16:05 – 16:30, ընթրիք՝ 19:00 – 19:30:

Ճաշացանկը կազմվում է դիետ բուժքրոջ, խոհարարների և հաշվապահի մասնակցությամբ, որը հաստատում է տնօրենը: Ճաշացանկը դիետ քույրը թարմացնում է երկու օրը մեկ անգամ, որը փակցվում է խոհանոցի պատին:

Ճաշացանկը կազմելիս հաշվի են առնվում ՀՀ կառավարության 2004 թ. օգոստոսի 5-ի N 1324 որոշմամբ սահմանված չափորոշիչները, երեխաների առողջական վիճակը և առաջարկները: Իրենց առաջարկները երեխաները ներկայացնում են գրավոր՝ գցելով ճաշասենյակում տեղադրված «Ախորժակ» արկղի մեջ: Արկղը բացվում է շաբաթը մեկ անգամ:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի, Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքները

Երեխաները սնվում են գիշերօթիկ հաստատության ճաշասրահում: Այն նախատեսված է մոտ 75 երեխայի համար, մինչդեռ գիշերօթիկ հաստատությունում ապրում են 113 երեխաներ: Այս հանգամանքը նախաճաշի և ընթրիքի ժամանակ որոշակի դժվարություններ է ստեղծում, և երեխաները ստիպված սնվում են 2 հերթով:

Ճաշի ժամանակ այս խնդիրը չի զգացվում, քանի որ տարբեր տարիքի երեխաները դպրոցից վերադառնում են և ճաշում տարբեր ժամերի:

Բոլոր տեսակի ճաշերը պատրաստվում և պահվում են տեղում: Խոհանոցի համար նախատեսված տարածքում առանձնացված է ճաշերը պատաստելու սենյակը, ամանները լվանալու սենյակը և ճաշասրահը: Խոհանոցում կա երեք մասից բաղկացած էլեկտրական սալիկ, միաժամանակ մեկ գազօճախ: Ապուրները պատրաստվում են 80 լ տարողությամբ կաթսաներում: Խոհանոցը վերանորոգված է, սալիկապատ, մաքուր, ունի ընդհանուր օդափոխման համակարգ:

Ընդհանուր խոհանոցային սպասքը պահվում է ճաշերը եփելու սենյակում՝ համապատասխան պահարաններում:

Պահեստից խոհանոց բերվող և երեխաներին տրվող սնունդը կշռվում է համապատասխան կշեռքներով:

Բոլոր երեխաներն օգտվում են գիշերօթիկ հաստատությունում տրվող սննդից: Այն համապատասխանում է ՀՀ կառավարությամբ սահմանված չափորոշիչներին /տե՛ս հավելված 3/ և ըստ երեխաների՝ ապահովում է երեխաներին տրվող սննդի բազմազանությունն ու կալորիականությունը: Նախաճաշին հիմնականում տրվում է կաթնամթերք, ինչպես նաև ձու, ճաշին՝ երկու տեսակի կերակուր՝ մսով կամ ձկան տեսակով, ինչպես նաև տարբեր աղցաններ: Հետճաշիկի ժամանակ տրվում է թխվածք, միրգ, իսկ երեկոյան՝ ընթրիքին, որևէ տաք կերակուր: Յուրաքանչյուր երեխայի համար նախատեսված է 2 կտոր հաց, բայց ընդհանուր հացամանով էլ է հաց դրվում:

Անհրաժեշտության դեպքում երեխաները հնարավորություն ունեն հավելյալ սնունդ ստանալու: Առողջության հետ խնդիրներ ունեցող երեխաներին տրվում է դիետիկ սնունդ:

Ծննդյան օրերի և տոնական օրերի ճաշացանկը տարբերվում է սովորական օրերի համար կազմվող ճաշացանկից: Ծննդյան օրերին երեխաներին տրամադրվում է դոլմա, խորոված, պիցցա, տոնական տորթեր:

Մտահոգիչ է այն, որ

- *գիշերօթիկ հաստատության շենքային պայմանները հնարավորություն չեն տալիս երեխաների նախաճաշն ու ընթրիքը կազմակերպել միաժամանակ բոլոր երեխաների համար:*

Առաջարկություն

- *գիշերօթիկ հաստատությանն ապահովել ճաշասրահում համապատասխան շենքային փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով:*

Սանիտարահիգիենիկ պայմաններ

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում երեխաների յուրաքանչյուր խմբին տրամադրվում են ընդհանուր օգտագործման հիգիենայի պարագաներ: Այս պարագաները դաստիարակից ստանում է յուրաքանչյուր խմբի ավագը, որը ստորագրում է ընդհանուր մատյանում: Յուրաքանչյուր խմբին տրվում է օճառ, զուգարանի թուղթ, ատամի մածուկ, անհատական օգտագործման ատամի խոզանակ, 2 սրբիչ: Այս պարագաների օգտագործման համար ժամկետներ սահմանված չեն և վերջանալու դեպքում կարելի է տեղեկացնել խմբի ավագին, որը նորը կարող է ստանալ դաստիարակից:

Գիշերօթիկ հաստատությունում բնակվող երեխաների մեծ մասը նշում է, որ սովորույթի համաձայն՝ անձնական հիգիենայի պարագաները իրենց հետ բերում են նաև տնից:

Անհատական օգտագործման պարագաները երեխաները պահում են իրենց անձնական կողապահարաններում:

Ննջասենյակների և դասապատրաստման սենյակների մաքրությունն ապահովելու համար յուրաքանչյուր ննջասենյակում ապրող երեխաների համար սահմանված է հերթապահություն և յուրաքանչյուր խմբից 1-2 երեխա ամեն օր հերթապահում է: Օրվա հերթապահները մաքրում և հավաքում են սենյակը, որոնց վերահսկում են դաստիարակները: Իրենց անկողինները երեխաները հարդարում են ինքնուրույն, դասավորում կողապահարանը, հագուստները: Փոքր տարիքի երեխաներին, ովքեր ինքնուրույն չեն կարողանում նման աշխատանքներ իրականացնել, օգնում են խնամք իրականացնող դաստիարակը կամ դայակը: Շաբաթ, կիրակի օրերին հաստատությունը մաքրում են տեխնիկական աշխատողները:

Հաստատությունում սառը և տաք ջրից մշտապես օգտվելու հնարավորություն կա:

Գիշերօթիկ հաստատությունում լողանալու համար սահմանված օրեր չկան, սակայն լողանալու հնարավորությունները սահմանափակ են: 113 երեխայի համար նախատեսված է 1 բաղնիք՝ 3 լողախցիկներով: Երեխաների մի մասը նշում է, որ հաստատությունում գործող երկրորդ բաղնիքում հիմնականում լվացվում են, լվանում ոտքերը, գլուխը:

Այս պատճառով էլ երեխաների մեծ մասը տանն է լողանում՝ շաբաթ, կիրակի օրերին: Գիշերօթիկ հաստատությունում լողանում են այն երեխաները, որոնք տուն չեն գնացել կամ տանը ևս լողանալու հնարավորություն չունեն կամ էլ շաբաթվա ընթացքում երեխաներն իրենք լողանալու ցանկություն են հայտնել: Դայակները, դաստիարակները և բուժքույրը հետևում են երեխաների անձնական հիգիենային. շաբաթվա մեջ 2-3 անգամ բուժքույրը ստուգում է երեխաների եղունգները, մազերը, հագուստը, մարմինը, եթե երեխան մաքուր չի լինում, նրան լողացնում են: Եթե երեխաների գլխին ոջիլ է լինում, դեղ են քսում մազերին: Կան անձնական հիգիենայի, պեդիկուլյոզի /ոջիլ/, քոսի ստուգման մատյաններ, որոնք պարբերաբար լրացվում են:

Դաստիարակն էլ հետևում է, որ ճաշարան գնալուց առաջ երեխաները պարտադիր

լվացվեն: Երեկոյան քնելուց առաջ ևս երեխաները պարտադիր լվացվում են, լվանում նաև ոտքերը:

Երեխաների անկողնային սպիտակեղենը փոխվում է ամիսը 2 անգամ: Չնայած կան միզող երեխաներ, որոնց սպիտակեղենը փոխվում է ավելի հաճախակի:

Գիշերօթիկ հաստատության երեխաների հագուստները, սպիտակեղենը լվացվում է լվացքատանը, որտեղ հերթափոխով աշխատում են 3 աշխատողներ: Գիշերօթիկ հաստատությունն ունի 3 կիսաավտոմատ լվացքի մեքենա, որոնցից մեկը չի աշխատում, իսկ մյուս երկուսը բավականին հին են և օգտագործման համար անհարմար: Կեղտոտ շորերը երեխաները թողնում են իրենց ննջասենյակում, որտեղից էլ վերցնում են լվացքատան աշխատողները: Երեխաներից շատերը նշում են, որ իրենց ցանկությամբ, իրենք ևս կարող են լվանալ իրենց հագուստները: Նման դեպքերում հաստատությունը երեխաներին տրամադրում է լվացքի համար անհրաժեշտ պարագաներ: Երեխաների մյուս մասն էլ նշում է, որ հագուստը լվանում է տանը:

Տարվա մեջ 2 անգամ հաստատությունը երեխաներին հագուստ է տրամադրում: Հատկացված միջոցները բավարարում են, որպեսզի հագուստ տրամադրվի միայն այն երեխաներին, ովքեր տնից հագուստ չեն բերում:

Ձմռան համար նախատեսված հագուստները՝ վերարկուներ և երկարաճիտ կոշիկներ, հաստատությունը 2007 թ. հատկացրել է բոլոր երեխաներին, իսկ 2008 թ. միայն հաստատություն նոր ընդունված երեխաներին:

Տրամադրվող հագուստներից երեխաներն իրենք են ընտրում իրենց ճաշակին համապատասխան:

Հագուստը կամ կոշիկը վնասվելու դեպքում երեխաները դիմում են հաստատության դերձակին կամ կոշկակարին:

Մտահոգիչ է այն, որ

- *գիշերօթիկ հաստատությունում երեխաների լողանալու հնարավորությունները սահմանափակ են*
- *գիշերօթիկ հաստատությունում լվացքի մեքենաները բավականին հին են, և դրանց քանակությունը բավարար չէ*
- *գիշերօթիկ հաստատությանը տրամադրվող միջոցները բավարար չեն բոլոր երեխաներին հագուստներով ապահովելու համար:*

Առաջարկություն

- *գիշերօթիկ հաստատությանն ապահովել լողասենյակների թիվն ավելացնելու համար անհրաժեշտ միջոցներով, նոր լվացքի մեքենաներով, երեխաների քանակին և տարիքին համապատասխան հագուստով:*

Գլուխ 3

Կրթություն

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության բոլոր երեխաները սովորում են հանրակրթական միջնակարգ դպրոցում: Երեխաները հաճախում են հաստատության մոտ գտնվող թիվ 27, 16 միջնակարգ դպրոցները, ինչպես նաև թիվ 3 արհեստագործական մասնագիտացված հաստատությունը:

Երեխաներին կրթության համար անհրաժեշտ դասագրքերն ու գրենական պիտույքներն անվճար տրամադրում է գիշերօթիկ հաստատությունը: Երեխաները նշում են, որ տարվա մեջ երկու անգամ /ըստ կիսամյակների/ իրենց տրամադրվում են գրենական պիտույքներ: Հաստատության փոխտնօրենը լրացնում է գրանցամատյան, որտեղ նշվում է, թե որ երեխային ինչ դասագիրք և գրենական պիտույք է տրվել և ինչ քանակությամբ: Դասագրքերը չբավականացնելու դեպքում նույն դասարանում սովորող երեխաներից երկուսին տրամադրվում է մեկ դասագիրք:

Գրենական պիտույքների կարիք ունենալու դեպքում երեխաները դիմում են դաստիարակին, որը կազմում է անհրաժեշտ պարագաների և այն երեխաների անուն, ազգանունների ցանկը, որոնք գրենական պիտույքների պահանջ են ներկայացրել:

Գիշերօթիկ հաստատության երեխաների մի մասը նշում է, որ տրամադրվող գրենական պիտույքներն անորակ են և շուտ կոտրվում են: Բացի այդ, դպրոցում ուսուցանվող հատուկ առարկաների համար նախատեսված աշխատանքային տետրեր և որոշակի գրենական պիտույքներ ընդհանրապես չունեն կամ էլ ամբողջ խմբին տրվում է մեկը, օրինակ՝ կարգին: Երեխաները դիմել են դաստիարակին, սակայն հաստատությունում ևս նման պարագաներ չեն եղել:

Երեխաները կարող են օգտվել հաստատության գրադարանից: Նրանք դաստիարակից թույլտվություն են վերցնում և գնում գրքեր ընտրելու: Չնայած երեխաներից ոմանք նշում են, որ գրադարանը հարուստ չէ և երբեմն իրենց ցանկացած գիրքը չի լինում:

Գիշերօթիկ հաստատությունում երեխաների դաստիարակության և կրթության համար պատասխանատու են դաստիարակները:

Դաստիարակներն, ըստ տարիքային խմբերի, գիշերօթիկ հաստատությունում կազմակերպում են երեխաների դասապատրաստումը: Հաստատությունում աշխատող բոլոր դաստիարակները ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն:

Դասապատրաստումն իրականացվում է դասապատրաստման հատուկ սենյակներում, ամեն օր՝ ժամը 16:00-19:00-ն: Դասապատրաստման սենյակները բաշխված են ըստ դաստիարակչական խմբերի: Կա դաստիարակչական 5 խումբ, իսկ դասապատրաստման սենյակներն ընդամենը 4-ն են, և դաստիարակչական 5-րդ խումբը դասապատրաստումն իրականացնում է ննջարաններում:

խումբ 1	1-4-րդ դասարան	26 երեխա
խումբ 2	5-6-րդ դասարան	21 երեխա
խումբ 3	7-8-րդ դասարան	21 երեխա

խումբ 4	8-9-րդ դասարան	21 երեխա
խումբ 5	10-11-րդ դասարան	24 երեխա

Յուրաքանչյուր դաստիարակչական խմբի հետ աշխատում է 2 դաստիարակ, որոնք աշխատում են հերթափոխով: Գիշերօթիկ հաստատությունում երեխաների դասապատրաստման ընդհանուր մեթոդ չկա: Դաստիարակներից յուրաքանչյուրն աշխատում է իր մեթոդով:

Գիշերօթիկ հաստատությունում ապրող երեխաներից շատերը հաճախում են նաև հաստատությունից դուրս գործող տարբեր խմբակների՝ սպորտային պարապմունքներ, արհեստագործական, ասմունքի և այլն: Այն դեպքերում, երբ դասապատրաստման ժամերը համընկնում են խմբակների ժամերի հետ, դասապատրաստումն իրականացվում է անհատական երեկոյան ժամերին՝ դայակների օգնությամբ: Դայակների մեծամասնությունը ևս ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն:

Գիշերօթիկ հաստատության աշխատակիցների, ինչպես նաև երեխաների կողմից իրենց առաջադիմությունը գնահատվում է բավարար:

Երեխաներին հաստատությունից դպրոց և դպրոցից հաստատություն ուղեկցում են դաստիարակները և դայակները: Հաստատության աշխատակիցները համագործակցում են հանրակրթական դպրոցի աշխատակիցների հետ, հետաքրքրվում երեխաներով, իսկ տարրական դասարանի երեխաների դաստիարակները ամեն օր երեխաների տնային հանձնարարություններն են ճշտում: Ծնող կանչելու դեպքում էլ երբեմն դաստիարակներն են գնում հանրակրթական դպրոց:

Հաստատությունում 3 խուլ-համր երեխա կա, նրանք նույնպես հանրակրթական դպրոց են հաճախում: Այդ երեխաները մասնակցում են հաշմանդամների համար նախատեսվող միջոցառումներին և մեծ արդյունքների են հասնում: Նրանք ինտեգրման խնդիր չունեն: Միայն հանրակրթական դպրոցում մի քիչ դժվարություններ են ունեցել, բայց հոգեբանի միջամտությամբ ամեն ինչ հարթվել է:

Հաստատությունում կա 10 հոգուց բաղկացած աշակերտական խորհուրդ, որն ունի ղեկավար: Խորհրդի անդամները ընտրվում են և՛ ուսուցչական խորհրդի, և՛ երեխաների կողմից: Աշակերտական խորհրդի կազմում կա յուրաքանչյուր տարիքային խմբի 13 տարեկանից բարձր ներկայացուցիչ: Աշակերտական խորհուրդը ընտրվում է տարին 1 անգամ:

Մտահոգիչ է այն, որ

- *գիշերօթիկ հաստատությունում տարբեր առարկաների դասապատրաստումը կազմակերպվում է միաժամանակ, նույն սենյակում և նույն դաստիարակների մասնակցությամբ:*

Առաջարկություն

- *գիշերօթիկ հաստատությունում երեխաների դասապատրաստման համար ունենալ ժամավճարով աշխատող մանկավարժներ, և դասապատրաստումն իրականացնել ըստ առարկաների բաժանված խմբերով:*

Գլուխ 4

Վերաբերմունք

Գիշերօթիկ հաստատությունում աշխատակազմի կողմից երեխաների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ երեխաները տարբեր կարծիքներ են հայտնում:

Երեխաների մի խումբը նշում է, որ դաստիարակներն ու դայակները «խփում են» իրենց: Մի երեխայի խոսքերով՝ դաստիարակների և դայակների «խփելը շոյելու նման մի բան է դարձել, չնայած լավ էլ խփում են»:

Երեխաների մյուս մասն էլ նշում է, որ անկարգություն անելիս երեխաների վրա դաստիարակները միայն բարկանում են, «հասկացնում»:

Գիշերօթիկ հաստատության երեխաների մի մասը, ինչպես նաև աշխատակիցները նշում են, որ աշխատողները երեխաներին վերաբերում են ծնողի նման:

Գիշերօթիկ հաստատության աշխատողները երեխաներին հիմնականում դիմում են անունով, հարգալից տոնով: Լինում են նաև դեպքեր, երբ երեխաների այս կամ այն արարքի համար բարկացած ժամանակ երեխաներին դիմում են բարձր տոնով՝ անվանելով որևէ կենդանու անունով:

Երեխաների ննջասենյակները մտնելիս չեն թակում, այս առումով տնօրենը կարծում է, որ սա անձի դաստիարակվածության խնդիր է, չնայած նրա կարծիքով աշխատողները առաջին հերթին մտահոգվում են երեխաների համար, հատկապես դեռահասների:

Տնօրենը, դայակները և դաստիարակները հաճախակի ստուգում են պահարանները, ինչը հիմնականում արվում է մաքրությունը ստուգելու համար: Պահարանները ստուգելու համար սահմանված հատուկ օրեր չկան:

Հաստատությունում հաճախակի գողություններ են լինում

Աշխատողները տեղեկացնում են, որ այս խնդիրը կարգավորելու համար կազմակերպվել է ժողով հաստատության աշխատակիցների, երեխաների և ծնողների մասնակցությամբ: Գողությունները կանխելու նպատակով ծնողներին խնդրում են, որ երեխաներին գումար չտրամադրեն: Իսկ եթե երեխաները գումար են բերում տնից, օրինակ՝ տրանսպորտի համար, ապա այդ գումարը տալիս են իրենց դաստիարակներին, որոնք էլ մաս-մաս տալիս են երեխաներին: Սակայն այդ կերպ խնդիրը չի կարգավորվում, քանի որ երեխաներից կորչում են նաև անձնական օգտագործման իրեր:

Հաստատության տնօրենը պնդում է, որ երեխան պետք է սովորի ոչ թե պահել, այլ «չվերցնել»:

Իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածություն

Գիշերօթիկ հաստատություն ընդունվող երեխաներին վերջիններիս իրավունքների և պարտականությունների մասին բանավոր տեղեկատվություն են տրամադրում հաստատության աշխատակիցները՝ սոցիալական աշխատողը, դաստիարակը կամ դայակը:

Հաստատության երեխաներից մի մասի խոսքերով՝ պարբերաբար կազմակերպվում են ընդհանուր ժողովներ, որտեղ ևս բանավոր ձևով երեխաներին տեղեկացնում են իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

Երեխաների մյուս մասի հետ զրույցների արդյունքում, պարզվել է, որ իրենց իրավունքների և պարտականությունների մասին վերջիններս որևէ տեղեկատվություն չունեն, նրան-



ցից մեկն էլ նշում է, որ «նման բան չկա»:

Իրավունքների և պարտականությունների մասին գրավոր, մատչելի տեղեկատվությունը փակցված է հաստատության երկու մասնաշենքերի միջանցքներում: Այն ընթեռնելի է բոլոր տարիքի տառաճանաչ երեխաների համար:

Հաստատությունում ավանդույթ է դարձել, հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրը, կազմակերպվում են քննարկումներ, որոնց մասնակցում են իրավապահ համակարգի՝ Լոռու մարզի դատախազության և ոստիկանության, դատարանի, ինչպես նաև Լոռու մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցներ:

Երեխաները նշում են, որ ցանկացած հարցով, այդ թվում նաև իրավունքների վերաբերյալ հարցերով, կարող են դիմել հաստատության այս կամ այն աշխատողին՝ տնօրենին, դաստիարակին, հոգեբանին՝ կախված նրանից, թե տվյալ երեխան ում է ավելի շատ վստահում:

Պատժամիջոցներ, բռնություններ

Գիշերօթիկ հաստատությունում երեխաների կողմից անթույլատրելի արարքների և դրանց համապատասխան կիրառվող սահմանափակումների, պատասխանատվության միջոցների սահմանված ցանկ չկա: Երեխաները գիշերօթիկ հաստատությունում վարքագծի կանոնների մասին տեղեկանում են միմյանցից հաստատությունում ապրելու ընթացքում:

Երեխաների մեծ մասը նշում է, որ իրենց որոշակի արարքների համար, օրինակ՝ դասերը չսովորելու, պատժում են, անկյուն կանգնեցնում, զրկում զբոսանքի գնալուց կամ այլ միջոցառումների մասնակցելուց:

Գիշերօթիկ հաստատության տնօրենը նշում է, որ միանշանակ չի կարելի ասել, թե հաստատութունում բռնություններ չեն լինում, թեև երեխաների կողմից նման դեպքերի վերաբերյալ գրավոր կամ բանավոր որևէ բողոք չի եղել: Դայակի կողմից երեխայի նկատմամբ կիրառված բռնության տնօրենին հայտնի միակ դեպքում դայակին նկատողություն է տրվել, որից հետո վերջինս շարունակում է աշխատել և այլևս, ըստ տնօրենի, որևէ խախտում թույլ չի տվել:

Հաստատությունում «Երեխաների նկատմամբ կամ երեխաների միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի» գրանցամատյան կա, որտեղ նկարագրվում են երեխաների կողմից թույլ տրված արարքները և դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

Հաստատության աշխատակիցների և երեխաների կամ երեխաների միջև միջանձնային կոնֆլիկտների դեպքում երեխաների հետ հատուկ աշխատանքներ են իրականացնում հոգեբանը, տնօրենը:

Մոնիթորինգի իրականացման պահին հաստատության սոցիալ-մանկավարժական խորհուրդի կողմից նախատեսվում էր մշակել երեխաների վարքագծի համապարտադիր կանոնների և դրանց խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցների պաշտոնական փաստաթուղթ:

Երեխաների խրախուսանք

Հաստատությունում երեխաներին խրախուսում են կարգապահ լինելու, լավ սովորելու, հանրօգուտ աշխատանքի և այլնի համար: Այս ամենը համակարգված բնույթ չի կրում: Որպես խրախուսանք երեխաներին նվերներ են տալիս, մասնակից դարձնում տարբեր միջոցառումների կամ էլ խրախուսական խոսքեր ասում:

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում ամենատարածված խրախուսանքի ձևը սննդի վերաբերյալ ներկայացված երեխաների առաջարկությունների կատարումն է:

1-4-րդ դասարանի երեխաների առաջադիմությունը խթանելու համար հաստատությունում հատուկ գրասեղաններ են ձեռք բերել, որտեղ իրենց տնային հանձնարարությունները կատարում են լավ գնահատականներ ստացած երեխաները:

Առաջարկություններ և բողոքներ ներկայացնելու հնարավորություն

Գիշերօթիկ հաստատությունում երեխաների կողմից առաջարկությունները, ցանկությունները և բողոքները ներկայացվում են առաջարկությունների և բողոքների արկղի միջոցով հիմնականում անանուն: Բողոքների, առաջարկությունների արկղը փակցված է հաստատության միջանցքում, իսկ սննդի մասով՝ ճաշարանում: Երեխաների կողմից ներկայացված առաջարկությունների արկղը բացվում է սոցիալ-հոգեբանական խորհրդի կողմից: Առաջարկությունների քննարկմանը մասնակցում են նաև երեխաները:

Գիշերօթիկ հաստատությունում կան երեխաներ, որոնք արկղի գոյության մասին չգիտեն կամ էլ կարծում են, որ այն աշխատողների համար է:

Հաստատության բոլոր երեխաները նշում են, որ ցանկացած առաջարկություն կարող են անկաշկանդ ներկայացնել հաստատության տնօրենին: Ըստ երեխաների՝ վերջինս ոչ մի առաջարկություն չի անտեսում, բոլորը քննարկվում են և հնարավորության սահմաններում բավարարվում:

Որպես օրինակ կարող է նշվել, որ երեխաների ցանկությամբ հաստատությունում տեղադրվել է թենիսի սեղան և երեխաները իրենց ազատ ժամանակը կարող են անցկացնել թենիսի սեղանի շուրջ:

Մտահոգիչ է այն, որ

- *հաստատությունում երեխաների նկատմամբ կիրառվում են բռնություններ*
- *հաստատությունում սահմանված չեն երեխաների վարքագծի համապարտադիր կանոններ և դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ:*

Առաջարկություն

- *հաստատության աշխատակիցների համար կազմակերպել երեխաների իրավունքների, երեխաների հետ աշխատանքի և դաստիարակության մասնագիտական դասընթացներ*
- *սահմանել երեխաների վարքագծի համապարտադիր կանոնների, երեխաների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների և խրախուսանքի միասնական կանոններ:*

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի, Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքները

Գլուխ 5

Հանգստի և ազատ ժամանցի կազմակերպում

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում երեխաների հանգիստը և ազատ ժամանցը կազմակերպվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան:

Հաստատությունում երեխաների հանգիստը և ազատ ժամանցը կազմակերպում և համակարգում են դաստիարակները, դայակները, ֆիզիկական դաստիարակության ղեկավարը:

Երեխաների ազատ ժամանցը և հանգիստը համակարգված բնույթ է կրում: Օրվա ընթացքում 12:00-14:00-ն երեխաները վերադառնում են դպրոցից, հանգստանում, 14:00-16:00-ն իրականացվում են նախասիրական պարապմունքներ, շտկողավերականգնողական աշխատանքներ, շարժողական խաղեր, իսկ 19:30-21:00-ն ժամանցի, երեկոյան զբոսանքի ժամ է, այս ժամանակահատվածներում կազմակերպվում են տարբեր տիպի խաղեր՝ լեգո, թենիս, շախմատ, շաշկի, ինչպես նաև բակում գնդակով խաղեր և այլն: Հաստատությունն ունի նաև համակարգիչներ, երաժշտական կենտրոններ, դաշնամուր, DVD, որոնք վերը նշված ժամերին հասանելի են երեխաներին: Բացի վերը նշված զբաղմունքի հնարավորությունները, հաստատությունում և հաստատությունից դուրս գործում են տարբեր խմբակներ: Կան շախմատի, խոհարարության, երգի, պարի, դաշնամուրի, նկարչության, ձևավորման, կարուձևի, լրագրողական, թենիսի, բասկետբոլի, կառատեի, ըմբշմարտի խմբակներ: Հաստատությունից դուրս գործող խմբակներ հաճախելու համար երեխաները օգտվում են տրանսպորտից, որը երեխաների համար ապահովում է հաստատությունը: Հաստատությունը ունի ավտոբուս և մարդատար մեքենա: Հաստատությունում գործում է հեծանվային խմբակ, երկու տարին մեկ հեծանվարշավ է կազմակերպվում:

Հաստատության երեխաների մեծամասնությունը հաճախում է նշված խմբակների:

Ազատ ժամանցի և հանգստի ընթացքում համապատասխան զբաղմունքի ընտրությունը կախված է երեխաների ցանկությունից:

Երեխաները խմբակների հաճախում են իրենց ցանկությամբ, հիմնականում 5-րդ դասարանից: Կան երեխաներ, որոնք միաժամանակ հաճախում են մի քանի խմբակների:

Երեխաների մեծ մասը նշում է, որ ազատ ժամանցի ընթացքում նրանք անում են այն, ինչ ուզում են:

Համակարգիչներից օգտվել ցանկացողների թիվը մեծ է, դրա համար սահմանվել է ժամանակացույց:

Հաստատության երեխաները ձեռքի աշխատանքներ են պատրաստում, որոնք հաճախակի ներկայացվում են տարբեր ցուցահանդեսների, նույնիսկ Վանաձորից դուրս:

Երեխաները ամիսը մի քանի անգամ մասնակցում են մշակութային տարբեր միջոցառումների՝ թատրոններ, կինոդիտումներ: Նման միջոցառման տանելիս հաշվի է առնվում երեխայի տարիքը: Մշակութային միջոցառումներ կազմակերպվում են նաև հաստատության ներսում:

Հարկ է նշել, որ 2008 թ. աստունքի փառատոնում հաստատությունը Վանաձորի դպրոցների մեջ առաջինն է ճանաչվել:

Ամառային արձակուրդներին հաստատությունում կազմակերպվում է ճամբար 20-30 օրով:

Երեխաների համար անվճար կազմակերպվում են էքսկուրսիաներ, արշավներ, և հաշվի է առնվում նաև երեխաների կարծիքը:

Երեխաները նշում են, որ գնացել են Ստեփանավան, Հանքավան, «Կապույտներ», «Կամակատար», «Կարմիր Խաչ»:

Գլուխ 6

Կապն արտաքին աշխարհի հետ

Այցելություններ

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում այցելությունների համար հատուկ սահմանված օրեր չկան: Երեխաների հարազատները, ընկերները նրանց կարող են այցելել օրվա ցանկացած ժամին:

Հաստատությունն այցելությունների համար ունի հատուկ սենյակ, որտեղ, սակայն, ապրում է հաստատության պահակը: Տեսակցությունների ժամանակ այդ սենյակը փաստացի չի օգտագործվում:

Ցանկության դեպքում երեխաները այցելուների հետ կարող են հանդիպել հաստատության բակում կամ էլ երեխաների ննջասենյակներում:

Հեռախոսակապ

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության երեխաները հեռախոսից կարող են օգտվել օրվա ցանկացած ժամին: Հեռախոսները տեղադրված են տնօրենի, պահակի և սոցիալական աշխատողի սենյակներում: Նշված հեռախոսներով կարելի է ներքաղաքային հեռախոսազանգեր կատարել: Բջջային և միջքաղաքային հեռախոսազանգերի համար անհրաժեշտ է դիմել տնօրենին, իսկ նրա բացակայության դեպքում դայակներին կամ դաստիարակներին: Ըստ երեխաների՝ հեռախոսազանգերից օգտվելու սահմանափակումներ գիշերօթիկ հաստատությունում չեն լինում:

Երեխաները միշտ հնարավորություն են ունենում առանց որևէ մեկի ներկայության խոսել հեռախոսով:

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունն ընդհանուր առմամբ ստեղծել է արտաքին աշխարհի հետ կապի պահպանության համար անհրաժեշտ միջոցները՝ հարազատների հետ տեսակցություններ, հեռախոսազանգեր և այլն:

Մտահոգիչ է այն, որ

- *տեսակցությունների համար նախատեսված սենյակը նպատակային չի օգտագործվում:*

Առաջարկություն

- *հաստատության պահակին տրամադրել այլ սենյակ, և ապահովել տեսակցությունների սենյակի նպատակային նշանակությամբ օգտագործումը:*

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի, Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքները

Գլուխ 7

Բուժսպասարկում

Գիշերօթիկ հաստատության բուժմասը տեղակայված է 1-ին մասնաշենքի առաջին հարկում: Բուժմասը բաղկացած է 2 սենյակից՝ աշխատասենյակից և պրոցեդուրային սենյակից: Պրոցեդուրային սենյակում կատարվում է երեխաների բուժզննումն ու առաջնային բուժօգնությունը:

Գիշերօթիկ հաստատությունում աշխատում են մեկ բժիշկ և 5 բուժքույր /1 ավագ բուժքույր,1 դիետ-քույր և 3 հերթապահ բուժքույր/:

Բժիշկը մասնագիտությամբ թերապևտ է և ունի 23 տարվա աշխատանքային փորձ:

Բոլոր բուժքույրերն ունեն համապատասխան կրթություն:

Բուժքույրերն աշխատում են 2 կամ 3 հերթափոխով, յուրաքանչյուրը՝ օրական 6 ժամ: Իրականացվում է նաև գիշերային հերթապահություն:

Գիշերօթիկ հաստատությունում երեխաները մշտապես բուժանձնակազմի հսկողության տակ են, ուստի ժամանակին բացահայտվում են նրանց հիվանդություններն ու բուժվում:

Գիշերօթիկ հաստատության երեխաները հաշվառված են իրենց ընտանիքի բնակության վայրի թաղամասային պոլիկլինիկաներում, որտեղ լրացվել է նրանց առողջության պատմությունը: Գիշերօթիկ հաստատության բուժանձնակազմը սերտորեն համագործակցում է թաղամասային պոլիկլինիկաների հետ: Որևէ հիվանդության կասկածի դեպքում երեխային ուղարկում են թաղամասային պոլիկլինիկա, այնտեղ ախտորոշվում է երեխայի հիվանդությունը և նշանակվում համապատասխան բուժում:

Գիշերօթիկ հաստատությունում ևս յուրաքանչյուր երեխա ունի բուժհսկողության քարտ, որտեղ պարբերաբար լրացվում է երեխաների առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը /երեխաների հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս հավելված 5-ում/:

Գիշերօթիկ հաստատություն ընդունվող երեխաները պարտադիր զննվում են և լրացվում է բուժզննության թերթիկ: Բացի այդ, տարեկան 2-3 անգամ պրոֆիլակտիկ բուժզննություն է կազմակերպվում, լրացվում է ընթացիկ բուժզննության թերթիկը և կցվում երեխայի բուժհսկողության քարտին: Բուժհսկողության քարտում ներառվում են նաև թաղամասային պոլիկլինիկաներում գտնվող բժշկական քարտերում կատարվող գրանցումները:

Անհրաժեշտության դեպքում թաղամասային պոլիկլինիկայի ուղեգրի հիման վրա երեխաները տեղափոխվում են հիվանդանոց: Նման դեպքերում երեխայի ծնողը տեղեկացվում է այդ մասին: Որոշ ծնողների հետ բացատրական աշխատանք է տարվում, որպեսզի նրանք հասկանան, որ երեխային անհրաժեշտ է հիվանդանոցային բուժում, քանի որ տանը չկան երեխայի ապաքինման համար համապատասխան պայմաններ:

Հիվանդանոցում բուժման ընթացքում հաստատության բժիշկը կամ բուժքույրերը այցելում են հիվանդանոց և խորհրդակցում բուժող բժշկի հետ, հետևում երեխայի բուժմանը:

Բուժանձնակազմի հավաստմամբ՝ բուժմասն ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով ու դեղամիջոցներով:

ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր ամիս տրամադրում է անհրաժեշտ դեղորայքի ձեռքերման ֆինանսական միջոցները: Անհրաժեշտ դեղորայքի ցանկը բուժքույրերը ներկայացնում են տնօրենին և կարճ ժամանակում ստանում պահանջված դեղորայքը: Երեխաներին դեղորայք տրամադրում են նաև թաղամասային պոլիկլինիկաները:

Բուժմասն ապահովված է նաև անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ:

Հաստատության բուժանձնակազմի հավաստմամբ՝ երեխաները հիմնականում հիվանդանում են վիրուսային հիվանդություններով՝ ջրծաղիկ, գրիպ, կարմրուկ: Այդ հիվանդությունների հետ կապված առանձնացվել է երեխաների օճառը, մինչ այդ խմբին էր 2 օճառ հասնում, որից հետո երեխաներից յուրաքանչյուրին մեկական օճառ է տրվում: Ջրծաղիկով հիվանդ երեխաները դիսպանսեր բուժում են ստանում:

Երեխաները նշում են, որ առողջական խնդիրների դեպքում /գլխացավ, փորացավ, լուծ և այլն/ ցանկացած ժամի դիմում են բուժքրոջը, որը միշտ տեղում է լինում, նաև գիշերվա ժամերին:

Բժիշկը բուժքրոջ հետ պարբերաբար /հիմնականում երեքշաբթի, չորեքշաբթի օրերին/ այցելում է երեխաների սենյակները, զննության ենթարկում նրանց:

Առողջության հետ խնդիրներ ունեցող երեխաները պառկում են առանձնացված հիվանդասենյակներում: Եթե հիվանդների թիվը մեծ է լինում, ապա նրանց համար 1 ննջասենյակ է հատկացվում:

Բժիշկը օրը մի քանի անգամ ստուգում է հիվանդների վիճակը:

Անհրաժեշտության դեպքում, երբ հնարավոր չէ ճիշտ ախտորոշել հիվանդությունը կամ հաստատությունում անհրաժեշտ բուժում ապահովել, հաստատությունը իր միջոցներով երեխային տեղափոխում է հիվանդանոց: Հիվանդանոց տեղափոխում են նաև վարակիչ հիվանդությունների կամ կոտրվածքների դեպքում:

Հիվանդանոցում գտնվելու ընթացքում հաստատությունը օրական 3 անգամ ապահովում է հիվանդ երեխայի սնունդը:

Հիվանդ լինելու կամ հիվանդանոց տեղափոխելու դեպքում զանգով տեղեկացնում են երեխայի ծնողներին:

Երեխաները նշում են, որ երբեմն հիվանդ երեխաներին տուն են ուղարկում:

Ըստ բուժանձնակազմի՝ ինֆեկցիոն հիվանդ երեխաներին իրավունք չունեն գիշերօթիկում պահել, այդ երեխաներին տուն են ուղարկում, բայց եթե տանը համապատասխան պայմաններ չեն լինում երեխային խնամելու համար, նման երեխաների համար ստիպված գիշերօթիկում են պայմաններ ստեղծում:

Բուժանձնակազմի կողմից երեխաների հետ պարբերաբար զրույցներ են կազմակերպվում հետևյալ թեմաներով.

- անձնական հիգիենա
- աղիքային ինֆեկցիա
- մարսողություն
- շնչառական հիվանդություններ
- առաջին բուժօգնությունը վնասվածքների ժամանակ
- գրիպի կանխարգելում
- ծխախոտի վնասակար ազդեցություն
- ալկոհոլի վնասակար ազդեցություն
- թմրամոլություն, ՁԻԱՀ

Կազմակերպվող զրույցներին մասնակցում են նաև հոգեբանը և դաստիարակները:

Մտահոգիչ է այն, որ

- *գիշերօթիկ հաստատության բժշկի կարծիքով պրակտիկայում խնդիրներ են առաջանում այն դեպքերում, երբ օրինակ՝ մարզի մյուս քաղաքներից իրենց մոտ ապրող երեխաներին պոլիկլինիկա ուղարկելու անհրաժեշտություն է*

առաջանում: Քանի որ երեխաների բժշկական քարտերը գտնվում են իրենց հաշվառման վայրի պոլիկլինիկայում, Վանաձորի պոլիկլինիկաները չեն կարող անվճար սպասարկել տվյալ երեխաներին:

Առաջարկություն

- *գիշերօթիկ հաստատությունում գտնվելու ընթացքում երեխաների բուժսպասարկման ամբողջ պատասխանատվությունը և դրան համապատասխան պետության կողմից տրամադրվող օգնությունը հանձնել գիշերօթիկ հաստատությանը:*

ՄԱՍ 3

Գլուխ 1

Եզրակացություն փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ

«Վանաձոր» ՔԿՀ-ում և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի արդյունքները բացահայտում են նշված հաստատություններում առկա խնդիրները: Ընդհանուր առմամբ այդ խնդիրները կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝

- օրենսդրական խնդիրներ
- պրակտիկայում առկա խնդիրներ:

Թեև նշված հաստատություններում ծագող իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը ենթարկվում է շարունակական փոփոխությունների և համապատասխանեցվում է միջազգային չափանիշներին, այնուամենայնիվ առկա են որոշակի բացեր: Մասնավորապես՝ օրենսդրությամբ սահմանված չեն նշված հաստատություններում գտնվող անձանց վարքագծի համապարտադիր կանոններ, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության և խրախուսանքի միջոցներ, ինչի պատճառով էլ «Վանաձոր» ՔԿՀ-ում, ինչպես նաև Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում գտնվող անձանց խրախուսանքը և նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության գործընթացը համակարգված բնույթ չի կրում:

Պրակտիկայում առկա խնդիրները հիմնականում համակարգային բնույթ են կրում և ծագում են պետության կողմից օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան ֆինանսական հատկացումներ չիրականացնելու պատճառով: Մասնավորապես՝

«Վանաձոր» ՔԿՀ-ում խցային պայմանները հնարավորություն չեն ընձեռնում սննդի և անձնական հիգիենայի պարագաների առանձին պահելու համար, ՔԿՀ-ում հատկացվող անձնական հիգիենայի պարագաների որակը շատ ցածր է: «Վանաձոր» ՔԿՀ-ն ապահովված չէ առաջին բուժօգնության համար նախատեսված պարագաներով՝ պինցետներ, ժգուտներ, ասեղներ, էլաստիկ թելեր, ատամնաբուժական աքցաններ, ռենտգեն ապարատ: «Վանաձոր» ՔԿՀ-ում չի ապահովվում սննդի կալորիականությունը և բազմազանությունը:

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունն ապահովված չէ կենտրոնացված ջեռուցման համակարգով, պետբյուջեից հատկացվող միջոցները բավարար չեն հաստատության շենքային պայմանները բարելավելու, մասնավորապես՝ ճաշարանի մեծացման և լողասենյակների ավելացման համար:

Միևնույն ժամանակ հատկացվող միջոցները բավարար չեն բոլոր երեխաներին հագուստով ապահովելու համար, գիշերօթիկ հաստատությունում նախատեսված չեն երեխաների դասապատրաստումը նախապատրաստող համապատասխան հաստիքներ, ինչը նվազեցնում է երեխաների առաջադիմության աստիճանը:

Գլուխ 2

Առաջարկություններ փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի բարելավման վերաբերյալ

Պետությունը ստանձնել է նշված հաստատություններում գտնվող անձանց խնամքն ու պաշտպանությունը և պարբերաբար միջոցներ է ձեռնարկում այդ հաստատությունների պայմանների բարելավման համար: Այնուամենայնիվ, իրականացված մոնիթորինգների արդյունքները վկայում են, որ անհրաժեշտ են լրացուցիչ միջոցառումներ իրականացնել մարդու իրավունքների վիճակն ու նշված հաստատություններում կենսապայմանները բարելավելու համար:

Մտահոգություն առաջացնող խնդիրների լուծման և նշված հաստատություններում մարդու իրավունքների վիճակի բարելավման համար կազմակերպությունը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ.

- խցերում տեղադրել 2 տեսակի պահարաններ՝ սննդի և անհատական հիգիենայի պարագաների պահման համար, պատժախցերը կահավորել պահարանով, ընդհանուր տիպի մահճակալով, աթոռով և սեղանով
- ապահովել քրեակատարողական հիմնարկի սննդի բազմազանությունն ու կալորիականությունը
- քրեակատարողական հիմնարկում ազատազրկվածներին ապահովել բարձր որակի սանիտարահիգիենիկ պարագաներով՝ օճառ, ատամի խոզանակ
- քրեակատարողական հիմնարկի երկարատև տեսակցությունների սենյակներն ապահովել սառնարանով, էլեկտրական սալիկով, առանձին լոգասենյակով
- «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկին ապահովել պինցետներով, ժգուտներով, ասեղներով, էլաստիկ թելերով, ատամնաբուժական աքցաններով, ռենտգեն ապարատով
- սահմանել խրախուսելի վարքագծի ցանկ և դրա մասին իրազեկել բոլոր ազատազրկվածներին
- ազատազրկվածների իրավունքների և պարտականությունների իրականացումն ապահովելու համար կազմել ազատազրկվածների իրավունքների և պարտականությունների հուշաթերթիկ, և այն փակցնել խցերում:

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատության վերաբերյալ.

- գիշերօթիկ հաստատության ֆինանսավորման շրջանակներում նախատեսել գիշերօթիկ հաստատությունը կենտրոնացված ջեռուցման համակարգով ապահովելու, ինչպես նաև բոլոր ննջասենյակները էլեկտրական օդափոխիչներով ապահովելու ծախսեր
- գիշերօթիկ հաստատությանն ապահովել ճաշարանում համապատասխան շենքային փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով
- գիշերօթիկ հաստատությանն ապահովել լողասենյակների թիվն ավելացնելու համար անհրաժեշտ միջոցներով, նոր լվացքի մեքենաներով, երեխաների քանակին և տարիքին համապատասխան հագուստով
- գիշերօթիկ հաստատությունում երեխաների դասապատրաստման համար

ունենալ ժամավճարով աշխատող մանկավարժներ, և դասապատրաստումն իրականացնել ըստ առարկաների բաժանված խմբերով

- հաստատության աշխատակիցների համար կազմակերպել երեխաների իրավունքների, երեխաների հետ աշխատանքի և դաստիարակության մասնագիտական դասընթացներ
- սահմանել երեխաների վարքագծի համապարտադիր կանոնների, երեխաների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների և խրախուսանքի միասնական կանոններ
- գիշերօթիկ հաստատությունում գտնվելու ընթացքում երեխաների բուժսպասարկման ամբողջ պատասխանատվությունը և դրան համապատասխան պետության կողմից տրամադրվող օգնությունը հանձնել գիշերօթիկ հաստատությանը:

ՄԱՍ 4

Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը և Վանաձորի մանկատանը 2007 թվականին իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկումներ

2008 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակում իրականացվել են Վանաձորի ծերատանը, Վանաձորի մանկատանը և Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում 2007 թվականի ընթացքում իրականացված մոնիթորինգի արդյունքների շուրջ աշխատանքային քննարկումներ:

Քննարկումներին մասնակցել են ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, հասարակական կազմակերպությունների, Լոռու մարզի երեխաների իրավունքների պաշտպանության, առողջապահության բաժնի, Հայ օգնության ֆոնդի, Վանաձորի ծերատան, Վանաձորի մանկատան, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի աշխատակիցները:

Վանաձորի ծերատանը, Վանաձորի մանկատանը և Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում իրականացված մոնիթորինգների շուրջ կայացած առաջին աշխատանքային քննարկումների ժամանակ ներկայացվել են մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը, տվյալ հաստատությունում վեր հանված մարդու իրավունքների խնդիրները:

Ներկայացված խնդիրների շուրջ տրվել են պարզաբանումներ, կայացել է երկխոսություն խնդիրների լուծման շուրջ:

Հաջորդ քննարկումներին մասնակիցները աշխատել են վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների փաթեթի կազմման շուրջ: Նշված հաստատությունների ներկայացուցիչները սեփական առաջարկություններ են ներկայացրել որոշակի խնդիրների հաղթահարման շուրջ: Քննարկումների արդյունքում համատեղ մշակվել են առաջարկությունների երեք փաթեթներ՝ ուղղված Վանաձորի ծերատանը, Վանաձորի մանկատանը և Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում մոնիթորինգի արդյունքում վեր հանված խնդիրների լուծմանը:

Գլուխ 1

Վանաձորի մանկատանն իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկման հետևանքով առանձնացված համակարգային և հաստատությանը հատուկ խնդիրներ և դրանց լուծման կապակցությամբ առաջարկություններ

- Մանկատանն ապրող երեխաներին առանց ծնողական իրավունքի երեխայի իրավական կարգավիճակի սահմանման խոչընդոտը

Խնդիրը կայանում է նրանում, որ մանկատանն ապրող երեխաների համար առանց ծնողական իրավունքի մնացած երեխայի իրավական կարգավիճակ սահմանելիս Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինը խոչընդոտներ է ստեղծում:

Համապատասխան իրավական կարգավիճակի բացակայության դեպքում մանկատանն ապրող երեխաները չեն օգտվում պետության կողմից տրվող սոցիալական աջակցությունից՝ անվճար բուհական կրթություն, բուժսպասարկում և այլն: Թեև ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ մանկատանը տեղավորվում են այն երեխաները, որոնց ծնողները կամ միակ ծնողը մահացել է/են, զրկված են ծնողական իրավունքներից, ինքնակամ հրաժարվել են ծնողական պարտականությունների կատարումից, անհայտ են, դատարանի կողմից ճանաչվել են անգործունակ, սահմանափակ գործունակ և այլն: Այսինքն՝ մանկատանն ապրող երեխաներն արդեն համապատասխանում են այն պայմաններին, որի դեպքում նրանց կարելի է տալ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ: Վանաձորի մանկատան իրավաբանը բազմիցս դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն խնդիրն այդպես էլ չի կարգավորվել:

Այս կապակցությամբ մասնակիցները որոշել են առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարությանը՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության թիվ 381-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու համար: Մասնավորապես՝ անհրաժեշտ է կա՛մ մանկատանն ապրող երեխաներին միանգամից տալ առանց ծնողական իրավունքի մնացած երեխայի կարգավիճակ, կա՛մ մանկատան բոլոր սաներին տրամադրել պետության կողմից տրվող սոցիալական աջակցությունը:

- 18 տարին լրանալուց և մանկատնից դուրս գալուց հետո երեխաների բնակարանային խնդրի լուծման հնարավորության բացակայությունը

Այս առումով ևս անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություն իրականացնել, մասնավորապես՝ պետական հովանավորության տակ վերցնել այն երեխաների բնակարանային սեփականությունը, որոնք մինչև մանկատուն տեղափոխվելը բնակարան են ունեցել: Իսկ մանկատնից դուրս եկող երեխաների համար անհրաժեշտ է ձևավորել համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդ, որտեղ կբնակեցվեն բնակարան չունեցող մանկատան սաները:

- Մանկատան սաներին տեղում ինքնուրույն կյանքի նախապատրաստելու ծրագրերի բացակայությունը

ՀՀ կառավարության 1324-Ն որոշմամբ սահմանվել են մանկատանն ապրող երեխաների կենսապայմանների նվազագույն չափորոշիչները: Դրանք հիմնականում վե-

րաբերում են մանկատան երեխաների սննդին, հագուստին, կրթությանը և այլն: Այս կապակցությամբ մասնակիցները որոշեցին առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարությանը՝ մանկատներում երեխաներին ինքնուրույն կյանքի նախապատրաստելու ծրագիր կազմելու և իրականացնելու կապակցությամբ: Մասնավորապես՝ աղջիկների համար տնայնագործություն, իսկ տղաներին որոշակի արհեստների պրակտիկ պարտադիր ուսուցանում:

- Վանաձորի մանկատան երեխաների դաստիարակության և կրթության ցածր որակը

Այս խնդիրը պայմանավորված է այն հանգամանքով, որ մանկատանը երեխաների դասապատրաստումն իրականացվում է միաժամանակ՝ մոտ 8-9 երեխայի մասնակցությամբ: Մեկ դաստիարակը միաժամանակ օգնում է տարբեր ուսումնական առարկաներ պատրաստող երեխաներին նույն սենյակում: Մանկատանը դաստիարակ ընդունելու համար պարտադիր է բարձրագույն կրթությունը, սակայն ոչ մասնագիտացումը:

Այս խնդրի լուծման համար մասնակիցները որոշեցին ՀՀ կառավարությանը ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

- մանկատանն ունենալ ժամավճարով աշխատող համապատասխան մանկավարժներ կամ հավելավճարով դպրոցում դպրոցի ուսուցիչների մասնակցությամբ կազմակերպել մանկատան սաների դասապատրաստումը
- մանկատան դաստիարակների հաստիքները բաշխել ըստ մանկավարժական համապատասխան մասնագիտացման:

- Վանաձորի մանկատանը երեխաների նկատմամբ աշխատակազմի վերաբերմունքը

Մասնավորապես՝ մանկատանը սահմանված չեն երեխաների հետ վարվեցողության ընդհանուր կանոններ, երեխաների կողմից առաջարկություններ, բողոքներ ներկայացնելու սահմանված կարգը չի գործում:

Այս կապակցությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել է ձևավորել երեխաներից կազմված խորհուրդ, որի լիազորությունների շրջանակի մեջ կմտնի նաև միջանձնային հարաբերությունների կարգավորմանը մասնակցելու ֆունկցիան:

Գլուխ 2

Վանաձորի ծերատանն իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկման հետևանքով առանձնացված համակարգային և հաստատությանը հատուկ խնդիրներ և դրանց լուծման կապակցությամբ առաջարկություններ

- Վանաձորի ծերատան շենքը հարմարեցված չէ հաշմանդամ անձանց պահանջմունքներին

Ուսումնասիրությունների ժամանակ Վանաձորի ծերատանը 7 տարեցներ հաշմանդամության խումբ ունեին /երկուսն՝ 1-ին խմբի, չորսը՝ 2-րդ խմբի, իսկ մեկը՝ 3-րդ խմբի/, սակայն ծերատան ներքին կառուցվածքը հարմարեցված չէ հաշմանդամ անձանց պահանջմունքներին /շենքը չունի թեքահարթակներ/ և փաստացիորեն սահմանափակված է նրանց տեղաշարժվելու իրավունքը:

Այս կապակցությամբ առաջարկվել է պետությունից պահանջել և ստանալ համապատասխան ֆինանսական միջոցներ՝ հենաշարժողական համակարգի հետ խնդիրներ ունեցող հաշմանդամ տարեցներին համապատասխան ծերատուն տեղափոխելու համար:

- Տարեցների նկատմամբ աշխատակազմի վերաբերմունքը

Վանաձորի ծերատանը հաճախ վեճեր են լինում թե՛ տարեցների, թե՛ տարեցների ու աշխատողների միջև, սակայն ծերատունը չունի միջանձնային խնդիրների կարգավորման մեխանիզմ: Հաստատությունը չունի հոգեբան, իսկ առկա խնդիրների կարգավորումը հիմնականում դրված է տնօրենի վրա: Տնօրենի հավաստմամբ փորձել են տարեցների խուրհուրդ ստեղծել, սակայն այն չի գործել:

Այս կապակցությամբ առաջարկվել է

1. հաստատության ներքին կարգապահական կանոններում հատուկ կետ ավելացնել, համաձայն որի՝ ծերատանը յուրաքանչյուր շաբաթ ժողովներ կկազմակերպվեն աշխատողների և տարեցների մասնակցությամբ: Ժողովների ժամանակ հնարավորություն կստեղծվի քննարկել հուզող հարցերը, ներկայացնել առաջարկություններ՝ առկա խնդիրների լուծման ուղղությամբ:
2. Դասընթացներ կազմակերպել հաստատության բոլոր աշխատողների /նաև սանիտարների/ համար՝ տարեցների նկատմամբ վերաբերմունքի թեմայով:

- Վանաձորի ծերատան որոշ խնամառուներ բուժման համար անհրաժեշտ դեղորայքը գնում եմ իրենց միջոցներով

Առաջարկվել է ավելացնել Վանաձորի ծերատան բյուջեից դեղորայքի ձեռքբերմանը հատկացվող գումարի չափը՝ հաշմանդամ տարեցներին անվճար դեղորայք տրամադրելու համար:

- Վանաձորի ծերատան խնամառուները զրկված են սոցիալ-հոգեբանական ծառայությունից

ՀՀ կառավարության կողմից սահմանված չափորոշիչների համաձայն՝ սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքը նախատեսված է յուրաքանչյուր 50 խնամվողի համար: Վանաձորի ծերատունը, որի խնամառուների թիվը պակաս է 50-ից, փաստացիորեն զրկված է սոցիալ-հոգեբանական ծառայություններից:

Առաջարկվել է դիմել ՀՀ կառավարություն՝ ՀՀ կառավարության 31.05.2007 թ-ի թիվ 730 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկով, որպեսզի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունները ունենան սոցիալական աշխատողի և հոգեբանի առնվազն մեկ հաստիք:

Գլուխ 3

Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում իրականացված մոնիթորինգի արդյունքների քննարկման հետևանքով առանձնացված համակարգային և հաստատությանը հատուկ խնդիրներ և դրանց լուծման կապակցությամբ առաջարկություններ

- Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում ապահովված չէ հոգեկան խանգարումով տառապող անձանց սննդի կալորիականությունը, բազմազանությունը և հավելյալ սննդի հնարավորությունը

Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց տրամադրվող սննդի գումարը կազմում է հոգեկան խանգարումով տառապող անձանց 24 օրվա համար հատկացվող ընդհանուր գումարի տասը տոկոսը՝ մոտ 450 դրամ: Այս գումարը, սակայն, բավարար չէ՝ ապահովելու հոգեկան խանգարումով տառապող անձանց տրամադրվող սննդի կալորիականությունը, բազմազանությունը և հավելյալ սննդի հնարավորությունը:

Այս կապակցությամբ առաջարկվել է դիմել ՀՀ կառավարությանը՝ ավելացնելու Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում յուրաքանչյուր անձի բուժման համար հատկացվող գումարը:

- Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերը ապահովված չէ անձնական հիգիենայի պայմաններով, մասնավորապես՝ լոգարանը ունի վերանորոգման կարիք

Այս կապակցությամբ առաջարկվել է դիմել ՀՀ կառավարությանը Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, մասնավորապես՝ լոգարանի վերանորոգման համար պետական բյուջեից գումար հատկացնելու խնդրանքով:

- Անբավարար է Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի սանիտարների թիվը

Յուրաքանչյուր հերթափոխի հոգեկան խանգարումով տառապող անձանց հետ աշխատում են 2 սանիտար՝ 1 կին և 1 տղամարդ սանիտար: Միջազգային չափորոշիչների համաձայն՝ դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց համար սահմանված օրվա ռեժիմով նախատեսվում է ամենօրյա զբոսանք հոգեկան խանգարումով տառապող անձանց համար, նրանց անհրաժեշտ է ուղեկցել զբոսանքի ժամանակ, միևնույն ժամանակ անհրաժեշտ է հետևել բաժանմունքում մնացող հոգեկան խանգարումով տառապող անձանց: Այսինքն՝ սանիտարի նոր հաստիքի անհրաժեշտություն կա:

Այս կապակցությամբ առաջարկվել է դիմել ՀՀ կառավարությանը՝ սանիտարի նոր հաստիքի ավելացման համար:

- Աշխատողների վերապատրաստման դասընթացների սահմանափակվածությունը

Կրթության ազգային ինստիտուտը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ միայն բժիշկների և բուժակների համար, իսկ սանիտարների համար վերա-

պատրաստման դասընթացներ չեն կազմակերպվում: Բուժակների և բժիշկների համար կազմակերպվող դասընթացների ժամանակ բժիշկներն ու բուժակները իրենք են հոգում իրենց ճանապարհածախսը, սննդի և գիշերելու ծախսերը:

Այս խնդրի լուծման կապակցությամբ առաջարկվել է դիմել ՀՀ կառավարությանը՝ պետական միջոցներով Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի սանիտարների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու, վերապատրաստման դասընթացների ճանապարհածախսը, սննդի և գիշերելու ծախսերը հոգալու խնդրանքով:

- Դիսպանսերին անհրաժեշտ քանակի և որակի դեղորայքով ապահովելու հարցը

Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում դեղերի ցանկի ընդլայնման անհրաժեշտություն է զգացվում՝ որակական և քանակական առումով: Դա հնարավորություն կտա ավելի արդյունավետ բուժում իրականացնել ինչպես հիվանդանոցային, այնպես էլ արտահիվանդանոցային հոգեկան խանգարումով տառապող անձանց նկատմամբ:

Առաջարկվել է դիմել ՀՀ կառավարությանը Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում բուժվող անձանց տրամադրվող դեղորայքի համար հատկացվող գումարի չափը ավելացնելու խնդրանքով:

ՄԱՍ 5

Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքներ

2008-2009 թթ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Սպիտակ քաղաքներում տրամադրվել է անվճար իրավական խորհրդատվություն հետևյալ իրավունքների վերաբերյալ. սեփականության, արդար դատաքննության, աշխատանքային, վնասի փոխհատուցման, քաղաքացիական, տեղեկատվության, սոցիալական աջակցության, պետական ակտի բողոքարկման, կրթության, զորակոչի, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող այլ վերաբերմունքից պաշտպանվելու և այլ իրավունքներ: Իրավական խորհրդատվությունը տրամադրվել է երկու մասով՝ տեղեկատվություն այս կամ այն իրավունքի վերաբերյալ և անմիջական իրավական աջակցություն խախտված իրավունքների վերականգնման մասով:

2008 թ. իրավախորհրդատվություն է տրամադրվել մոտ 140 քաղաքացիների:

Խախտված իրավունքների վերականգնման մասով նախադեպային են հանդիսացել հետևյալ գործերը.

Ալավերդի

Քաղաքացի Ա.Մ.-ն և այլոք /մոտ 70 քաղաքացիներ/ 2007 թ. գարնանը աշխատանքային պայմանագրով աշխատանքի են անցել «ՋԻ ԷՄ Մաղարո» ՓԲԸ-ում: Սակայն «ՋԻ ԷՄ Մաղարո» ՓԲԸ-ն Ա.Մ.-ի և մոտ 50 աշխատակիցների աշխատավարձերը չի վճարել, ավելին՝ աշխատանքի ընդունելուց մոտ 6 ամիս անց հավաքել է աշխատողների աշխատանքային պայմանագրերը դրանցում որոշակի փոփոխություններ իրականացնելու նպատակով, սակայն այդպես էլ չի վերադարձրել:

2008 թ. մայիսի 22-ին կազմակերպությունը դիմել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալություն՝ «Ջի էմ Մաղարո» ՓԲԸ-ի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի պատասխան գրությամբ պարզվել է, որ ընկերության հիմնադիրը համարվում է Գագիկ Ծառուկյանը և որ ընկերության լուծարման վերաբերյալ պետական ռեգիստրում գրառում չի կատարվել:

2008 թ. հուլիսի 10-ին կազմակերպությունը դիմում է ներկայացրել ՀՀ աշխատանքի պետական տեսչություն «ՋԻ ԷՄ Մաղարո» ՓԲԸ-ի աշխատակիցների աշխատանքային իրավունքների պաշպանության հարցով: Կազմակերպության կողմից ներկայացված հարցի կապակցությամբ աշխատանքի պետական տեսչությունը 2008 թ. օգոստոսի 26-ին պատասխանել է, որ իրականացնում է վարույթ և արդյունքների մասին կազմակերպությանը կտեղեկացնի լրացուցիչ:

Քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշպանության հարցում աջակցելու խնդրանքով մեր կազմակերպությունը 2008 թ. հոկտեմբերի 29-ին դիմել է ՀՀ վարչապետին՝ հույս հայտնելով, որ առնվազն «Ջի էմ Մաղարո» ՓԲԸ-ի հիմնադիրը կարող է աջակցել ՓԲԸ-ի տնօրենին հայտնաբերելու, աշխատակիցների աշխատավարձերի պարտքերը մարելու հարցում:

Կազմակերպությունը ՀՀ կառավարությունից ոչ մի պատասխան չի ստացել, իսկ այնուհետև երբ փորձել է հեռախոսով տեղեկանալ գրության ընթացքի մասին, ՀՀ կառավարության աշխատակազմից հայտնել են, որ նման գրություն չի ստացել: Այդ իսկ

պատճառով 2008թ. դեկտեմբերի 6-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կրկին դիմել է ՀՀ կառավարությանը՝ Ալավերդի քաղաքի մի խումբ բնակիչների շահերի պաշտպանությանն աջակցելու հարցով:

Այս անգամ ևս ՀՀ կառավարության կողմից որևէ պատասխան չի տրվել: 2009 թ. փետրվարի 10-ին Լոռու մարզպետարանից բանավոր տեղեկացվել է, որ ՀՀ կառավարությունը գրությամբ ներկայացված խնդրի լուծումը հանձնարարել է Լոռու մարզպետարանին: Միաժամանակ մարզպետարանից տեղեկացրել են, որ իրականացվել են ուսումնասիրություններ, պարզել, որ «Չի էմ Մաղարո» ՓԲԸ-ն գրանցված է Երևանում, որտեղ էլ իրականացնում է իր հարկային պարտավորությունները: Փաստացի նույնիսկ տարածքային տեղակայման առումով խնդրի կարգավորումը Լոռու մարզպետարանի կողմից հնարավոր չէ:

Փաստորեն, ՀՀ կառավարությունը բարձրացված խնդրի լուծմանն աջակցելու փոխարեն այն հանձնել է մի մարմնի, որի լիազորությունների շրջանակը նախատեսված չէ խնդրի կարգավորման համար:

Ներկայումս /հունիս, 2009 թվական/ «Չի էմ Մաղարո» ՓԲԸ-ի նախկին աշխատակիցների իրավունքների պաշտպանությունն ընթացքի մեջ է:

Ստեփանավան

2003 թ. սեպտեմբերի 22-ին Ստեփանավանի քաղաքապետ Սարգիս Ղարաքեշիշյանը որոշում է կայացրել /22.09.2003 թ. թիվ 294 որոշում/ է. Թ.-ին՝ որպես 6 անձից բաղկացած ընտանիք 4 սենյականոց բնակարան հատկացնելու մասին:

Իր ընտանիքին բնակարան հատկացնելու մասին քաղաքապետի այս որոշմանը է. Թ.-ն ծանոթացել է շատ ավելի ուշ, երբ իր անվամբ հատկացված բնակարանն արդեն վաճառվել է:

Իրականում աղետի հետևանքով բնակարան կորցրած ընտանիքների հերթացուցակում գրանցված է եղել միայն է. Թ.-ն: է. Թ.-ի ընտանիքին հատկացված այդ բնակարանն այնուհետև սեփականաշնորհվել է իբր նրա ընտանիքի անդամ հանդիսացող մեկ այլ անձի անունով ու վաճառվել նրա կողմից:

Իրեն աջակցելու խնդրանքով է. Թ.-ն 2008 թ. ապրիլին դիմել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի Ստեփանավանի ներկայացուցչություն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ստանձնել է է.Թ.-ի իրավունքների պաշտպանությունը և դեպքի կապակցությամբ հաղորդում ուղարկել Լոռու մարզի դատախազություն /15.05.2008 թ. ԵՊ 311 գրություն/:

2008 թ. հունիսի 14-ին Լոռու մարզի դատախազությունը 14.06.2008 թ. 2/96-08 գրությամբ տեղեկացրել է, որ գործը հանձնվել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժին անհրաժեշտ նյութեր նախապատրաստելու և ընթացք տալու համար:

Արդյունքում՝ ՀՀ Լոռու մարզի դատախազության 10.07.2008 թ. որոշմամբ Ստեփանավանի քաղաքապետի դեմ հարուցվել է քրեական գործ՝ պաշտոնական լիազորությունների չարաշահման հիմքով /Լոռու մարզի 10.07.2008 թ. 532-004քր-08 գրություն/:

Տաշիր

2008 թ. ամռանը քաղաքացի Բ. Տ.-ին ծեծի են ենթարկել: Նա դիմել է ոստիկանութ-

յան Տաշիրի բաժին, սակայն համապատասխան միջոցառումներ չեն ձեռնարկվել: Առողջությանը հասցված վնասի պատճառով Բ. Տ.-ն երկու անգամ վիրահատվել է, սակայն ոստիկանությունը քրեական գործ չի հարուցել:

Ոստիկանության Տաշիրի բաժնի աշխատակիցների գործողությունները բողոքարկվել է Լոռու մարզի դատախազությունում, սակայն նորից ոչինչ չի ձեռնարկվել:

Կազմակերպությունը ստանձնել է ծեծի ենթարկված քաղաքացու շահերի պաշտպանությունը, պատրաստվել է հաղորդում `ուղղված Լոռու մարզի դատախազությանը՝ ոստիկանության Տաշիրի աշխատակիցների անգործությունը վերացնելու համար:

Չեռնարկված միջոցառումների արդյունքում Լոռու մարզի դատախազության կողմից հարուցվել է քրեական գործ:

Վանաձոր

2008 թ-ի դեկտեմբերի 5-ին՝ առավոտյան ժամը 09:00-ին, Վանաձորի ոստիկանության Բազումի բաժանմունքի երեք աշխատակիցների կողմից Լոռու մարզի Գուգարք գյուղի բնակիչ Մ. Հ.-ն բերման է ենթարկվել ոստիկանության Բազումի բաժանմունք:

Մ. Հ.-ն 14 ժամ շարունակ գտնվել է ոստիկանության Բազումի բաժանմունքում, որի ընթացքում փորձել են Մ. Հ.-ից ցուցմունքներ ստանալ մոտ օրերին Վանաձոր քաղաքում կատարված սպանության վերաբերյալ: Մ. Հ.-ն շարունակ պնդել է, որ ինքը որևէ տեղեկություն չունի կատարված սպանության վերաբերյալ:

Հարցաքննության ողջ ընթացքում Մ. Հ.-ին չեն թույլատրել ո՛չ ծխել, ո՛չ ուտել և ո՛չ էլ ջուր խմել: Նա քննիչից մի քանի անգամ խնդրել է թույլ տալ զուգարան գնալ, սակայն նրան միշտ պատասխանել են, որ դրա ժամանակը չէ:

Որոշ ժամանակ անց Մ. Հ.-ն հայտնել է, որ իրեն վատ է զգում և խնդրել է թույլատրել, որպեսզի զանգահարի հորը փաստաբան ներգրավելու համար: Քննիչը արգելել է՝ ավելացնելով. «Հարցերիս կպատասխանես, հետո կտեսնենք»:

Հոգեբանական ճնշումների ազդեցության տակ Մ. Հ.-ն ստիպված ստել է և հայտարարել, որ ինքը սպանության օրը եղել է հանցագործության մեջ կասկածվող Դ.-ի հետ, որից հետո կրկին Մ. Հ.-ից սկսել են ցուցմունքներ վերցնել:

Ըստ Մ. Հ.-ի՝ արդեն ժամը 18:00-ն էր, երբ ավարտել է ցուցմունք գրելը, որից հետո նրան մեքենայով տեղափոխել են այն շենքը, որտեղ տեղի էր ունեցել դանակահարությունը: Տեղազննությունից հետո նրան կրկին տարել են ոստիկանության բաժին՝ առերեսման:

Մ. Հ.-ն Վանաձորի ոստիկանության շենքից դուրս է եկել 2008 թ-ի դեկտեմբերի 5-ին՝ ժամը 23:10-ին:

Այսպիսով՝

1. Մ. Հ.-ն 14 ժամ շարունակ գտնվել է ապօրինի անազատության մեջ
2. Նա պահվել է անմարդկային, մարդու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում
3. Մ. Հ.-ն ենթարկվել է հոգեբանական ճնշումների, որոնց ազդեցության տակ հարկադրված է եղել կեղծ ցուցմունք տալ:

Դեպքի կապակցությամբ կազմակերպությունը 2008 թ-ի դեկտեմբերի 8-ին հաղորդում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, պատճենը՝ Լոռու մարզի դատախազություն՝ պահանջելով քրեական պատասխանատվության ենթարկել մարդու իրա-

վունքները կոպտորեն խախտած իրավապահ մարմնի ներկայացուցիչներին:

Նշանակվել է ծառայողական քննություն, ինչի արդյունքում որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Ներկայումս /հունիս, 2009 թ./ կազմակերպությունը նախապատրաստվում է դատական կարգով բողոքարկել քրեական գործ չհարուցելու մասին որոշումը:

Սպիտակ

2002 թ. ՀՀ կառավարության «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշման համաձայն՝ քաղաքացի Ա. Խ.-ն դիմում է ներկայացրել Սպիտակ համայնքի ղեկավարին ընտանիքը բնակարանով ապահովելու խնդրանքով: Դիմումն ընդունվել է համայնքի ղեկավարի կողմից համապատասխան մակագրությամբ, որի մեկ օրինակը տրամադրվել է նրան:

2002 թ-ից դիմումի վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից Ա. Խ.-ն որևէ պատասխան չի ստացել:

2005 թ. Ա. Խ.-ն դիմել է ՀՀ նախագահի 06.06.2005 թ. ՆԿ-128 կարգադրությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին բնակարան հատկացնելու հարցի վերաբերյալ դիմումին համապատասխան ընթացք տալու համար:

Միջգերատեսչական հանձնաժողովի պատասխան գրությամբ պարզվել է, որ բնակարանային գործում հիմք փաստաթղթերի բացակայության և ոչ լիարժեքության պատճառով Ա. Խ.-ի ընտանիքը հանվել է բնակարանների ստացման հերթացուցակից:

2008 թ. Սպիտակի քաղաքապետարանը ևս տեղեկացրել է, որ բնակարանների ստացման հերթացուցակից հանման պատճառ է հանդիսացել հիմք փաստաթղթերի ոչ լիարժեքությունը, մասնավորապես՝ գործում բացակայում է երկրաշարժի հետևանքով կորցրած պետական բնակարան ունենալու փաստը հաստատող փաստաթուղթը: Մինչդեռ, Ա. Խ.-ն 2002 թ. ներկայացրած դիմումին կից ներկայացրել է հիմք փաստաթղթերի ամբող փաթեթը, ինչը հաստատել է նաև համայնքի ղեկավարը դիմումը վերցնելու պահին:

Կազմակերպության կողմից հայցադիմում է ներկայացվել վարչական դատարան՝ Սպիտակի քաղաքապետարանի որոշումը վերացնելու և քաղաքացի Ա. Խ.-ին բնակարանի ստացման հերթացուցակում վերականգնելու պահանջով:

Ներկայումս /հունիս, 2009 թ./ դեռևս ընթանում է դատաքննություն:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատությունում իրականացված մոնիթորինգի, Լոռու մարզի 5 քաղաքներում տրամադրված իրավախորհրդատվության արդյունքները

ՄԱՍ 6

2008 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների դիտորդության արդյունքներ

ՀՀ նախագահական ընտրությունները կայացել են 2008 թ. փետրվարի 19-ին

Հայաստանի Հանրապետության նախագահն ընտրվում է բացարձակ մեծամասնական ընտրակարգով: Երկու և ավելի թեկնածու քվեարկվելու դեպքում, եթե նրանցից ոչ մեկին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ, ապա քվեարկության օրվանից 14 օր հետո անց է կացվում հանրապետության նախագահի ընտրության երկրորդ փուլ: Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ ինքնառաջադրմամբ:

Նախագահական ընտրությունների ժամանակ հանրապետության ողջ տարածքը համարվում էր մեկ մեծամասնական ընտրատարածք: 2008 թ. նախագահական ընտրությունների կազմակերպման և իրականացման համար հանրապետության ողջ տարածքում ձևավորվել էր 41 ընտրատարածք, 1923 ընտրական տեղամաս:

ՀՀ նախագահի պաշտոնի համար թեկնածություն էր առաջադրել Հայաստանի Հանրապետության 9 քաղաքացի.

1. Արթուր Վահանի Բաղդասարյան	Օրինաց երկիր կուսակցություն
2. Արտաշես Մամիկոնի Գեղամյան	Ազգային միաբանություն կուսակցություն
3. Տիգրան Կարապետի Կարապետյան	Ժողովրդական կուսակցություն
4. Արամ Սերգեյի Հարությունյան	Ազգային համաձայնություն կուսակցություն
5. Վահան Էդուարդի Հովհաննիսյան	Հայ հեղափոխական դաշնակցություն
6. Արման Վարդանի Մելիքյան	Ինքնառաջադրում
7. Սերժ Ազատի Սարգսյան	Հայաստանի հանրապետական կուսակցություն
8. Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյան	Ինքնառաջադրում
9. Վազգեն Միքայելի Մանուկյան	Ազգային ժողովրդավարական միություն կուսակցություն

Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից առաջադրված թեկնածուն ՀՀ վարչապետն էր և նախընտրական քարոզչության ողջ ընթացքում շարունակեց իր պաշտոնավարումը:

2008 թ. նախագահական ընտրություններում դիտորդություն իրականացնելու նպատակով կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցվել էր 39 կազմակերպություն, 14.823՝ տեղական դիտորդ: ՀՀ կառավարության հրավերով դիտորդական առաքելություն են իրականացրել նաև 6 միջազգային կազմակերպություններ:

Միջազգային կազմակերպությունների կողմից ընտրությունները գնահատվում են՝ ելնելով ԵԱՀԿ-ի և Եվրախորհրդի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորություններից, ինչպես նաև ժողովրդավարական ընտրություն-

ների անցկացման չափանիշներից և ազգային օրենսդրությունից: Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող դիտորդությունը, սակայն, հիմնականում ձևական բնույթ է կրում, ինչն էլ ուղղակիորեն արտահայտվում է նրանց գնահատականներում: Միջազգային դիտորդների գնահատականներից դուրս է մնում ընտրությունների օրենսդրական հնարավորությունների օգտագործման համար կիրառվող մեխանիզմների կամ գործողությունների իրական բովանդակությունը: Ընտրական գործընթացները գնահատելիս դիտորդների գնահատականներում քիչ տեղ է զբաղեցնում դրանց ազդեցության վերլուծությունն ընտրական գործընթացների և դրանց վերջնական արդյունքների վերաբերյալ:

2008 թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ դիտորդական առաքելության դիտորդների գնահատականում մասնավորապես նշվել է. «ՀՀ նախագահի փետրվարի 19-ի ընտրությունները մեծապես անցկացվեցին ԵԱՀԿ-ի և Եվրախորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և չափանիշների համաձայն»: Թեև ԵԱՀԿ դիտորդական առաքելության զեկույցն իր մեջ ներառում է նաև դիտորդների կողմից նախընտրական քարոզչության և քվեարկության օրը դիտորդների կողմից հայտնաբերած մի շարք էական խախտումներ:

Տեղական դիտորդների հիմնական մասի կողմից ընտրությունների դիտարկումն ու դրանց արդյունքների վերաբերյալ գնահատականներն ընդհանուր առմամբ արտահայտում են ընտրություններում հաղթող թեկնածուների շահերը: 2008 թ. նախագահական ընտրություններում «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդները, /այս կազմակերպությունը նախագահական ընտրությունների ժամանակ ԿՀԸ-ի կողմից հավատարմագրել էր շուրջ 4010 դիտորդ/ հիմնականում հանդիսացել են Հայաստանի հանրապետական կուսակցության անդամներ՝ քվեարկության ընթացում իրենց գործողություններով սատարելով նույն կուսակցության առաջադրած թեկնածուի վստահված անձանց կամ հանձնաժողովի անդամներին:

Տեղական դիտորդների ցանկում բացառություն են կազմում այն եզակի կազմակերպությունների և դիտորդների գնահատականները, որոնք արտահայտում են լուրջ եզրակացություններ ընտրությունների իրական ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Ընտրական գործընթացների իրավական կարգավորման թերությունները

Նախագահական ընտրությունների կապակցությամբ ծագած իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ ընտրական օրենսգրքով, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներով և իրավական այլ ակտերով:

ՀՀ ընտրական օրենսգրքում 2007 թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի ընտրություններից հետո ՀՀ ընտրական օրենսգրքի 58 հոդվածներում իրականացվել են շուրջ 97 փոփոխություններ: Դրանցից 11-ը վերաբերում է հանրապետության նախագահի ընտրություններին: Մասնավորապես՝ օրենսգրքի 66-րդ հոդվածով՝ նախագահի թեկնածու առաջադրվելու իրավունք են ստացել քաղաքացիները՝ ինքնառաջադրմամբ:

Կրկնակի քվեարկությունը կանխելու նպատակով՝ ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների համաձայն՝ քվեարկությանը մասնակցած քաղաքացու անձնագրի վերջին էջը դրոշմակնքվում է:

ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների համաձայն՝ հստակեցվեց նաև ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող անձանց օգնելու կարգը:

Չնայած փոփոխություններին՝ ՀՀ ընտրական օրենսգրքում առկա են լուրջ թերություններ, որոնք էական ազդեցություն ունեցան նախագահական ընտրությունների արդյունքների վրա: Մասնավորապես՝ ՀՀ ընտրական օրենսգրքով չեն կարգավորվել մինչև նախընտրական քարոզչությունն ընկած ժամանակահատվածը թեկնածուների կամ նրանց համախոհների կողմից իրականացվող գործողությունները, որոնք նախընտրա-

կան քարոզչության բնույթ են կրել: Փաստացի ստացվել է այնպես, որ որոշ թեկնածուներ զբաղվել են նախընտրական քարոզչությամբ դրա մեկնարկից դեռ շատ առաջ: Այս հանգամանքն իր մեծ ազդեցությունն է թողել նախագահական ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

ՀՀ ընտրական օրենսգիրքը չի կարգավորում նաև թեկնածուների նախընտրական շտաբերի գործունեությունը: Իրավական սահմանում չի տրվում թեկնածուների նախընտրական շտաբերի թվի, դրանց գործելաոճի համար: Սա ևս իր բացասական ազդեցությունն է թողել նախընտրական քարոզչության ընթացքի վրա, մասնավորապես՝ ի սկզբանե խախտելով թեկնածուներին հավասար հնարավորություններ տրամադրելու սկզբունքը:

Հաջորդ էական թերությունն այն է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական պարզաբանման համաձայն՝ արգելվեց հրապարակել ընտրողների կողմից ստորագրած ցուցակները, ստանալ դրանց պատճենները: Սրանով փաստացի դիտորդներին հնարավորություն չտրվեց ծանոթանալ քվեարկությանը մասնակցած անձանց ցուցակներին քվեարկությունից հետո, ինչը դիտորդների իրավունքների ուղղակի սահմանափակում էր:

Սրան հակառակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով չեն սահմանափակվում հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները: Մասնավորապես՝ ՀՀ ընտրական օրենսգրքով կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով չի կարգավորվում կամ սահմանափակվում տեղամասային հանձնաժողովի անդամների և վստահված անձանց վարքագիծը կամ գործողությունները քվեարկության եկած քաղաքացիների նկատմամբ: Այն դեպքում, երբ հանձնաժողովների կազմավորման օրենսդրական սկզբունքի համաձայն՝ հանձնաժողովի անդամների մի մասը՝ նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար, հանդիսանում են իշխող կուսակցության ներկայացուցիչներ: Օրենսդրական որոշակի թերություններ կան նաև ընտրական հանձնաժողովների կազմավորման կարգի մեջ: Ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 4-րդ կետն ամբողջությամբ անդրադառնում է այն անձանց շրջանակին, ովքեր չեն կարող հանդիսանալ ընտրական հանձնաժողովի անդամներ: Այդ շրջանակը, սակայն, շատ նեղ է և չի ներառում համայնքապետարանների, մարզպետարանների աշխատակիցներին, թաղամասային հիմնարկների պետերին, դպրոցների տնօրեններին, որոնց լիազորությունների շրջանակը և ազդեցությունը սովորաբար տվյալ տեղամասի ընտրողների վրա բավականին մեծ է: Բացի այդ, այս անձինք ևս հիմնականում հանդիսանում են իշխող կուսակցության անդամներ: Ընտրական գործընթացներում և մասնավորապես 2008 թ. նախագահական ընտրություններում մեր կողմից իրականացված դիտորդության արդյունքները վկայում են այս մասին: Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում հանձնաժողովի նախագահը, տեղակալը, քարտուղարը և համայնքապետարանների, մարզպետարանների աշխատակիցներ, թաղամասային հիմնարկների պետեր, դպրոցների տնօրեններ հանդիսացող հանձնաժողովի անդամները կամ վստահված անձինք սովորաբար կոալիցիա են կազմել և ամբողջությամբ վերահսկողություն իրականացրել քվեարկության ընթացքի, քվեների հաշվարկի միակողմանի գործընթացի նկատմամբ:

Մինչ ընտրություններն ընկած ժամանակահատվածի հասարակական-քաղաքական մթնոլորտը

2008 թ. նախագահական ընտրությունների ելքը ընդհանուր առմամբ կանխորոշեց մինչև ընտրություններն ընկած ժամանակահատվածում իշխանությունների որոշակի գործողությունների արդյունքում ձևավորված հասարակական-քաղաքական մթնոլորտը:

Նախ իշխանության կողմից խիստ ուշադրության արժանացավ լրատվամիջոցների գործունեությունը:

Դեռևս 2007 թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույ-

թը ցուցադրելուց հետո իշխանությունը մեծ ճնշումներ սկսեց Գյումրիի «Գալա» հեռուստաընկերության նկատմամբ: Սկզբում հարկային պետական ծառայությունը ստուգումներ սկսեց «Գալա»-ում, ինչի արդյունքում «պեղեց» 26 մլն. դրամի թաքցրած եկամուտ:

Այնուհետև Գյումրիի քաղաքապետարանը հայց ներկայացրեց ՀՀ տնտեսական դատարանի Գյումրիի նստավայր՝ Գյումրիի «Գալա» հեռուստաընկերության դեմ: Գյումրիի քաղաքապետարանը դատարանից պահանջում էր, որպեսզի «Գալա» հեռուստաընկերությունն ազատի Գյումրիի Վ. Սարգսյան 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակը, որի նկատմամբ սեփականության իրավունքը քաղաքապետարանը ձեռք էր բերել 2007 թ. նոյեմբերին, այն բանից հետո, երբ «Գալա» հեռուստաընկերությունը հեռարձակեց Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը: Մինչ այդ հեռուստաաշտարակի սեփականատերը հայտնի չէր, «Գալա» հեռուստաընկերությունն այն վերանորոգել էր սեփական ուժերով և օգտագործում էր շուրջ երեք տարի: «Գալա»-ի դեմ ՀՀ տնտեսական դատարանի Գյումրիի նստավայրում քաղաքապետարանի կողմից ներկայացված հայցի քննությունն ընդմիջումներով շարունակվում է մինչ օրս:

Հարկային պետական ծառայության ստուգումների արդյունքների կապակցությամբ «Գալայի» փաստաբան, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավաբան Կարեն Թումանյանի միջնորդությամբ նշանակվեց դատատեխնիկական փորձաքննություն, և գործը կասեցվեց:

«Գալա»-ի նկատմամբ իրականացվող միջոցառումները իշխանության մարմինների կողմից խիստ նախազգուշացում էր մյուս բոլոր հեռուստաընկերություններին՝ առաջիկա նախագահական ընտրություններում նախագահի թեկնածուների նկատմամբ հեռուսատընկերությունների վարքագծի համար: Սահմանված վարքագծի որևէ շեղման դեպքում հեռուստաընկերությունները կարժանանային «Գալա»-ի ճակատագրին:

Գրեթե նույն ժամանակահատվածում քրեական հետապնդումներ սկսվեցին գործարարների նկատմամբ: ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ Խաչատուր Սուքիասյանը, Հակոբ Հակոբյանը հայտարարեցին, որ սատարելու են ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին:

Դրանից անմիջապես հետո խաբեության, մաքսանենգության և կեղծ ընկերություն ստեղծելու մեղադրանքով ձերբակալվեցին մաքսային պետական կոմիտեի և հարկային պետական ծառայության երկուական աշխատակիցները: Իբր Սուքիասյանների ընտանիքին պատկանող «Սիլվիա» հրատարակչությանը կեղծ հաշիվ է ուղարկել հարկային պետական ծառայության երկուական աշխատակիցների կողմից ստեղծված կեղծ ընկերությունը: Ընդհանուր առմամբ, իբր, իրականացվել էր 720 մլն դրամի կեղծ գործարք:

Դատախազությունը քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով մեղադրանքներ առաջադրեց հարկային պետական ծառայության վերը նշված երկու աշխատակիցներին, Գուգարքի տարածաշրջանային մաքսատան աշխատակիցներ Ա. Գասպարյանին և Ա. Մաթևոսյանին, ինչպես նաև «Սիլվիա» ՍՊԸ-ի տնօրեն Մարտին Սուքիասյանին:

2008 թ. հունվարի սկզբներից պետական համակարգի բոլոր աշխատակիցների կողմից սկսվեց քաղաքացիների անձնագրային տվյալների հավաքագրումը: Մշակված հատուկ աղյուսակների համաձայն՝ յուրաքանչյուր աշխատակից պարտավորվել էր հավաքել միջինը 50 քաղաքացու տվյալ-ստորագրություն՝ անուն, ազգանուն, հեռախոսի համար, հասցե, ծննդյան ամիս, ամսաթիվ, անձնագրի համար, սերիա: Ցուցակներում առկա քաղաքացիների ստորագրությունները վկայում էին, որ քաղաքացիները պարտավորություն են վերցնում քվեարկել ցուցակները լրացնողների կողմից /որոնք սովորաբար հանդիսացել են Հայաստանի հանրապետական կուսակցության անդամներ կամ համախոհներ/ ներկայացվող թեկնածուի օգտին: Հակառակ դեպքում նրանք կարող էին կորցնել իրենց աշխատանքը, զրկվել եկամտից կամ պատժվել:

Իշխանության մարմինների կողմից լիազորությունների և պաշտոնական դիրքի չարաշահման արդյունքում ձևավորվեց համընդհանուր սպառնալիքի ու վախի մթնոլորտ:

Նախընտրական քարոզչության ընթացքում արդեն իշխանության գործողություններն ավելի զարգացան՝ մեծացնելով լարվածությունը և անմիջականորեն ազդելով նախագահի թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական հանդիպումների վրա, ամբողջությամբ սահմանափակելով քաղաքացիների կամքի ազատ արտահայտման, ազատ տեղաշարժի, ինչպես նաև հավաքներին, ցույցերին նրանց ազատ մասնակցելու հնարավորությունները:

Նախընտրական քարոզչության դիտորդություն

2008 թ. նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության դիտարկումն իրականացվել է Լոռու մարզի 5 քաղաքներում՝ Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ և Տաշիր: Զեկույցում որոշակի տեղեկություններ են ներկայացված նաև Սյունիքի մարզի Կապան, Վայք, Եղեգնաձոր քաղաքներից:

Նախընտրական քարոզչության դիտարկումն իրականացվել է ՀՀ ընտրական օրենսգրքին, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Նախընտրական քարոզչության դիտարկումն իրականացվել է կազմակերպության 43 կամավորների և աշխատակիցների կողմից: Կազմակերպության աշխատակիցների և կամավորների կողմից իրականացվող դիտորդությունն իրականացվել է հատուկ մշակված չափանիշներին համապատասխան: Այն ներառել է.

• թեկնածուների համար հավասար հնարավորությունների ձևավորման և պահպանման հնարավորությունների դիտարկում, մասնավորապես՝

1. թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական հանդիպումները
2. թեկնածուների քարոզչանյութերի տարածումը
3. թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական քարոզչության լուսաբանումը լրատվամիջոցների կողմից

• նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների վերացման կամ կանխարգելման ուղղությամբ համապատասխան իրավասու մարմինների գործողությունները, մասնավորապես՝

1. ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների գործողությունները ընտրախախտումների կապակցությամբ
2. իրավապահ համակարգի կողմից իրականացվող գործողությունները ընտրախախտումների համար պատասխանատվություն կիրառելու կապակցությամբ

• իշխանության մարմինների գործողությունները և վարչական ռեսուրսների կիրառումը, մասնավորապես՝

1. իշխանության մարմինների գործողությունները քաղաքացիների նկատմամբ /ճնշումներ, բռնություններ, խոստումներ/
2. իշխանության մարմինների դիրքորոշումը թեկնածուների նկատմամբ
3. վարչական ռեսուրսների օգտագործումը:

ՀՀ նախագահի ինը թեկնածուներից առավել ակտիվ նախընտրական քարոզչություն են իրականացրել ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, Արթուր Բաղդասարյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը և Արտաշես Գեղամյանը: Թեկնածուների նախընտրական քարոզչությունն իրականացվել է հանրապետության տարբեր քաղաքներում քաղաքացիների հետ հանդիպումների, քարոզչանյութերի տարածման միջոցով: Թեկնածուների նախընտրական քարոզչության մեջ ավելի շատ տեղ են զբաղեցրել փոխադարձ վիրավորանքները, զրպարտանքն ու հակաքարոզչությունը: Նման վերաբերմունքն արտահայտվել է նաև քարոզչանյութերի նկատմամբ, որոնց զգալի մասը պոկվել են փակցված տեղերից կամ վնասվել են:

Թեկնածուների նախընտրական քարոզչության համար հավասար հնարավորությունները

ՀՀ նախագահի թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունը հավասար պայմաններում իրականացնելու համար նախ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանվեց թեկնածուներին հանրային հեռուստատեսությամբ անվճար տրամադրվող եթերաժամանակի գրաֆիկը:

Նույն կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանվեց թեկնածուներին նախընտրական հանդիպումներ իրականացնելու համար անվճար տարածքներ տրամադրելու կարգը:

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ համայնքի ղեկավարների կողմից համայնքի տարածքում առանձնացվեցին թեկնածուների քարոզչապաստառները փակցնելու համար սահմանված հասցեները: Համայնքի ղեկավարների որոշմամբ այդ տարածքները թեկնածուներին հատկացվում էին հավասար չափով, և դրանց ծավալը չպետք է գերազանցեր A1 ֆորմատը:

Նախընտրական քարոզչության ընթացքում, սակայն, ՀՀ նախագահի թեկնածուների և իշխանության մարմինների կողմից նախընտրական քարոզչությունն իրականացվեց սահմանված կարգի մի շարք խախտումներով: Այս ամենի սկիզբ կարելի է համարել ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունը: Շարունակելով ՀՀ վարչապետի պաշտոնավարումը՝ Սերժ Սարգսյանը նախաձեռնեց իր նախընտրական քարոզչությունը՝ որպես ՀՀ նախագահի թեկնածու: Նախընտրական քարոզչության ընթացքում սակայն խիստ սերտաճեցին նրա կողմից որպես ՀՀ վարչապետ և միաժամանակ ՀՀ նախագահի թեկնածու իրականացվող գործողությունները: Գործունեության նման ոճ շուտով որդեգրեցին նաև նույն կուսակցությանը հարող գրեթե բոլոր պաշտոնյաները: ՀՀ ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում էր, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին արգելվում է աշխատանքային ժամերին նախընտրական քարոզչություն իրականացնել կամ պաշտոնական լիազորություններն օգտագործելով՝ թեկնածուների նախընտրական քարոզչության համար անհավասար պայմաններ ձևավորել:

ՀՀ նախագահի թեկնածուների համար չապահովվեց հավասար հնարավորություններ.

1. Լոռու մարզում եղել են համայնքներ, որոնց ղեկավարները նախագահի թեկնածուների կողմից քարոզչանյութերի փակցման համար որոշումներ չեն կայացրել, որոշ համայնքներում քարոզչանյութերը տարածվել են նաև սահմանված տարածքներից դուրս, թեկնածուների քարոզչանյութերը պատռվել են փակցված տեղերից, դրանց վրա վիրավորական արտահայտություններ են գրվել
2. թեկնածուների նախընտրական հանդիպումները չեն կայացել հավասար պայմաններում:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ուղղակիորեն օգտագործել են իրենց լիազորությունները մեկ թեկնածուի օգտին առավելություններ ապահովելու համար, մասնավորապես՝

1. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատանքային ժամերին նախընտրական քարոզչություն է իրականացվել մեկ թեկնածուի օգտին
2. տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների կողմից թեկնածուների կամ նրանց համախոհների նկատմամբ իրականացվել են ճնշումներ, սպառնալիքներ՝ ստիպելով աշխատել միայն մեկ թեկնածուի համար
3. թեկնածուները և նրանց համախոհներն ազդել են քաղաքացիների ազատ կամքի արտահայտման վրա՝ նախընտրական խոստումների, ընտրակաշառքների միջոցով /դրամ, որոշակի ծառայությունների մատուցում/:

Ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողություն իրականացնող և պա-

տասխանատու համապատասխան կառույցների գործողությունները կաշկանդված են եղել իշխող կուսակցության կողմից, մասնավորապես՝

1. ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն ընտրախախտումներին չեն արձագանքել օրենսդրությամբ սահմանված կարգով, նրանց կողմից ընտրախախտումները չեն կանխարգելվել
2. իրավապահ համակարգի կողմից խախտումներ իրականացնող անձինք պատասխանատվության չեն ենթարկվել:

ՀՀ նախագահի թեկնածուների կողմից Լոռու մարզում իրականացված նախընտրական հանդիպումները հիմնականում իրականացվեցին բացօթյա, առանձին դեպքերում նախագահի թեկնածուներ Վահան Հովհաննիսյանը, Արտաշես Գեղամյանը և Վազգեն Մանուկյանը Վանաձորում իրենց նախընտրական հանդիպումներն իրականացրեցին Վանաձորի «Շարլ Ազնավուրի» մշակույթի պալատում, որի համար տնօրինությանը վճարել էին 40.000-60.000-ական դրամ:

Մյուս թեկնածուների կողմից իրականացվող բացօթյա հանդիպումների ժամանակ իշխանության մարմինների կողմից նկատելի էր մեկ ընդհանուր վարքագիծ: Իշխանության մարմինները, վարչական ռեսուսները և լծակներն ամբողջությամբ օգտագործելով, ուղղակի դիտավորությամբ փորձեցին կանխարգելել քաղաքացիների մասնակցությունն առանձին թեկնածուների, մասնավորապես՝ Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպմանը: Սրան հակառակ իշխանության մարմինները մեծ շահագրգռվածությամբ, ճնշումների, սպառնալիքների միջոցով քաղաքացիներին պարտադրեցին մասնակցել Սերժ Սարգսյանի նախընտրական հանդիպմանը: Օձունի գյուղապետը գյուղացիներին չի թույլատրել մասնակցել Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպմանը՝ սպառնալով ազատել աշխատանքից, զրկել թոշակից կամ նպաստից: Ալավերդիում պետական և մասնավոր հիմնարկների տնօրենները նախազգուշացրել են իրենց աշխատակիցներին, որ եթե մասնակցեն նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպմանը, կազատվեն աշխատանքից, եթե չմասնակցեն նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական հանդիպմանը, էլի կազատվեն աշխատանքից: Ալավերդիում Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպման ժամանակ ներքաղաքային տրանսպորտը և ճոպանուղին չեն աշխատել մի քանի ժամ: Սրան հակառակ՝ Վանաձորում կայացած Սերժ Սարգսյանի նախընտրական հանդիպման ժամանակ ներքաղաքային տրանսպորտը, նույնիսկ առանձին տաքսի ծառայություններ աշխատել են անվճար: Բացի այդ, Վանաձորում կայացած հանդիպմանը իշխանության պարտադրանքով մասնակցել են բոլոր պետական հիմնակների, դպրոցների աշխատակիցները, ԲՈՒՀ-երի ուսանողները: Իշխանության մարմիններն արգելել են նաև մարզի բնակիչներին մասնակցել Երևանում փետրվարի 16-ին կայացած Լևոն Տեր-Պետրոսյանի հանրահավաքին: Ճանապարհային ոստիկանության աշխատակիցները նույն օրը Տաշիրում կանգնեցրել են Երևան մեկնող միկրոավտոբուսը: Երբ վարորդը դիտորդների միջամտությունից հետո շարունակել է ճանապարհը, ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել նրա հորը՝ ճնշման և սպառնալիքի միջոցով ստիպելով ետ կանչել որդուն: Նույնը տեղի է ունեցել նաև Վանաձորից Երևան մեկնող մյուս միկրոավտոբուսների հետ:

Իշխանության կողմից ուղղակի սպառնալիքների և ճնշումների միջոցով անհավասար պայմաններ ձևավորվեցին նաև թեկնածուների նախընտրական շտաբերի ձևավորման գործընթացում: Նախընտրական շտաբերի ձևավորումը օրենսդրական ոչ մի կարգավորում չստացավ, ինչը փաստացի անհնար դարձրեց այս ոլորտում իրականացվող խախտումների կանխարգելումը: Նախագահի թեկնածուներին նախընտրական շտաբերի գործունեության համար տրամադրվող տարածքները մասնավոր սեփականատերերի կողմից ստրամադրվում էին անվարձահատույց օգտագործման կամ

վարձակալական հիմունքներով: Ստացվում էր այնպես, որ թեկնածուներից յուրաքանչյուրը կարող էր նախընտրական շտաբեր ձևավորել՝ իր ֆինանսական կամ իր համախոհների հնարավորություններից ելնելով: Այնուամենայնիվ, այստեղ ևս նկատելի էին լուրջ խախտումներ, երբ պետական համակարգի կողմից իրականացվող ճնշումների հետևանքով սեփականատերերին արգելվում էր տրամադրել իրենց տարածքն այս կամ այն թեկնածուի նախընտրական շտաբի գործունեության համար կամ խանգարվում էր նրանց գործունեությունը: Վանաձորի Տարոն 4 թաղամասում, Մարգահովիտ գյուղում բացված Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբերը փակվել են: Տարածքի սեփականատերերը բացատրել են, որ հարկային տեսչության մարմինները նախազգուշացրել են, թե Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի համար տարածք տրամադրելու դեպքում խնդիրներ կունենան հարկային մարմինների հետ: ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը Վանաձորում 30-ից ավելի նախընտրական շտաբ է ունեցել, սակայն նման բողոքներ ոչ մեկից չի ստացվել: ՕԵԿ-ի Վանաձորի գրասենյակի ղեկավարը տեղեկացրել է, որ Վանաձորի Բազում թաղամասում գտնվող ՕԵԿ-ի նախընտրական շտաբը փակվել է, քանի որ տարածքի սեփականատիրոջն ահաբեկել են:

2008 թ. փետրվարի 1-ի առավոտյան անհայտ մի մեքենա կանգնել է Լևոն Տեր-Պետրոսյանի կենտրոնական նախընտրական շտաբի մոտ, որից հետո պայթյուն է եղել: Պարզվել է, որ բենզինով լի շամպայնի երկու շիշ են պայթեցրել գրասենյակի մոտ:

Հունվարի 25-ին անհայտ անձինք կոտրել են ՕԵԿ-ի Վանաձորի գրասենյակի ապակիները, պոկել ցուցապաստառները:

Թեկնածուների նկատմամբ կիրառվող անհավասարության սկզբունքն արտահայտվել է նաև նրանց կողմից քարոզչապաստառների տարածման գործում: Վանաձորի «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտում գործում էին Տիգրան Կարապետյանի և Վահան Հովհաննիսյանի նախընտրական շտաբերը, որոնց չեն թույլատրել այդ տարածքում փակցնել իրենց թեկնածուների նախընտրական քարոզչապաստառները: Նույն տարածքում, սակայն, փակցվել են ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչապաստառները:

Նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների համախոհների կողմից անընդհատ խախտվել է քարոզչանյութերի տարածման համար սահմանված կարգը: Որոշ թեկնածուների քարոզչանյութերը տարածվել են ոչ սահմանված հասցեներում: Լոռու մարզի Օձուն գյուղում համայնքի ղեկավարը որոշում չի կայացրել քարոզչապաստառների փակցման համար առանձնացվող տարածքների վերաբերյալ, սակայն ամբողջ գյուղում տարածվել են Սերժ Սարգսյանի քարոզչապաստառները:

Համայնքներում փակցված տեղերից պոկվել են ՀՀ նախագահի թեկնածուների պաստառները, որոշ դեպքերում դրանց վրա անհարգալից գրառումներ են կատարել:

Վանաձորի կենտրոնական փոստի և «Գուգարք» հյուրանոցի շենքի վրա փակցված ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի քարոզչապաստառները պոկվել են, նույն տեղում փակցված Սերժ Սարգսյանի այլ քարոզչապաստառների վրա սվաստիկա են պատկերել: Հունվարի 25-ին անհայտ անձինք Վանաձորի Դիմաց թաղամասի բնակելի շենքերից մեկի պատից պոկել և օրը ցերեկով այրել են Արթուր Բաղդասարյանի ցուցապաստառը: Հունվարի 27-ի առավոտյան անհայտ անձինք պատռել են Լևոն Տեր-Պետրոսյանի՝ Վանաձոր քաղաքում փակցված քարոզչապաստառները:

Վարչական ապարատի ճնշումներ և սպառնալիքներ կիրառվել են նաև այդ համակարգի աշխատակիցների նկատմամբ՝ ստիպելով վերջիններիս խախտել օրենքը: Դեռևս 2007 թ. մայիսի Ազգային Ժողովի ընտրություններից առաջ պետական համակարգի գրեթե բոլոր աշխատակիցները ստիպողաբար անդամագրվեցին Հայաստանի հանրապետական կուսակցությանը: Աշխատակիցների համար այդ համակարգին ընդդիմանալու դեպքում ռեալ սպառնալիք էր աշխատանքը կորցնելը: 2008 թ. նախագահական ընտրությունների ժամանակ նույն սպառնալիքի ազդեցությամբ այդ նույն աշխատակիցները չեն խնա-

յել իրենց ջանքերն այդ կուսակցության թեկնածուի օգտին ձայներ ապահովելու համար: Պետական համակարգի աշխատակիցների մեծ մասի կողմից նախընտրական քարոզչություն է իրականացվել աշխատանքային ժամերին, ինչն արգելված է օրենսդրությամբ: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում մաթեմատիկա ֆակուլտետի հեռակա բաժնի դեկանը 2-3-րդ դասաժամերի ընթացքում հենց լսարանում նախընտրական քարոզչություն է իրականացրել ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին: Փետրվարի 16-ին Վանաձորի թիվ 9 դպրոցի տնօրենը, որը միևնույն ժամանակ այդ դպրոցում տեղակայված ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն է հանդիսացել, համադպրոցական ծնողական ժողով է հրավիրել, որի ընթացքում քարոզչություն է իրականացրել ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին: Վանաձորի Գրիգոր Լուսավորիչ հասցեում տեղակայված Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբում փետրվարի 4-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, ժողով է կազմակերպվել, որի ժամանակ էլ ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին նախընտրական քարոզչություն է իրականացրել ՏԻՄ աշխատակից Գրիշա Պառավյանը՝ միաժամանակ կոչ անելով առաջիկա Սերժ Սարգսյանի նախընտրական հանդիպմանն անպայման մասնակցել և իրենց հետ տանել բարեկամներին, հարազատներին:

Ալավերդու շրջանի 30 համայնքների ղեկավարներ հանդիսացել են Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբերի պետեր, ակտիվ նախընտրական քարոզչություն իրականացրել՝ արձակուրդի մեջ չլինելով:

Նույն համայնքների ղեկավարները և պետական համակարգի այլ աշխատակիցներ ուղղակի ազդեցություն են ունեցել բնակիչների ազատ կամքի արտահայտման վրա նախընտրական խոստումների, մասնավորապես՝ ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար 3000-5000 հազար դրամ ընտրակաշառքի միջոցով: Ընտրակաշառքը համատարած բնույթ է կրել հանրապետության ողջ տարածքում:

2008 թ. փետրվարի 19-ին՝ քվեարկության օրը, Լերմոնտովո գյուղի բնակիչները դիտորդին տեղեկացրել են, որ ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար նախօրեին իրենց 5000 դրամ են տվել: Փետրվարի 18-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը համաքաղաքացիներից ահազանգ է ստացել և Վանաձորի Վարդանանց 122 և Զաքարյան 15 հասցեներում տեղակայված Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբներում դիտորդներն ականատես են եղել, թե ինչպես են քաղաքացիներին ընտրակաշառք բաժանում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպությունը, դիտորդների կողմից արձանագրված ընտրախախտումների փաստերի հիման վրա, դիմել է համապատասխան իրավասու մարմիններին: Նրանց կողմից ընտրախախտումները կանխարգելելու կամ դրանք վերացնելու կապակցությամբ իրականացված միջոցառումները թույլ են տալիս եզրակացնելու, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, իրավապահ համակարգի աշխատակիցները, համայնքի ղեկավարներն ընտրախախտումները վերացնելու ուղղությամբ անգործություն են ցուցաբերել, որն էլ իր հերթին ամբողջ նախընտրական քարոզչության շրջանում ընտրախախտումները դարձրել է շարունակական և համատարած:

• 2008 թ. փետրվարի 12-ին Ստեփանավանում Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների համայնքի գյուղապետերի հավաքի պատճառները պարզելու և նման հանդիպումների ազդցությունը նախընտրական շրջաններում կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նախընտրական քարոզչապաստառների տարածումը ոչ սահմանված վայրերում կանխելու նպատակով 2 գրություն է ուղարկվել թիվ 32 ընտրատարածքային հանձնաժողով:

• Լոռու մարզում նախագահի թեկնածուների համար քարոզչության անհավասար պայմանները վերացնելու նպատակով գրություններ են ուղարկվել թիվ 29, 30, 31 ընտրատարածքային հանձնաժողովներ:

• Պետական պաշտոն զբաղեցնող քաղաքացու կողմից աշխատանքային ժամին իրականացվող նախընտրական քարոզչության համար օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կիրառելու նպատակով գրություններ է ուղարկվել թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժին:

• Քաղաքացիների ազատ տեղաշարժին, հավաքների, ցույցերի մասնակցելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելու և պաշտոնական լիազորությունների չարաշահման համար, ինչպես նաև Ստեփանավանի 32/34 ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Ֆիրդուս Թորոսյանին բջջային հեռախոսով ուղարկված սպառնալիքի կապակցությամբ հաղորդումներ են ուղարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն, Լոռու մարզի դատախազություն:

Ներկայացված գրությունների և խախտումների կապակցությամբ համապատասխան իրավասու մարմինների կողմից ստացվել են գրությունների ֆորմալ պատասխաններ, սակայն ըստ էության նրանց կողմից ոչ մի քայլ չի ձեռնարկվել:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պատասխան գրության մեջ նշվել է, որ. «Տաշիր-Ստեփանավան ճանապարհին «ՊԱԶ-672» մակնիշի 41SS665 ավտոբուսը կանգնեցվել է սպիտակ գույնի համարանիշներով ավտոբուսով ուղևորներ տեղափոխելու պատճառով: Ճանապարհային ոստիկանության աշխատակիցները չեն խոչընդոտել ուղևորների ազատ տեղաշարժին և գործել են իրենց լիազորությունների շրջանակներում: Վարորդի հորը Տաշիրի ոստիկանության բաժին բերման ենթարկելու կամ հրավիրելու հանգամանքը ստուգմամբ չի հիմնավորվել»:

Թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Վանաձորի թիվ 9 դպրոցի տնօրենի կողմից աշխատանքային ժամին իրականացված քարոզչության կապակցությամբ փետրվարի 18-ի պատասխան գրության մեջ նշել է. «թիվ 30/12 ՏԸՀ նախագահ էդիտա Վարդանյանը խստագույնս զգուշացվել է»:

Նույն թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քարոզչապաստառների տարածման կարգի խախտումների համար փետրվարի 11-ին պատասխանել է. «Գրանցված փաստերի մասին տեղեկացվել է Վանաձոր համայնքի ղեկավար Ս. Դարբինյանը, և նրա հավաստմամբ՝ խնդիրը վերցվել է հսկողության տակ»: Համայնքի ղեկավարի կողմից, սակայն, քարոզչապաստառների տարածման կարգի խախտումները վերացնելու կամ կանխարգելելու փաստեր դիտորդները չեն արձանագրել:

Թիվ 32 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից փետրվարի 20-ին ստացված գրությամբ նախագահը տեղեկացնում էր, որ իրենք ստույգ տեղեկություններ չունեն Ստեփանավանում ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի կողմից հրավիրված համայնքի ղեկավարների հավաքի կապակցությամբ և խորհուրդ էր տալիս դիմել ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանին:

Սյունիքի մարզից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղեկատվություն չի տրամադրել ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի՝ Կապան քաղաքում տեղակայված նախընտրական շտաբի վերաբերյալ կայացված որոշման մասին: Ավելին, գրությունը հանձնելիս թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղար Ռամելա Հակոբյանն ասել է. «Մենք տեղեկատվություն տրամադրելու ժամանակ չունենք, ու եթե քեզ ինչ-որ բան է պետք, արի, ստեղ նստի՛ր ու տեղեկատվությունդ հավաքի՛ր»:

Այս հանգամանքն ընտրախախտումներն իրականացնողների մոտ անպատժելիության և քաղաքացիների մոտ վախի, իրավապահ համակարգի նկատմամբ անվստահության մթնոլորտ է ձևավորել՝ ուղղակիորեն նպաստելով, որ ՀՀ նախագահի ընտրությունները իրականացվեն իշխանության կողմից նախապես մշակված սցենարով:

Քվեարկության օրվա դիտորդություն

Քվեարկության օրվա դիտորդությունն իրականացվել է Լոռու մարզի գյուղական և քաղաքային համայնքների 43 ընտրատեղամասերում: Դիտորդությունն իրականացվել է քվեարկության օրը՝ փետրվարի 19-ի առավոտյան ժամը 7:00-ից մինչև քվեների հաշվումն ու քվեարկության արդյունքների ամփոփումը: Ընտրատեղամասերում դիտորդներն անց են կացրել 17-20 ժամ: Այդ ամբողջ ժամանակահատվածում դիտորդները չեն լքել իրենց ընտրատեղամասերը, գրանցել են բոլոր խախտումները, որոնց համաձայն՝ կազմակերպության իրավաբանն անմիջապես համապատասխան գրություններ և հաղորդումներ է ուղարկել ընտրատարածքային ընտրական և կենտրոնական ընտրական հանձնաժողովներ:

Դիտորդների կողմից քվեարկության կարգի դիտարկումն իրականացվել է ընտրական օրենսգրքի և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համաձայն: Դիտորդների դիտարկումն ընդգրկել է քվեարկության սահմանված կարգը, որն արգելում է

- բաց քվեարկությունը
- այլ կամ բացակա անձանց փոխարեն քվեարկությունը
- այլ անձանց անձնագրով քվեարկությունը
- կուտակումները քվեարկության սենյակում և տեղամասում
- նույն անձի կողմից ինքնուրույն քվեարկել չկարողացող մի քանի անձանց օգնությունը
- քարոզչությունն ընտրական տեղամասում
- քվեարկության եկած անձանց անձնագրային տվյալների և ընտրացուցակներում առկա տվյալների անհամապատասխանությունը
- կրկնակի քվեարկությունը
- ընտրողի անձնագրի վերջին էջում դրոշմակնիքի առկայության դեպքում քվեարկությունը
- ընտրատեղամասում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայությունը:

Դիտորդների կողմից առանձին գնահատականի են արժանացել ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական օրենսգրքով սահմանված նրանց պարտականությունների իրականացումը, հանձնաժողովի անդամների գործողությունները՝ քվեարկության սահմանված կարգի խախտումների կապակցությամբ:

43 ընտրատեղամասերում իրականացված դիտորդության արդյունքների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ 2008 թ. նախագահական ընտրությունների քվեարկությունն իրականացվել է այնպիսի մթնոլորտում, որը ընտրողների վրա հոգեբանական ճնշում է գործադրել՝ ստիպելով նրանց քվեարկել հանձնաժողովի կողմից նախանշված թեկնածուի օգտին: Ընտրատեղամասային հանձնաժողովների և վստահված անձանց կազմը կուսակցական պատկանելիության առումով եղել է միատար: Արդյունքում քվեարկության կարգի այնպիսի էական խախտումներ, որոնք անմիջական ազդեցություն են թողել ընտրությունների ելքի վրա, հանձնաժողովի կողմից չի կանխվել: *Մասնավորապես՝ մեր դիտարկումների արդյունքները վկայում են, որ*

- ընտրատեղամասերում իրականացվել է բաց քվեարկություն կամ ընտրողները քվեարկելուց հետո փորձել են հանձնաժողովի հատուկ անդամի կամ վստահված անձանց ցույց տալ, թե ում օգտին են քվեարկել
- ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող անձանց ոչ թե օգնել են, այլ նրանց փոխարեն փաստացի քվեարկություն են իրականացրել: Այս երևույթը նկատվել է եղել դիտարկված բոլոր 43 ընտրատեղամասերում՝ քվեարկությանը մասնակցած անձանց ընդհանուր թվի 10 տոկոսի չափով
- ընտրատեղամասերում կոնկրետ ժամերի նկատվել են ընտրողների կուտակում-

ներ, որը հանդիսացել է հետևանք այն բանի, որ քվեարկողներին քվեարկության են բերել հատուկ միկրոավտոբուսներով
- քվեարկության արդյունքների հաշվման ընթացքում եղել են ընտրատեղամասեր, որտեղ անվավեր քվեաթերթիկները հաշվարկվել են ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին
- ընտրատեղամասերում պարբերաբար ներկա են գտնվել այնտեղ գտնվելու իրավունք չունեցող անձինք:

Թիվ 29/21 ընտրատեղամասում կայացել է բաց քվեարկություն, քվեարկության եկած համագյուղացիները փորձել են քվեարկությունից հետո իրենց ընտրությունը բացահայտել տեղամասում գտնվող ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի վստահված անձի և գյուղապետի համար, որը ներկայացել է որպես ՀՀ նախագահի թեկնածու Արամ Հարությունյանի վստահված անձ: Դիտորդի կողմից նշված խախտումները կանխարգելելու համար հանձնաժողովին ուղղված բազմաթիվ դիտողությունների արդյունքում հանձնաժողովի նախագահը ոչ մի միջոց չի ձեռնարկել: Ավելին, ընտրատեղամասում նույնը շարունակվել է ահազանգի կապակցությամբ ընտրատեղամաս այցելած թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությամբ:

Թիվ 29/03 ընտրատեղամասում քվեախցիկները դրված են եղել սեղանին՝ դեմքով դեպի հանձնաժողովը, քվեախցիկների ներքևի մասը բաց է եղել և քաղաքացիները քվեարկելիս քվեաթերթն այնպես են պահել, որ հանձնաժողովին երևացել է նախագահի թեկնածուի օգտին կատարվող նշումը:

Թիվ 29/11 ընտրատեղամասում 12:40-14:00-ն միանգամից քվեարկությանը մասնակցել են 273 քաղաքացիներ, որը ընտրատեղամասում կուտակումների պատճառ է դարձել:

Թիվ 29/10 ընտրատեղամասում պարբերաբար ներկա են գտնվել կողմնակի անձինք, նույն տեղամասում ներկա են գտնվել ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի երկու վստահված անձինք:

Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կողմից եղել են դեպքեր, երբ քվեարկության կարգի նման խախտումները հիմնականում անտեսվել են: Այն դեպքերում, երբ միևնույն ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում եղել են նույն կուսակցության անդամները, որոնք միաժամանակ հանդիսացել են նույն ընտանիքի անդամներ կամ նույն աշխատանքային կոլեկտիվի անդամներ:

Թիվ 30/02 ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանդիսացել է նույն դպրոցի տնօրենը, որն առաջադրվել է ՀՀԿ-ի կողմից: Հանձնաժողովի մյուս անդամներից 2-ը հանդիսացել են նույն դպրոցի ուսուցիչներ, իսկ հանձնաժողովի մեկ այլ անդամ առաջադրված է եղել ԲՀԿ-ից, որը ևս սատարել է ՀՀԿ-ին: Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովների նման կազմը հատուկ է եղել դիտարկվող գրեթե բոլոր տեղամասերում:

Փետրվարի 19-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ժամը 18:00-ի դրությամբ Լոռու մարզի տարբեր ընտրատեղամասերից քվեարկության կարգի խախտումների վերաբերյալ հաղորդումներ է ուղարկել թիվ 29, 30, 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և կենտրոնական ընտրական հանձնաժողով: *Մասնավորապես՝*
- թիվ 29/08 ընտրատեղամասում տեղի են ունեցել կուտակումներ, ընտրական տեղամասում գտնվել է մոտ 50 մարդ, և իրավիճակը դարձել է անվերահսկելի:
- թիվ 29/21 ընտրատեղամասում տեղի է ունեցել բաց քվեարկություն: Բոլոր քվեարկողները քվեարկելուց հետո հրապարակավ ցուցադրել են քվեաթերթիկը, նոր տեղավորել ծրարում: Կազմակերպության ահազանգից հետո ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից միջամտություն չի եղել, և բաց քվեարկությունը շարունակվել է: Սերժ Սարգսյանի վստահված անձը հատուկ գրիչներ է տրամադ-

ռել ընտրողներին և ընտրելուց հետո հետ վերցնել: Երկու քաղաքացիներ այլ անձնագրերով ստացել են քվեաթերթիկներ, կատարել են նշումը, սակայն արկղը գցելուց առաջ տվյալ փաստը նկատվել է դիտորդի կողմից: Հանձնաժողովի անդամը թույլ չի տվել քվեաթերթիկը գցել արկղը

- թիվ 29/23 ընտրատեղամասից ահազանգ է ստացվել, որ քվեաթերթիկները հանվել են ընտրատեղամասից և տեղափոխվել գյուղապետարան
- թիվ 30/29 ընտրական տեղամասում սահմանափակել են դիտորդի տեղաշարժման իրավունքը
- թիվ 30/29, 30/27, 30/09, 30/10 ընտրական տեղամասերում տեղի են ունեցել կուտակումներ, տվյալ փաստը ֆիքսվել է դիտորդների կողմից, սակայն հանձնաժողովի նախագահները ոչ մի համապատասխան միջոց չեն ձեռնարկել կուտակումները կանխելու համար
- թիվ 30/25 ընտրական տեղամասում մեր դիտորդները արձանագրել են մի քվեախցում երկու հոգու միաժամանակյա քվեարկություն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղարկվել են հաղորդումներ հետևյալ դեպքերի կապակցությամբ.

- թիվ 32/02 ընտրատարածքում դիտորդական առաքելություն իրականացնող դիտորդի նկատմամբ կիրառվել են ճնշումներ, որոնց հետևանքով դիտորդը ստիպված է եղել լքել ընտրատարածքը
- թիվ 31/15 ընտրատեղամասում տեղի է ունեցել անձնագրի մեջ առանց կնիքի քվեարկության 2 դեպք, որը ֆիքսվել է դիտորդի կողմից, սակայն հանձնաժողովի կողմից արձանագրություն չի կազմվել
- թիվ 31/45 ընտրատարածքում դիտորդական առաքելություն է իրականացրել «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ն ներկայացնող Գյուլնարա Ֆրունզիկի Ռամազյանը /դիտորդական վկայական 1762/, որը միաժամանակ հանդիսացել է ՀՀԿ-ի անդամ:

Դիտորդների կողմից արձանագրված փաստերի և դրանց հիման վրա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին ներկայացված գրությունների կապակցությամբ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացվել են հետևյալ արձագանքները.

• թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներն անմիջապես ներկայացել են 29/21 ընտրատեղամաս բաց քվեարկությունը կանխելու համար: Տեղամասում նրանք մնացել են մոտ 40 րոպե: Սակայն նրանց ներկայությամբ, նրանցից հետո էլ ընտրատեղամասում բաց քվեարկությունը շարունակվել է: Թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված գրություններին 5 գրավոր պատասխան է ուղարկվել միայն փետրվարի 24-ին, որտեղ էլ նշվել է, որ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներն այցելել են թիվ 29/21 ընտրական տեղամաս, սակայն նշված հանգամանքի կապակցությամբ այլ փաստեր և տվյալներ են արձանագրվել: Հանձնաժողովի անդամների կողմից համապատասխան միջոցներ են ձեռնարկվել նման դեպքերը բացառելու ուղղությամբ»:

• Թիվ 29/29 ընտրատեղամասի խախտումների կապակցությամբ նշվել է. «Ընտրական տեղամասում բացահայտ և մասսայական բաց քվեարկության հանգամանքը չի հիմնավորվել, որևէ փաստ չի արձանագրվել»:

• Թիվ 29/08 ընտրատեղամասի կուտակումների կապակցությամբ ընտրատարածքային հանձնաժողովը պատասխանել է. «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներն այցելել են թիվ 29/08 ընտրատեղամաս, որտեղ պարզվել է, որ ընտրողների կուտակումներ կան, սակայն ոչ թե ներսում, այլ տեղամասից դուրս՝ բակում»:

• Թիվ 29/23 ընտրական տեղամասի խախտումների կապակցությամբ պատասխան

գրության մեջ նշվել է. «Քվեաթերթիկները պահելու համար նախատեսված չհրկիզվող պահարանը տեղադրված է եղել գյուղապետարանում: Հարցի լուծման կապակցությամբ հանձնաժողովի անդամների կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ, որի արդյունքում նշված չհրկիզվող պահարանը գյուղապետարանից տեղափոխվել է ընտրական տեղամաս»:

Եզրակացություն

Ազատ և արդար ընտրությունների ապահովման համար կարևոր սկզբունքներից և ոչ մեկը 2008 թ. նախագահական ընտրությունների նախապատրաստման և նախընտրական քարոզչության ընթացքում չի պահպանվել: ՀՀ նախագահի ընտրությունների կազմակերպման և իրականացման գործընթացը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության կողմից Եվրախորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորություններին, ԵԱՀԿ ժողովրդավարական ընտրությունների համար սահմանված չափանիշներին:

1. Թեկնածուների կողմից նախընտրական քարոզչությունն իրականացվել է անհավասար պայմաններում, որը շատ դեպքերում ձևավորվել է իշխանության մարմինների կողմից սեփական լիազորությունների չարաշահման միջոցով կիրառվող սպառնալիքների և ճնշումների կապակցությամբ:

2. Տեղական լրատվական միջոցները նախընտրական քարոզչությունից առաջ չեն հրապարակել նախընտրական քարոզչության ժամանակ քաղաքական գովազդի սակագինը: Նախընտրական քարոզչության ընթացքում նրանք խուսափել են մեծ ծավալով անդրադառնալ այս կամ այն թեկնածուին:

3. Համայնքային և պետական կառավարման բոլոր ձեռնարկությունների, ինքնակառավարման մարմինների և մարզպետի գլխավորությամբ մարզպետարանի աշխատակիցները, նրանց ենթակա դպրոցները, առողջապահական հիմնարկները, մանկապարտեզները ներգրավված են եղել ՀՀ գործող վարչապետ, ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար ընտրողների ձայների հավաքագրմամբ: Ընդդիմադիր թեկնածուների հանրահավաքներին չմասնակցելու համար բյուջետային հիմնարկները ճնշել և ահաբեկել են իրենց աշխատակիցներին:

4. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, կենտրոնական ընտրական հանձնաժողովը, համայնքի ղեկավարները, իրավապահ համակարգը անգործություն են դրսևորել ընտրախախտումների կանխարգելման կամ ընտրախախտողներին պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ: Նման դեպքերը քաղաքացիների մոտ իրավական համակարգի նկատմամբ անվստահության, անպաշտպանվածության և անհուսության զգացում են ձևավորել: Նույն պայմաններում ձևավորված վախի և սպառնալիքի մթնոլորտը դարձել է գերիշխող, որն անմիջականորեն ազդել և կանխորոշել է քվեարկության օրվա արդյունքների ելքը:

5. ՀՀ նախագահի ընտրությունների քվեարկությունը տեղամասերում իրականացվել է սահմանված կարգի էական խախտումներով՝ չի ապահովվել քվեարկության գաղտիությունը:

Այսպիսով, ՀՀ նախագահական ընտրությունների կազմակերպման և իրականացման դիտարկումը, որը կարելի է կոչել նաև գործող իշխանությունների կողմից սեփական իշխանությունը պահելու համար կիրառվող հակաօրինական գործողությունների դիտարկում, փաստում է, որ իշխանական ամբողջ համակարգը չխնայեց իր ջանքերը և խտրականություն չդրսևորեց միջոցների ընտրության մեջ վերարտադրվելու համար:

ՄԱՍ 7

Հետընտրական հասարակական–քաղաքական գործընթացներ

2008 թ. ԿԸՀ-ի որոշմամբ ՀՀ նախագահի ընտրությունների արդյունքում հաղթող ճանաչվեց Հայաստանի հանրապետական կուսակցության թեկնածու, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը:

ՀՀ նախագահի թեկնածու Տիգրան Կարապետյանը և Լևոն Տեր-Պետրոսյանը դիմեցին ՀՀ սահմանադրական դատարան ընտրությունների արդյունքները վիճարկելու համար: Սահմանադրական դատարանն իր որոշմամբ, սակայն, անփոփոխ թողեց ԿԸՀ-ի որոշումը:

Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները Հայաստանի ԵԱՀԿ դիտորդների կողմից ճանաչվեցին կայացած՝ ԵԱՀԿ և Եվրախորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորություններին և չափանիշներին համապատասխան: ԵԱՀԿ դիտորդական առաքելությունը, ելնելով Հայաստանի Հանրապետությունում ձևավորված հետընտրական մթնոլորտից, հրապարակեց իր երրորդ հետընտրական զեկույցը, որտեղ նշվեցին լուրջ ընտրախախտումներ:

Ընտրությունների ժամանակ դիտորդություն իրականացրած տեղական մի շարք դիտորդների եզրակացությամբ, սակայն, ընտրություններն ընթացան լուրջ խախտումներով, որոնք էական ազդեցություն թողեցին ընտրությունների արդյունքների վրա:

Ընտրություններից հետո ՀՀ նախագահի թեկնածու, Աժ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը հրաժարական տվեց: Միևնույն ժամանակ ՀՅԴ-ն հայտարարեց, որ չի վիճարկում ընտրությունների վերջնական արդյունքները և հաջողություն է մաղթում նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին:
ՀՀ նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարյանը միացավ քաղաքական կոալիցիային և նշանակվեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում:

ՀՀ նախագահի ընտրություններից հետո Հայաստանում հասարակական-քաղաքական իրավիճակն ավելի լարվեց՝ ձևավորելով այնպիսի մթնոլորտ, որտեղ խախտումները շարունակվեցին և ամբողջացրեցին ընտրությունների վերաբերյալ բացասական գնահատականը:

Քվեարկության հաջորդ օրվանից ՀՀ նախագահի նախկին թեկնածու Լևոն-Տեր Պետրոսյանն իր համախոհներով Երևանի «Ազատության» հրապարակում կազմակերպեց հանրահավաք: Լևոն Տեր-Պետրոսյանը և իր համախոհները պահանջում էին չեղյալ հայտարարել կայացած ընտրությունները, իրականացնել նոր քվեարկություն: Փետրվարի 20-ից Լևոն Տեր-Պետրոսյանի պահանջին միացան գործող իշխանության տարբեր պաշտոնյաներ՝ պաշտպանության փոխնախարարներ:

ՀՀ նախագահի մյուս թեկնածուներից ոչ ոք չմիացավ Լևոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնած հանրահավաքին:

Հաշվի առնելով իշխանության գործողությունների բնույթը՝ հետընտրական գործըն-

թացները կարելի է բաժանել 2 մասի.

• փետրվարի 19-29-ը, երբ իշխանությունն «հանդուրժողական վերաբերմունք» դրսևորեց «Ազատության» հրապարակում խաղաղ նստացույցի մասնակիցների նկատմամբ: Սակայն այս ժամանակահատվածում վարչական ռեսուրսներն հիմնականում օգտագործվեցին մարզերի բնակիչների նկատմամբ ճնշումներ իրականացնելու համար, որպեսզի վերջիններս չկարողանան մասնակցել Երևանում կայացող հանրահավաքին:

• Մարտի 1-21-ը, երբ գործող իշխանությունը բռնի ուժ կիրառեց խաղաղ ցույցի անմիջական մասնակիցների նկատմամբ, այնուհետև հետապնդումները շարունակվեցին քաղաքական ընդդիմադիրների նկատմամբ:

2008 թ. մարտի 1-ից Երևանում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից արտակարգ դրություն հայտարարվեց: Այս պայմաններում դադարեցվեց այլընտրանքային լրատվամիջոցների գործունեությունը և բացի հանրային հեռուստաընկերության տրամադրած պաշտոնական տեղեկատվությունից, երկրում իրականացվող իրադարձությունների մասին քաղաքացիներն այլ մեկնաբանությամբ տեղեկատվություն ստանալու հնարավորություն չունեցան:

Թեև ՀՀ նախագահի հրամանագրով արտակարգ դրություն էր հայտարարված միայն Երևանում, սակայն գործող իշխանության ներքին հրահանգով հետընտրական իրադարձությունների լուսաբանումը դադարեցրեցին նաև մարզային լրատվամիջոցները:

Գործող իշխանության ճնշումները և հետապնդումները մարզի բնակիչների նկատմամբ փետրվարի 19-29-ը և մարտի 1-21-ն ընկած ժամանակահատվածում

Հետապնդումներ քաղաքական հայացքների պատճառով

1. ՀՀ նախագահի ընտրությունների քվեարկության հաջորդ օրվանից՝ 2008 թ. փետրվարի 20-ից, իշխանությունը հետապնդումներ իրականացրեց Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձանց նկատմամբ՝ փորձելով քրեական պատասխանատվության ենթարկել վերջիններիս: Մասնավորապես՝ թիվ 30/22 ընտրատեղամասում Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Սոֆյա Քալանթարյանի նկատմամբ Լոռու մարզի դատախազությունը մեղադրանք առաջադրեց ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտելու համար: Սոֆյա Քալանթարյանի դատաքննությունը սկսվեց մարտի 13-ին՝ նախագահությամբ դատավոր Նաիրա Հովակիմյանի: Դատարանում որպես մեղադրող կողմ հանդես եկավ Լոռու մարզի դատախազ Կարեն Շահբազյանը, ինչն անմիջական ազդեցություն թողեց դատավարության ընթացքի վրա: Դատավորի գործողությունները կաշկանդվում էին դատախազի ազդեցությամբ, մասնավորապես՝ դատավորը բավարարում էր պաշտպանվող կողմի միայն այն միջնորդությունները, որոնց հավանություն էր տալիս դատախազը: Ընդհանուր իրավասության դատարանի վճռով Սոֆյա Քալանթարյանը ճանաչվեց մեղավոր և ենթարկվեց 300 հազար դրամ տուգանքի:

2. Լոռու մարզի բյուջետային հիմնարկների աշխատակիցներն ազատվեցին աշխատանքից Լևոն Տեր-Պետրոսյանին սատարելու պատճառով: Մասնավորապես՝ Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Արշավիր Ղուկասյանին ստիպեցին Լոռու մարզպետարանի քարտուղարության բաժնի պետի պաշտոնից ազատման դիմում ներկայացնել:

Լոռու մարզպետարանում աշխատանքից ազատվեց նաև Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ, նույն բաժնի աշխատակից Արմեն Հովհաննիսյանը: Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի հրամանում Արմեն Հովհաննիսյանի ազատումը հիմնավորվում էր քաղաքական զսպվածության սկզբունքի խախտումներով: Մասնավորապես՝ Արմեն Հովհաննիսյանն իրականացրել էր «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված արգելված գործողություններ:

Արգելվում է քաղաքացիական ծառայողին այլ վճարովի աշխատանք կատարել, լինել երրորդ անձանց ներկայացուցիչ այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ: Ազատման հրամանում նշված գործողությունները, սակայն, Արմեն Հովհաննիսյանն իրականացրել է արձակուրդում գտնվելու ժամանակ:

3. Լոռու մարզի Ամրակից գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենն աշխատանքից ազատել է նույն դպրոցի ուսուցիչ Նաիրի Արոյանին: Տնօրենն ուսուցչին աշխատանքից ազատելու համար հիմք է ընդունել փետրվարի 11-16-ը աշխատանքից անհարգելի պատճառներով բացակայելը: Նաիրի Լևոնի Արոյանը հանդիսացել է 32/30 ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, ՀԺԿ ներկայացուցիչ:

4. Օձուն գյուղի դպրոցի ուսուցչուհի Ալվարդ Շարմազանյանից, որը ՀՀ նախագահական ընտրությունների ժամանակ հանդիսացել է Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը, տնօրենը պահանջել է աշխատանքից ազատման դիմում ներկայացրել: Ալվարդ Շարմազանյանը հրաժարվել է ազատման դիմում ներկայացրել: Տնօրենը սպառնացել է, որ Ալվարդ Շարմազանյանի եղբայրը խնդիրներ կունենա: Վերջինս հանդիսացել է քաղաքական հետապնդումների հետևանքով թաքնվող Վանո Սիրադեղյանի մամլո խոսնակը:

Հանրահավաքների իրականացմանը, հանրահավաքներին մասնակցությանը, ազատ տեղաշարժմանը խոչընդոտումներ

1. 2008 թ. փետրվարի 29-ին Վանաձորի «Արցախ» պուրակում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կազմակերպել է հանրահավաք «Ընտրական խախտումների կանխարգելման հնարավորությունները 2008 թ. նախագահական ընտրությունների ժամանակ» թեմայով: Վանաձորի քաղաքապետի Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ «թիմակիցները» անընդհատ փորձել են անպատեհ ակնարկներով խանգարել հանրահավաքը, վերջում հոսանքազրկել գեղեցկության սրահը, որտեղից միացված էր բարձրախոսը: Հանրահավաքի խոչընդոտման փաստի առթիվ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հաղորդում է ուղարկել ոստիկանության Վանաձորի բաժին:

2. 2008 թ. փետրվարի 20-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Վանաձոր-Երևան ճանապարհին՝ Վանաձորից 100 կմ հեռավորության վրա, կանգեցվել է Երևան՝ Լևոն Տեր-Պետրոսյանի հավաքին մասնակցելու մեկնող միկրոավտոբուսը: Ճանապարհային ոստիկանության աշխատակից Մ. Կարապետյանը վարորդից պահանջել է փաստաթղթերը՝ խոչընդոտելով նրանց ազատ տեղաշարժը, նույնիսկ արգելել լրագրողին հարցազրույց վերցնել ուղևորներից կամ լուսանկարել միկրոավտոբուսը: Այս փաստի առթիվ ևս ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հաղորդում է ուղարկել, սակայն այս անգամ Լոռու մարզի դատախազություն: ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի բաժինը պատասխանել է, որ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվում է Մ. Կարապետյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

3. 2008 թ. մարտի 3-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է Վանաձորի քաղաքա-

պետարան՝ իրազեկելով մարտի 6-ին, 7-ին և 8-ին Վանաձորում տեղեկատվական հանրահավաք կազմակերպելու մասին: Վանաձորի քաղաքապետը բացասական որոշում է կայացրել: Իր որոշումը նա հիմնավորել է ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի, Լոռու մարզի դատախազության ներկայացուցչի, Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորի, մի խումբ բնակիչների մտահոգությամբ, որ հանրահավաքի ժամանակ կարող է վնաս հասցվել քաղաքացիների առողջությանն ու կյանքին: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը բողոքարկել է քաղաքապետի որոշումը դատական կարգով, սակայն դատարանը ևս մերժել է քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու կազակերպության պահանջը:

4. 2008 թ. մարտի 20-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը երկրորդ անգամ է իրազեկման համար դիմել Վանաձորի քաղաքապետարան՝ «Արցախ» պուրակում հանրահավաքների կազմակերպման համար: Քաղաքապետը, սակայն, երկրորդ անգամ որոշում է կայացրել մերժման մասին:

Տեղեկատվության տարածման սահմանափակումներ

1. Վանաձորցիներին հանրապետությունում իրականացվող իրադարձությունների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը փորձել է տպագրել «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթի հատուկ համարը, որտեղ օբյեկտիվ տեղեկատվություն էր տրամադրվելու հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Նախապատրաստվեցին համապատասխան հոդվածները, սակայն այս անգամ էլ Լոռու մարզպետարանից տպարանի տնօրենին ուղղակիորեն հրահանգեցին չտպագրել թերթը:

3. 2008 թ. մարտի 4-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակում կայացավ մամլո ասուլիս՝ «Հասարակական այլընտրանքային իրազեկում արտակարգ պայմաններում» թեմայով: Տեղական 2 հեռուստաընկերություններից ասուլիսին մասնակցեց միայն 1-ը, որը սակայն ասուլիսը եթեր չհեռարձակեց:

Խուզարկություններ

Փետրվարի 26-ից հանցավոր գործունեության վերաբերյալ փաստաթղթեր կամ առարկներ բացահայտելու նպատակով խուզարկվել են այն բնակիչների բնակարանները, որոնք մասնակցել են Երևանում կայացած հանրահավաքին: Խուզարկության արդյունքում, սակայն, հանցավոր գործունեության վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ կամ առարկա չի հայտնաբերվել:

1. 2008 թ. փետրվարի 26-ին վաղ առավոտյան խուզարկություններ են սկսվել Վանաձորի բնակիչ Մերուժան Հարությունյանի և Արսեն Ավետիսյանի ծնողների բնակարաններում:

2. 2008 թ. մարտի 10-ի առավոտյան՝ ժամը 11:00-ին, ոստիկանության աշխատակիցները խուզարկել են Լոռու մարզի Օձուն գյուղի բնակիչ Սերյոժա Բարսեղյանի տունը: Խուզարկության արդյունքում Սերյոժա Բարսեղյանի տանը կից անասնագոմի տանիքում ոստիկանության աշխատակիցները հայտնաբերել են 30 փամփուշտ: Խուզարկության ժամանակ որպես ընթերական գրանցված հարևանները նկատել են, որ անասնագոմի տանիքի ծածկը վնասված է: Տանիքի բացված այդ անցքով էլ, ականատեսների կարծիքով, փամփուշտները գցված են եղել ներս:

Սերյոժա Բարսեղյանի կինը տեղեկացրել է, որ նախօրեին՝ երեկոյան, ոստիկանութ-

յան թաղային տեսուչն ալկոհոլ օգտագործած վիճակով գնացել է Ս. Բարսեղյանի տուն: Ոստիկանության տեսուչը սպառնացել է Սերյոժա Բարսեղյանի կնոջը՝ ասելով. «Տեսեք՝ Ձեր գլուխն ինչ եմ բերելու: Եթե ձեր՝ բանակում ծառայող որդու հետ մի բան պատահի, չզարմանաք»:

3. Ոստիկանության աշխատակիցները խուզարկել են Վանաձորում Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի տարածքի սեփականատիրոջ բնակարանը:

4. Ոստիկանության աշխատակիցները խուզարկել են ոչ միայն քաղաքացիների այն բնակարանները, որտեղ փաստացի ապրում են, այլ նաև այն բնակարանները, որի հասցեում նրանք հաշվառված են:

5. 2008 թ. մարտի 29-ի առավոտյան՝ մոտավորապես 8:30-ի սահմաններում, Վանաձորի ոստիկանության աշխատակիցների կողմից խուզարկություն է իրականացվել Արմեն Բալայանի բնակարանում, կից օժանդակ շինությունում, ինչպես նաև նրա «Արարատ» մթերային խանութում: Խուզարկությունն իրականացվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանի 2008 թ. մարտի 27-ի որոշմամբ: Խուզարկության նպատակն է եղել հայտնաբերել «Սիմ» տպագրատանից 2007 թ. մարտի 3-5-ն ընկած ժամանակահատվածում հափշտակված տպագրական մեքենայի լիսեռները: 2008 թ. մարտի 21-ին ոստիկանության Վանաձորի բաժնից գրություն է ստացվել, ըստ որի, Արմեն Բալայանի բնակարանում, դրան կից օժանդակ շինություններում և «Արարատ» մթերային խանութում թաքցվում են հափշտակված լիսեռները՝ 570.000 դրամ ընդհանուր արժողությամբ: Խուզարկության արդյունքում որևէ լիսեռ չի հայտնաբերվել, սակայն ոստիկանության աշխատակիցներն առգրավել են Արմեն Բալայանի օրինական կարգով պահվող որսորդական հրացանը: Խուզարկության ընթացքում Արմեն Բալայանին ոստիկանության աշխատակիցները հարցրել են, թե արդյոք վերջինս հանդիսանում է ՀՀՇ կուսակցության անդամ:

2008 թ. մարտի 12-ի առավոտյան ոստիկանության աշխատակիցները խուզարկություններ են սկսել Լևոն Տեր-Պետրոսյանի համակիրների բնակարաններում, մասնավորապես՝

1. Արսեն Սիրադեղյանի և նրա ծնողների
2. Գրիգոր Հակոբյանի
3. Արթուր Շահնազարյանի
4. Ռուբիկ Ոսկանյանի
5. Սասուն Սեյրանյանի
6. Արշավիր Ղուկասյանի
7. Վաղարշակ Անդրեասյանի
8. Վահագն Մարտիրոսյանի
9. Կարեն Սարգսյանի
10. Սասունց Սեյրանյանի

Վահագն Մարտիրոսյանի բնակարանից ոստիկանության աշխատակիցներն առգրավել են ՀՀՇ կուսակցության 1989 թ. կանոնադրության նախագիծը: Սասունց Սեյրանյանի /նա հանդիսանում է Լոռու մարզի որսորդմիության տեսուչ/ բնակարանից էլ ոստիկանները տարել են օրինական փաստաթղթերով պահվող նրա որսորդական հրացանը:

ՀՀ քրեական օրենսգիրքը խուզարկություն կատարելու համար թվարկում է այն դեպքերը, երբ քննիչը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ

և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ տվյալ գործի համար:

Օրենքով սահմանված կարգի համաձայն՝ խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ, որի մասին խուզարկությունից առաջ քննիչը նախապես տեղեկացնում է բնակչին: Խուզարկությունն ավարտելուց հետո քննիչը կազմում է համապատասխան արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ հանձնվում է անձին, ում մոտ կատարվում է քննչական գործողությունը:

2008 թ. փետրվարի 26-ից մարտի 13-ը ոստիկանության Վանաձորի բաժնի աշխատակիցների կողմից իրականացված խուզարկություններն իրականացվել են օրենքով սահմանված կարգի խախտումներով.

1. խուզարկություն կատարելու մասին դատարանի համապատասխան որոշման մասին տեղեկացել են միայն այն քաղաքացիները, ում խուզարկության վերաբերյալ արձանագրություն է տրվել
2. քաղաքացիներից ոչ մեկը չի տեղեկացվել, թե որ գործի շրջանակներում է խուզարկություն իրականացվում
3. խուզարկությունն իրականացնելուց հետո ոչ բոլոր քաղաքացիներին է տրվել խուզարկության վերաբերյալ կազմված արձանագրության պատճենը:

Ճնշումներ քաղաքացիների ազատ կամքի դրսևորման վրա

1. 2008 թ. փետրվարի 26-ին նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին աջակցող հանրահավաքի կազմակերպման համար ստիպողաբար Վանաձորից Երևան են տեղափոխել Վանաձորի պետական համակարգի բոլոր աշխատակիցներին: Արդյունքում հանրակրթական դպրոցներում դասերն ավարտվել են սովորականից շուտ, իսկ Վանաձորի քաղաքապետարանի մի քանի բաժիններ ընդհանրապես չեն աշխատել: Նույն օրը Վանաձորի թիվ 1, 4, 8, 10 և 11 դպրոցների մի խումբ ավարտական դասարանի աշակերտներ, ՀՀ դրոշը վեր պահած, երթի են ելել քաղաքի փողոցներում: Նրանց միացել են հասակակիցներ այլ դպրոցներից, որոնք պահանջել են քաղաքականությունը չխառնել կրթության հետ և ետ բերել իրենց ուսուցիչներին: Փետրվարի 27-ին Լոռու մարզի կրթության վարչությունից կանչել են այն դպրոցի տնօրեններին, որոնց աշակերտները մասնակցել են նախորդ օրվա երթին: Մարզպետարանից պահանջել են պարզել, թե ովքեր են հանդիսացել երթի կազմակերպիչները, աշակերտներից բացատրություն են վերցրել, որ դպրոցներում դասերը չեն խանգարվել:

Միաբեկումներ

1. 2008 թ. փետրվարի 29-ի լույս մարտի 1-ի գիշերն անհայտ անձինք հրդեհել են Վանաձորում գործող ՀՀՇ գլխավոր գրասենյակի դուռը: Դեպքի կապակցությամբ ՀՀՇ գրասենյակը հաղորդում է ուղարկել ոստիկանության Վանաձորի բաժին:
2. 2008 թ. մարտի 4-ի լույս փետրվարի 5-ի գիշերը երկրորդ անգամ փորձել են հրդեհել ՀՀՇ գրասենյակը:

Ոստիկանություն բերման ենթարկելու և անօրինական պահման փաստեր

1. 2008 թ. մարտի 3-ին Գյումրիի ոստիկանության բաժին բերման են ենթարկել ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանին չիրազեկված հանրահավաք կազմակերպելու համար: Ժամը 13:00-14:00-ն նրա փաստաբան Կ. Թումանյանին հնարավորություն չեն տվել հանդիպել վերջինիս հետ՝ պատճառաբանելով, որ

նյութեր են նախապատրաստում և կթույլատրեն հանդիպել հետո: Լևոն Բարսեղյանի հետ ոստիկանություն բերման է ենթարկվել նաև նրա 17- ամյա որդին, որի նկատմամբ բռնություն է կիրառվել:

2. 2008 թ. մարտի 11-ին 2-րդ անգամ Գուգարքի ոստիկանության բաժին բերման են ենթարկել «Ազատության» հրապարակում խաղաղ նստացույցի մասնակից Սարգիս Ավետյանի որդուն՝ 22-ամյա Ռուսլան Ավետյանին: Ոստիկանության աշխատակիցները փորձել են ոստիկանության բաժին տանել նաև Ռուսլան Ավետյանի կնոջը, մորը և 2 անչափահաս երեխաներին: Մինչ այդ՝ մարտի 8-ին, ոստիկանության աշխատակիցները մեկ անգամ էլ են բերման ենթարկել նրա որդի Ռուսլան Ավետյանին և ամբողջ օրը պահել ոստիկանությունում:

3. 2008 թ. ՀՀ նախագահական ընտրություններից հետո «Ազատության» հրապարակում խաղաղ նստացույցի մասնակից Ռուբիկ Ոսկանյանը մարտի 1-ի առավոտյան՝ մոտավորապես ժամը 6:30-ին, դաժան ծեծի է ենթարկվել խաղաղ նստացույցը ցրողների կողմից: Վիճակը ծանր լինելու պատճառով դիմել են շտապ օգնությանը:

Առավոտյան ժամը 8:30-ի սահմաններում ոստիկանները ձերբակալել են Ռ. Ոսկանյանին իր ավտոմեքենայում և առանց բժշկական օգնություն ցույց տալու նրան պահել Երևանի Կենտրոնի ոստիկանության ՃՊՎ-ում:

Ռուբիկ Ոսկանյանի փաստաբան Վարդան Զուռնաչյանը մեկ շաբաթ շարունակ չի կարողացել հանդիպել ոստիկանության հատուկ կարևորագույն գործերով քննիչ Ա. Կարապետյանի հետ, որպեսզի կարողանա իրականացնել իր պաշտպանական գործողությունները:

Ռուբիկ Ոսկանյանի կնոջ հաղորդմամբ՝ փաստաբանները մշտապես հայտնում են, թե քննիչը տեղում չէ, բացակայում է:

ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի Վանաձորի կենտրոնական շտաբի պետ Աշոտ Մանուկյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն ուղղված գործողություններ իրականացնելու համար:

4. ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Աշոտ Մանուկյանի կինը տեղեկացրել է, որ ոստիկանության աշխատակցի ճնշումների ազդեցությամբ փոխել է իր ցուցմունքը: Փաստաբանի ներկայությամբ տեղի ունեցած ոստիկանության աշխատակցի և Աշոտ Մանուկյանի առերեսման ժամանակ ոստիկանության աշխատակիցը հայտնել է, որ Աշոտ Մանուկյանն իր նկատմամբ բռնություն չի կիրառել: Այդ պահին ներս է մտել ոստիկանության հատուկ կարևորագույն գործերով քննիչ Արսեն Բեգինյանը: Նա ստիպել է ոստիկանության աշխատակցին, որ վերջինս փոխի իր ցուցմունքը և ներկայացնի, որ Աշոտ Մանուկյանը խփել է իրեն:

Բերման են ենթարկվել
Վանաձոր

1. Նազարյան Լևոն
2. Սարգսյան Կարեն
3. Հակոբյան Գրիգոր
4. Ամիրբեկյան Կոլյա
5. Անդրեասյան Վաղարշակ
6. Սիրադեղյան Արսեն
7. Սեյրանյան Սասունց
8. Քարհանյան Դավիթ

9. Սիմոնյան Գրիշա
10. Ավետյան Ռուսլան
11. Մարտիրոսյան Վահագն
12. Զաքարյան Խոսրով
13. Ոսկանյան Ռուբիկ
14. Փենինյան Հարություն
15. Փենինյան Հրայր
16. Տեր-Պետրոսյան Հոսեփ
17. Գալստյան Ստեփան
18. Պետրոսյան Սպարտակ
19. Թովմասյան Սուսաննա
20. Ավետիսյան Արսեն
21. Խաչատրյան Մայիս
22. Մանուկյան Վանիկ
23. Տոնոյան Արմեն
24. Հովհաննիսյան Արմեն
25. Ղուկասյան Արշավիր
26. Թունյան Արարատ
27. Ոփյան Մարատ

Ստեփանավան

1. Պառավյան Հովիկ
2. Այվազյան Անատոլի
3. Մարիկյան Սարգիս
4. Արոյան Նաիրի
5. Սուքիասյան Արթուր

Վանաձոր

1. Պապոյան Վազգեն
2. Պապոյան Տիգրան
3. Ճարոյան Տաթևիկ
4. Երիցյան Սուրեն
5. Շախկալյան Արմեն
6. Նոնինյան Սամվել
7. Շահնազարյան Արտաշես
8. Մատինյան Աբգար

ՀՀ օրենսդրությամբ ոստիկանության բաժին բերման ենթարկելու փաստի կապակցությամբ ծագող իրավահարաբերությունները չեն կարգավորվում: Ոստիկանության աշխատակիցների այս գործողություններն ի սկզբանե հանդիսանում են մարդու իրավունքների խախտումներ: Մասնավորապես՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ բերման են ենթակվում կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարտյալ, վկա, տուժող համարվող և առանց հարգելի պատճառի քննության չներկայացած անձինք:

2008 թ. փետրվարին և մարտին ոստիկանության բաժին բերման ենթարկված քաղաքացիներից ոչ մեկին, սակայն, նախապես գրավոր ծանուցմամբ ոստիկանություն չեն հրավիրել:

2. Բերման ենթարկված քաղաքացիներին ոստիկանության աշխատակիցները նա-

խապես չեն տեղեկացրել նրանց իրավական կարգավիճակի մասին: Այսինքն՝ քաղաքացիներին ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել ոչ հատուկ որոշմամբ: Սա կարող է ոստիկանության աշխատակիցների պաշտոնական լիազորությունների չարաշահում համարվել:

Կալանավորվածներ

Ոստիկանության բաժին բերման ենթարկված քաղաքացիների մի մասը կալանավորվել են ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածների համաձայն:

Մասնավորապես՝ կալանավորվել են հետևյալ քաղաքացիները.

1. Սիմոնյան Գրիշա
2. Զաքարյան Խոսրով
3. Փենինյան Հրայր
4. Ստեփան Գալստյան
5. Հոսեփ Տեր-Պետրոսյան
6. Աշոտ Մանուկյան
7. Զաքարյան Խոսրով
8. Արթուր Շահնազարյան:

Կամովին ոստիկանության Վանաձորի բաժին ներկայացածներ

Վանաձորցի Արթուր Շահնազարյանը, որը ևս մասնակցել է Երևանում կազմակերպված հանրահավաքին, կամովին ներակայացել է ոստիկանություն: Արթուր Շահնազարյանին 2 օր պահել են ոստիկանությունում, այնուհետև սրտի տագնապով տեղափոխել հիվանդանոց: Հիվանդանոցում 3 օր գտնվել է ոստիկանության հսկողության տակ, այնուհետև նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Իշխանության մարմինների գործողությունները օրինախախտներին պատասխանատվության ենթարկելիս

2008 թ. փետրվարի 21-ին ՀՀ ճանապարհային ոստիկանության աշխատակից Մերուժան Կարապետյանի կողմից Երևան գնացող քաղաքացիների ազատ տեղաշարժմանը խոչընդոտելու կապակցությամբ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը հաղորդում է ներկայացրել Լոռու մարզի դատախազություն:

ՀՀ ոստիկանությունը քրեական գործի հարուցումը մերժել է՝ Մերուժան Կարապետյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

Մեկ այլ դեպքում, երբ վանաձորցի Աշոտ Մանուկյանն ուղղակի մասնակցել է «Ազատության» հրապարակում կայացած խաղաղ ցույցին, նրա նկատմամբ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն ուղղված գործողություններ իրականացնելու համար քրեական գործ է հարուցվել:

Մյուս դեպքում էլ քրեական մեղադրանք է առաջադրվել Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Սոֆյա Քալանթարյանի նկատմամբ հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտելու համար, այն դեպքում, երբ Սոֆյա Քալանթարյանը հանձնաժողովի նախագահի հետ տարաձայնություններ ունենալուց հետո հեռացել է ընտրական տեղամասից:

Խաղաղ ցույցը բռնի ուժով ցրելիս մահացած 8 քաղաքացիական անձանցից մեկը եղել է վանաձորցի Դավիթ Պետրոսյանը: Նրա մահվան վկայականում նշված պատճառի համաձայն՝ Դավիթ Պետրոսյանը մահացել է հրազենային 2 վնասվածքից՝ 1-ը կրծքավանդակի, մյուսը՝ որովայնի:

ՄԱՍ 8

Հավելվածներ

Հավելված 1

«ՀՀ ԱՆ քրեկատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 153-Ն որոշում, ընդունված 3 օգոստոսի, 2006 թ.

Հոդված 46. Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի խուցն առնվազն պետք է ապահովված լինի սեղանով, նստարանով կամ աթոռով, հագուստի կախիչներով, կենցաղային իրերի պահարանով, ռադիոընդունիչով և աղբամանով:

Խցերում սարքավորվում են սանհանգույց և լվացարան՝ խմելու ջրի ծորակով:

Հոդված 65. Փակ, կիսափակ, կիսաբաց, բաց և բուժական ուղղիչ հիմնարկների շենքերում և շինություններում, ելնելով դատապարտյալներին պահելու՝ օրենքով նախատեսված պայմանների առանձնահատկություններից, պարտադիր տեղակայվում են բնակելի կացարանները կամ խցերը և անձնական իրերի պահախցերը:

Հավելված 2

«ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 413-Ն որոշում, ընդունված 10 ապրիլի, 2003 թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինը

Հ/հ ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը
1.	Հաց	գրամ	650
2.	Ձավարեղեն	գրամ	120
3.	Մակարոնեղեն	գրամ	30
4.	Միս, մսամթերք	գրամ	90/180/
5.	Կաթ /կաթի փոշի/	գրամ	100 /143/
6.	Ձուկ /առանց գլխի/	գրամ	100
7.	Կենդանական յուղ, մարգարին	գրամ	45
8.	Շաքար, շաքարավազ	գրամ	40
9.	Կերակրի աղ	գրամ	20
10.	Թեյ /թեյաբույսեր/	գրամ	2

11.	Տոմատի մածուկ	գրամ	5
12.	Դափնետերև	գրամ	0.1
13.	Կարտոֆիլ	գրամ	550
14.	Այլ բանջարեղեն	գրամ	250

Հավելված 3

«Կարգ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների տեղավորման» ՀՀ կառավարության N 1735-Ն որոշում՝ ընդունված 9 նոյեմբերի, 2006 թ.

14. Գիշերօթիկ հաստատությունում երեխաների խնամքն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան:

«ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 5 N 1324-Ն որոշում՝ ընդունված 5 օգոստոսի, 2004 թ

Չափորոշիչ V
Սնունդը

12. Մանկատանը երեխան ապահովվում է առողջ, անհրաժեշտ քանակի և տարիքին համապատասխան սննդով:
13. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը բժշկի ցուցումով, ապահովում է անհատական մոտեցում հիվանդ, թերսնվող և գերսնվող երեխաների նկատմամբ:
(13-րդ կետը փոփ. 08.09.05 N 1454-Ն)

Հավելված 4

«ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 5 N 1324-Ն որոշում՝ ընդունված 5 օգոստոսի, 2004թ

Չափորոշիչ XII.
Ազատ ժամանցը

30. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի ներգրավումն իրենց ազատ ժամանցի՝ զբաղմունքի տեսակների

ընտրությանը և պլանավորմանը:

(30-րդ կետը փոփ. 08.09.05 N 1454-Ն)

31. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխաների մասնակցությունն էքսկուրսիաներին, սպորտային և մշակութային միջոցառումներին:

(31-րդ կետը փոփ. 08.09.05 N 1454-Ն)

Հավելված 5

Գիշերօթիկ հաստատության երեխաների հիվանդությունների պատկերը

Մոնիթորինգի իրականացման պահին /2008թ. հոկտեմբեր-նոյեմբեր/ երեխաների մոտ առկա էին հետևյալ հիվանդությունները.

- լսողության խանգարում – 2 երեխա՝ 4-րդ աստիճանի խուլ-համրություն, 1 երեխա՝ 2-րդ աստիճանի խուլ-համրության
- էպիլեպսիա - 2 երեխա, որոնցից մեկն ունի նաև կարճատեսություն
- պարբերական հիվանդություն* – 2 երեխա, որոնցից 1-ի մոտ հիվանդությունը չհաստատված է, չկա բժշկական եզրակացություն
- խրոնիկ տոնզիլիտ /նշիկների բորբոքում/ - 2- 3 երեխա
- ջրծաղիկ – 6 երեխա
- բրոնխիտ – 2 երեխա, որոնցից 1-ը՝ խրոնիկ
- բրոնխիալ ասթմա - 1 երեխա**
- աթերոմա միջքիակային շրջանում – 1 երեխա
- մազաթափություն – 1 երեխա
- քթի միջնապատի թեքություն – 3 երեխա
- ձախ ստորին վերջույթի կարճացում – 1 երեխա
- գիշերային անմիզապահություն – 2 երեխա՝ խիստ արտահայտված, որոնցից 1 –ը նյարդաբանի հսկողության տակ է***
- շլություն – 1 երեխա
- կարիես, գրիպ, անգինա - շարժը փոփոխական է

* Երեխաներից մեկի մոտ առկա է պարբերական հիվանդություն, որը վերջին անգամ 2008 թ. ամռանն է նոպա ունեցել շնորհիվ այն բանի, որ մշտապես օգտագործում են անհրաժեշտ դեղամիջոցը:

**Բրոնխիալ ասթմայով հիվանդ երեխան, որը նախկինում անընդհատ նոպաներ է ունեցել, մշտապես հսկողության տակ է, և նոպաները կրճատվել են: Տարվա մեջ նոպաները ընդամենը մի քանի անգամ են կրկնվում և թեթև ընթացք են ունենում:

***Գիշերամիզություն ունեցող երեխաների համար բժիշկը հատուկ ծրագիր է մշակել, որի համաձայն՝ գիշերը 2 անգամ դայակները պետք է արթնացնեն երեխային և ուղարկեն միզելու: Այդ ամենն արվում է, որպեսզի երեխաների մոտ ռեֆլեքս ձևավորվի:

2008 թ. աշնանը քաղաքում տարածված ջրի վարակի ժամանակ հաստատության 21 երեխաներ վարակվել են ինֆեկցիոն հիվանությամբ, որը սակայն, թեթև ընթացք է ունեցել: Երեխաներից 4-ը հիվանդանոցային բուժում են ստացել «Վանաձորի

ինֆեկցիոն» և «Նարեկ» հիվանդանոցներում: Այդ ընթացքում հաստատության բուժանձնակազմը համագործակցել է Լոռու մարզի հիգիենիկ և հակահամաճարակային կենտրոնի հետ, ախտահարել են ամբողջ հաստատությունը, երեխաներին եռացրած ջուր են տվել: Կանխարգելիչ միջոցառումներ են կատարվել նաև գրիպի դեմ. ձեթ ու սխտոր են դրել սենյակներում:

Հաստատության 2 հիվանդասենյակներում ուսումնասիրությունների ժամանակ պառկած էին 3 երեխաներ: Նրանցից մեկի մոտ մաշկային հիվանդություն էր /քոս/, 1-ի մոտ՝ սուր բրոնխիտ՝ թեթև ընթացքով: Հիվանդ երրորդ երեխան շնչառական հիվանդություն ուներ և ջերմում էր:

Հավելված 6

ՀՀ նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում և քվեարկության օրն իրականացված խախտումներն ըստ առանձին տեղամասերի

Ճնշումներ, սպառնալիքներ

• Օրինաց երկիր կուսակցության (ՕԵԿ) Վանաձորի գրասենյակի ղեկավար Խաչիկ Հարությունյանի կողմից տրված տեղեկության համաձայն՝ Բազում թաղամասում գտնվող ՕԵԿ-ի շտաբը փակվել է, որովհետև տարածքի տիրոջը ահաբեկել են, և նա հրաժարվել է տրամադրել իր տարածքը՝ որպես ՕԵԿ-ի նախընտրական շտաբ:

• Հունվարի 25-ի գիշերը անհայտ անձինք կոտրել են ՕԵԿ-ի Վանաձորի գրասենյակի ապակիները, պոկել ցուցապաստառները:

• Վանաձորում 2008 թ. փետրվարի 1-ի առավոտյան՝ ժամը 1:00-ի սահմաններում, անհայտ մեքենան կանգնել է Լևոն Տեր-Պետրոսյանի կենտրոնական շտաբի մոտ, որից հետո պայթյուն է եղել: Պարզվել է, որ բենզինով լի 2 շամպայնի շշեր են պայթեցրել գրասենյակի դռան մոտ:

• Վանաձոր քաղաքում մասնավոր խանութների տերերը համաձայնել են Վ. Հովհաննիսյանի պաստառները փակցնել իրենց խանութում, սակայն հաջորդ օրը հանել են, քանի որ Սերժ Սարգսյանի կողմնակիցները ճնշում են գործադրել, սպառնացել, որ հարկային մարմինների հետ խնդիրներ կունենան:

• Վանաձորի Տարոն 4 թաղամասում, Մարգահովիտ գյուղում բացված Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբերը փակվել են: Տարածքի սեփականատերերը բացատրել են, որ իրենք նախազգուշացվել են այն մասին, որ Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի համար տարածք տրամադրելու դեպքում իրենք խնդիրներ կունենան իշխանության մարմինների հետ:

• Տաշիրում Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի պետին սպառնացել են և շտաբի մուտքի մոտ այրել քարոզչապաստառները:

• Փետրվարի 7-ին նախընտրական քարոզչության նպատակով Սպիտակից Շիրակամուտ /Նալբանդ/ գնալու ճանապարհին Լևոն Տեր-Պետրոսյանին փորձել է խանգարել առանց պետհամարանիշի մի ավտոմեքենա: Սակայն Լևոն Տեր-Պետրոսյանի պահակախումբը կանխել է միջադեպը:

• Տաշիրում սպառնացել են Լևոն Տեր-Պետրոսյանին, արգելել են մտնել Տաշիր, եղել է «ԼԵՎՈՆ, ՀԵՌԱՑԻ՛Ր, ԴՈՒ ՄԻ ԱՆԳԱՄ ՔԱՆԴԵՑԻՐ» բովանդակությամբ պաստառ:

• Ստեփանավանում քաղաքացիները վախեցել են մտնել Մարշալ Բաղրամյանի 12 հասցեում գտնվող Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբ նույնիսկ իրենց բարեկամին տեսնելու համար: Շտաբի պետի խոսքերով՝ հանձնաժողովների անդամներին առաջարկել են 2000 ԱՄՆ դոլար, որ նրանք հանգիստ մնան ու չխանգարեն: Այս շտաբի աշխատողներից մեկը՝ 65-ամյա թոշակառու, 32/34 ընտրատեղամասային

ընտրական հանձնաժողովի անդամ Ֆիրդուս Թորոսյանը, փետրվարի 11-ի երեկոյան՝ ժամը 23:30-ին, 093162589 հեռախոսահամարից կարճ հաղորդագրություն է ստացել հետևյալ բովանդակությամբ. «Քանի դեռ ուշ չէ, հե՛տ կանգնիր լևոնականներից»:

• Վանաձորում ոստիկանության աշխատակիցը փետրվարի 14-ին Լևոն Տեր-Պետրոսյանի կենտրոնական շտաբի աշխատողից, որը որսորդմիության անդամ է և զենքի օրինական պահպանման թույլտվություն ունի, վերցրել է զենքը: Նույն շտաբի մեկ այլ աշխատակցի առանց բացատրության հրավիրել են ոստիկանություն:

• Սյունիքի մարզպետն իր մոտ է հրավիրել Յոդաքլուի դպրոցի տնօրեն Համլետ Թորոսյանին, որը ՀՅԴ անդամ է: Մարզպետը վերջինիս առաջարկել է չաշխատել ՀՅԴ-ի համար, հակառակ դեպքում՝ կարող է անգործ մնալ:

• Ալավերդիում պետական և մասնավոր հիմնարկների աշխատակիցներին սպառնացել են, որ եթե մասնակցեն նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպմանը, աշխատանքից կազատվեն, եթե չմասնակցեն նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի հանդիպմանը, էլի կազատվեն:

• ՀՅԴ Ալավերդու շտաբի պետ Սասուն Սիմոնյանի խոսքերով՝ Ալավերդու շրջանի գյուղապետերն արգելում են համագյուղացիներին մասնակցել ՀՅԴ-ի նախընտրական հանդիպումներին:

• Ալավերդիում աշխատանքից ազատվածներից մեկը մասնակցել է նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի բոլոր նախընտրական հանդիպումներին:

• Ալավերդիում նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբից տեղեկացրել են, որ այն անձանց, ովքեր զրուցում են իրենց հետ կամ այցելում շտաբ, հետո զրույցի են հրավիրվում Ազգային անվտանգության ծառայություն Ալավերդու աշխատակիցների կողմից:

• Ալավերդիում աշխատանք ունեցող քաղաքացիներին սպառնացել են, որ ընտրատեղամասերում Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ լինելու դեպքում կկորցնեն աշխատանքը:

Քարոզչանյութերի տարածում

• Վանաձորի Ավտոմատիկա գիտահետազոտական ինստիտուտում գործել են ՀՀ նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի և Վահան Հովհաննիսյանի նախընտրական շտաբերը, որոնց ղեկավարները տեղեկացրել են, որ շտաբերի համար հատկացված տարածքների մոտ իրենց չեն թույլատրել փակցնել թեկնածուների քարոզչապաստառները: Նույն տարածքում, սակայն, փակցվել են Սերժ Սարգսյանի քարոզչապաստառները:

• ՀՀ նախագահի թեկնածուներ Սերժ Սարգսյանի, Վահան Հովհաննիսյանի, Լևոն Տեր-Պետրոսյանի, Արթուր Բաղդասարյանի նախընտրական քարոզչանյութերը փակցվել են նաև այն հասցեներում, որոնք համայնքի ղեկավարի կողմից այդ նպատակով չեն առանձնացվել:

• Սերժ Սարգսյանի քարոզչապաստառը փակցված է եղել Վանաձորի Լ. Արեշյանի անվան թիվ 1 հիվանդանոցում:

• Վանաձորում միևնույն տեղում փակցված են եղել Սերժ Սարգսյանի, Լևոն Տեր-Պետրոսյանի A4 ֆորմատի 1-ից ավելի քարոզչապաստառներ, որոնք ավելի մեծ տարածք են զբաղեցնում, քան սահմանված է համայնքի ղեկավարի որոշմամբ:

• Լոռու մարզի Օձուն գյուղի գյուղապետ Մելիք Այվազյանը հայտարարել է, որ քարոզչապաստառներ փակցնելու տեղերի վերաբերյալ համայնքի ղեկավարը որոշում չի կայացրել, բայց գյուղում ամեն տեղ նախագահի թեկնածուների քարոզչապաստառներն են փակցվել:

• Հունվարի 25-ին անհայտ անձինք Վանաձորի Դիմաց թաղամասում բնակելի շենքերից մեկի պատից պոկել և օրը ցերեկով այրել են Արթուր Բաղդասարյանի քարոզչապաստառը:

• Վանաձորում հունվարի 27-ի առավոտյան անհայտ անձինք պատռել են Լևոն Տեր-Պետրոսյանի պաստառները, դրանց վրա սվաստիկա պատկերել ու վիրավորական արտահայտություններ գրել:

• Ավելի վաղ Վանաձորում Լևոն Տեր-Պետրոսյանի կենտրոնական շտաբի մուտքի, ինչպես նաև դիմացի մայթի վրա գտնվող ՀՀՇ գրասենյակի մուտքի վերևում փակցված նախկին նախագահի նկարները ներկով սևացվել և պատռվել են:

Նույն ձեռագրով ժամը 20:30-ից հետո սևացվել են «Այլընտրանք» նախաձեռնության մուտքի դուռը, ֆաշիստական տարբերանշան նկարել «Այլընտրանք» և ՀՀՇ գրասենյակի մուտքի դռներին: Լևոն Տեր-Պետրոսյանի պաստառների վրա սև ներկով գրել են՝ «Քոռ շուն», «Քոռ սրիկա» արտահայտությունները:

• Վանաձորի կենտրոնական փոստի և «Գուգարք» հյուրանոցի շենքի վրա փակցված Սերժ Սարգսյանի քարոզչապաստառները պոկվել են, նույն քարոզչապաստառների վրա սվաստիկա են պատկերվել:

• Վանաձորում փետրվարի 11-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, միանգամից պատռել են Վահան Հովհաննիսյանի 20 քարոզչապաստառ:

• Վանաձորում ներքաղաքային բոլոր երթուղային միկրոավտոբուսների, տաքսիների վրա ամրացվել են ՀՀԿ-ի դրոշակներ:

• Ալավերդու ներքաղաքային տրանսպորտի վրա ամրացված են եղել ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի քարոզչապաստառները, երթուղային տաքսիների վրա՝ ՀՀԿ դրոշակներ:

• Սյունիքի մարզպետարանի ու Կապանի քաղաքապետարանի ծառայողական ավտոմեքենաների վրա փակցվել են «Առա՛ջ, Հայաստան» կարգախոսով դրոշակներ:

• ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչներին թույլ չեն տվել իրենց դրոշները փակցնել պոլիկլինիկայի շենքի վրա: Բացատրել են, որ աշխատակիցները համակրում են ՀՀԿ թեկնածու Սերժ Սարգսյանին, և պոլիկլինիկայի շենքի ճակատին ամրացրել են ՀՀԿ-ի դրոշակները:

• Սերժ Սարգսյանի Սյունիքի մարզային նախընտրական շտաբից բողոքել են, որ իրենց թեկնածուի քարոզչական պաստառները Կապան ու Մեղրի քաղաքներում անհայտ մարդկանց կողմից պոկվել են:

• ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի Ալավերդու նախընտրական շտաբից տեղեկացրել են, որ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի բոլոր քարոզչանյութերը պատռվել են: Առաջարկել են նորից փակցնել, բայց իրենց թույլ չեն տվել:

• Սպիտակի սոցիալական ծառայությունների շենքում փակցված է եղել Սերժ Սարգսյանի քարոզչապաստառը:

• Սպիտակի ՕԵԿ-ի շտաբի անդամները տեղեկացրել են, որ պատռել են ՀՀ նախագահի թեկնածու Ա. Բաղդասարյանի քարոզչապաստառները: Դրա համար ոստիկանությանն են դիմել, բայց ապարդյուն:

Նախընտրական խոստումներ, ծառայությունների մատուցում, ընտրակաշառքներ

• Վանաձորում հունվարի 29-ին ՀՀ նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարյանի շտաբից 2 կին գնացել են Քիմգործարանի տնակային ավան և բնակիչներին խոստացել տալ ալյուր ու շաքարավազ՝ Ա. Բաղդասարյանին ընտրելու դիմաց:

• Վանաձորում Տիգրան Մեծի 59 հասեում գործող ՀՀ նախագահի թեկնածու Տիգրան Կարապետյանի նախընտրական շտաբում քաղաքացիների առողջության հետ կապված, մասնավորապես՝ դեղորայքի, ակնոցների տրամադրման, դիմումներ են հավաքել: Շտաբի պետի հավաստմամբ՝ բոլոր դիմումներին դրական պատասխան է տրվել:

• Վանաձորում քաղաքացիներին ՀՀԿ շտաբի աշխատակիցները Սերժ Սարգսյանի օգտին մեկ քվեի համար 5.000 դրամ են խոստացել:

• ՀՀ սպորտի ու երիտասարդության հարցերով փոխնախարար, «Սյունյաց արծիվներ» ՀԿ-ի հիմնադիր նախագահը փետրվարի 5-ին «Արծվատուն» դահլիճում հավաքել է կրթական հաստատությունների ղեկավարներին, հյուրասիրություն կազմակերպել ու խոսել նախագահական ընտրությունների մասին՝ փաստելով, որ ամենահարմար թեկնածուն ՀՀ վարչապետն է:

• Օձունի գյուղապետարանում բնակիչների առջև՝ նպաստ ստանալու նպատակով տեղեկանք տրամադրելու համար պայման են դրել՝ ընտրել նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին:

• Գանձապետ գյուղում գյուղապետը կանչել է համագյուղացիներին և գրանցել անձնագրային տվյալները: Գրանցված յուրաքանչյուր ընտանիքին խոստացել են քվեարկության նախորդ օրը կամ հենց քվեարկության օրը 25 կգ ալյուր տալ:

• Փետրվարի 7-ին Վանաձորում կայացած Սերժ Սարգսյանի նախընտրական հանդիպման համար քաղաքի երթուղային միկրոավտոբուսները, «Վանաձոր» երթուղային տաքսին աշխատել են անվճար:

• Ստեփանավանի քաղաքապետարանի նախկին շենքում տեղակայված Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի պետի խոսքերով՝ շտաբում քաղաքացիների համար պարբերաբար կազմակերպվել են ժողովներ, օրական 10-20 քաղաքացի է մասնակցել, որոնք դիմում են իրենց հուզող տարբեր հարցերով:

• Տաշիրում տեղակայված Սերժ Սարգսյանի կենտրոնական շտաբի պետը քաղաքապետ Նշան Սողոյանն է եղել: Շտաբի աշխատակիցների խոսքերով՝ քաղաքացիներն իրենց դիմել են տարբեր հարցերով՝ հիմնականում գյուղատնտեսական: Շատ քաղաքացիներ դիմել են շտաբին՝ ցուցակներում անճշտություններն ուղղելու համար: Իրենք օգնել են բոլոր դիմողներին:

• Ստեփանավանում Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար քաղաքացիներին խոստացել են 10.000-ական դրամներ:

• Ըստ Ալավերդու քաղաքապետի տեղակալ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի կենտրոնական նախընտրական շտաբի պետ Արտավազդ Վարոսյանի՝ իրենց նախընտրական հանդիպումներն անց են կացվել քաղաքի առանձին թաղամասերում, վեր են հանվել բնակիչների խնդիրները և դրանց լուծումներ տրվել, օրինակ՝ վերանորոգել են ջրի սառած խողովակները, կոյուղիները:

• ՀԺԿ տարածքային կազմակերպության ղեկավար Լարիսա Փարեմուզյանի խոսքերով՝ Ալավերդիում և՛ տեղական համայնքային բյուջեից, և՛ կառավարության պահուստային ֆոնդից զգալի ավելացել է սոցիալական օգնություններին հատկացվող գումարը:

• Ալավերդիում «ACP» գործարանում աշխատակիցներին 10.000-15.000 դրամ հավելավճար են տվել՝ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու դիմաց:

• Տիգրան Կարապետյանի՝ Վանաձորում գործող կենտրոնական գրասենյակի ղեկավար Գեղեցիկ Ղաչդյանի տեղեկատվությամբ՝ փետրվարի 13-ի երեկոյան Խորենացու 5 հասցեի նախընտրական շտաբի պաստառը գողացել են և պոկել շտաբի դռան վրա փակցված A 4 ֆորմատի բուկլետը:

• Փետրվարի 17-ին Վանաձորի Վարդանանց 122 և Զաքարյան 15 հասցեներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդներն ականատես են եղել, թե ինչպես են քաղաքացիներին ընտրակաշառք բաժանում:

Վարչական ռեսուրսների չարաշահում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող քարոզչություն

• Վանաձորում ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի գլխավոր շտաբի պետը հանդիսացել է Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, իսկ մարզային շտաբի պետը՝ մարզպետ Ա. Քոչարյանը, որոնք զուգահեռաբար շարունակել են իրենց պաշտոնավարումը:

• Լոռու մարզպետարանի, Վանաձորի քաղաքապետարանի, դպրոցների, մանկապարտեզների և պետական այլ հիմնարկների աշխատակիցներին պարտադրվել է Սերժ Սարգսյանի օգտին ստորագրություններ հավաքել: Մշակվել է տվյալների գրանցման հատուկ հարցաթերթիկ, որը պարունակել է քաղաքացու անուն ազգանունը, անձնագրի տվյալները, հասցեն, հեռախոսի համարը, ստորագրությունը: Յուրաքանչյուր աշխատակից պարտավորվել է Սերժ Սարգսյանի օգտին նվազագույնը 25 ստորագրություն ներկայացնել:

• Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում մաթեմատիկա ֆակուլտետի հեռակա բաժնի դեկանը 2-3-րդ դասաժամի ընթացքում հենց լսարանում նախընտրական քարոզչություն է իրականացրել, տեղեկացրել, որ ամբողջ ինստիտուտը Հայաստանի հանրապետական կուսակցության թեկնածությունն է պաշտպանում և ցանկալի կլինի, որ ողջ ուսանողությունը նույնպես քայլի իրենց հետ:

• Վանաձորում նախատեսված Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպումից առաջ Լոռու մարզպետը, Վանաձորի քաղաքապետը հրահանգել են աշխատակիցներին ոչ մի դեպքում չմասնակցել այդ հանդիպմանը: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում նույն հանդիպման կապակցությամբ ռեկտորատից զգուշացրել են, որ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթն ամբողջությամբ տեսագրվելու է և ինստիտուտի այն ուսանողները, ովքեր կմասնակցեն այդ հանդիպմանը, հետո խնդիրներ կունենան:

• Ալավերդի քաղաքում Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական ելույթից առաջ ներքաղաքային տրանսպորտը հանկարծակի դադարել է աշխատել: Ճոպանուղին, որ սովորաբար ընդմիջում է իր աշխատանքը 13:00-14:00-ն, այդ օրը ընդմիջել է 13:00-15:00-ն, երբ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը նախատեսվել է 14:00-ին:

• Օձուն գյուղում նույն օրը նախատեսված Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպման նպատակով նրա կողմնակիցներից մեկը ցանկացել է գյուղի կենտրոնում պաստառներ փակցնել, գյուղապետը չի թույլատրել: Նրանց միջև վիճաբանություն է բռնկվել, գյուղապետը հարվածել է Լևոն Տեր-Պետրոսյանի կողմնակցին, որի արդյունքում նրա քիթը կոտրվել է:

• Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկայում փետրվարի 6-ին՝ Վանաձոր Սերժ Սարգսյանի այցելության նախօրեին, տեղի է ունեցել ժողով, որտեղ բոլոր աշխատակիցների անուն-ազգանունները գրանցել են և պահանջել մասնակցել փետրվարի 7-ին Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանը: Նույնն իրականացվել է հանրակրթական բոլոր դպրոցներում, մանկապարտեզներում, ԲՈՒՀ-երում: Լոռու մարզպետարանից դպրոցների տնօրեններին հրահանգել են, որ յուրաքանչյուրն իր դասվարների միջոցով ավարտական դասարաններից 100 աշակերտ ներկայացնի հանդիպմանը:

• Մարգահովիտ գյուղում ավարտական դասարանում ուսուցչուհին սպառնացել է, որ Սերժ Սարգսյանի օգտին չքվեարկելու դեպքում աշակերտներն ավարտական վկայականներ չեն ստանա:

• Սյունիքի մարզպետարանի համապատասխան վարչությունների մասնագետները հրահանգել են բյուջետային հիմնարկների աշխատակիցներին /մանկավարժներ, բուժաշխատողներ, մանկապարտեզի աշխատակիցներ/, որպեսզի չմասնակցեն փետրվարի 12-ին կայանալիք ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպմանը: Միաժամանակ հորդորել են հնարավորության սահմաններում

իրենց ծանոթ-բարեկամներին էլ տեղեկացնել այդ մասին:

• «Հայէլցանցեր» ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի, Կապանի բժշկական կենտրոնի, դպրոցների, մանկապարտեզների, հարկային տեսչության ղեկավարները հորդորել են իրենց աշխատակիցներին բերել անձնագրային տվյալները ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար:

• Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանն ու ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի մարզային նախընտրական շտաբի պետ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանն իրենց մոտ են հրավիրել Կապանի տարածաշրջանի այն գյուղապետերին /թվով 5/, ովքեր ՀՅԴ անդամ են: Վերջիներիս նրանք ստիպել են իրենց թեկնածուի օգտին ապահովվել գյուղացիների 70 տոկոսի ձայները:

• Աշխատանքային այցով փետրվարի 11-ին Սյունիքի մարզ է այցելել ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը, ով Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ու Կապանի քաղաքապետ Արմեն Կարապետյանի ուղեկցությամբ այցելել է Կապանի նախկին լեռնահարստացման կոմբինատ՝ ներկայիս «Դինո ոլդ Մայնինգ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերություն: Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանն ու Կապանի քաղաքապետ Արմեն Կարապետյանն աշխատակիցներին ուղղակի կոչ են արել նախագահական ընտրություններում քվեարկել ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի օգտին: Անուղղակի կարգով քարոզչություն է արել նաև ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը՝ նշելով, որ «այսպես հերթով ամեն ինչ իր բնականոն հունով կգնա միայն այն ժամանակ, երբ ներկայիս իշխանությունները լինեն պետության ղեկին»:

• Ալավերդու կրթության վարչության պետ Էմիլ Այբեկյանը պաշտոնապես հայտարարել է նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի աշխատակիցներին, որ դպրոցներում մինչև ժամը 16:00-ն արգելվում է աշխատակիցների հետ հանդիպումներ: Մինչդեռ դպրոցների տնօրենները ծնողական ժողովներ են կազմակերպել և հայտարարել. «Ընտրե՛ք Սերժին, որ փոփոխություն չլինի» կամ «Թե՛ նախագահը, թե՛ վարչապետը, թե՛ համայնքապետերը պիտի ՀՀԿ անդամներ լինեն, որ լավ լինի»:

• Վանաձորի Գրիգոր Լուսավորիչ հասցեում տեղակայված Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբում փետրվարի 4-ին՝ 15:30-ի սահմաններում, կազմակերպվել է ժողով, որտեղ քարոզչություն է արել ՏԻՄ աշխատակից Գրիշա Պառավյանը՝ կոչ անելով Սերժ Սարգսյանի հետ կայանալիք հանդիպմանն իրենց հետ տանել նաև ծանոթներին, բարեկամներին, հարազատներին:

• Մարգահովիտ գյուղի դպրոցում՝ ավարտական դասարանում, դասի ընթացքում ուսուցիչներից մեկը քարոզչություն է արել Սերժ Սարգսյանի օգտին:

• 2008թ. փետրվարի 12-ին Ստեփանավանում գործող Սերժ Սարգսյանի կենտրոնական նախընտրական շտաբում, որը գործել է Մարշալ Բաղրամյանի 65 հասցեում և միաժամանակ հանդիսացել է նախկին ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական տեսչության օպերատիվ հետախուզության աշխատատեղին, հրավիրվել են Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանի գյուղապետերին: Կազմակերպության դիտորդներին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ գյուղապետերին Ստեփանավան հրավիրել է ԱԺ պատգամավոր, Հայաստանի հանրապետական կուսակցության խմբակցության ղեկավար Կարեն Կարապետյանը, աշխատանքային ժամին՝ 12:00-12:40 ժամանակահատվածում:

• Ալավերդու շրջանի 30 համայնքների ղեկավարներ հանդիսացել են Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբերի պետեր և արձակուրդի մեջ չեն գտնվել:

• Սպիտակում ՀՅԴ-ի նախընտրական շտաբից տեղեկացրել են՝ Սպիտակի 4-րդ դպրոցում մանկխորհրդի ժամանակ քարոզչություն է արվել Սերժ Սարգսյանի օգտին:

• Փետրվարի 16-ին Վանաձորի թիվ 9 դպրոցի տնօրեն Էդիտա Վարդանյանը, որը միաժամանակ նույն դպրոցում տեղակայված ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն էր, համադպրոցական ծնողական ժողով է հրավիրել և քարոզչություն իրականացրել Սերժ Սարգսյանի օգտին:

Քվեարկության կարգի խախտումներ

29/01 Վանաձորի թիվ 3 գիշերօթիկ դպրոց

• Ժամը 15:20-ի սահմաններում եղել է կուտակում, հանձնաժողովի նախագահը դիտորդի դիտողությունից հետո հատուկ միջոցառումներ է ձեռնարկել կուտակումը կանխելու նպատակով:

• Հանձնաժողովի նախագահը կնիքը հանելուց անմիջապես հետո թանաքոտել է՝ չստուգելով կնիքի չոր լինելը:

• Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը ժամը 09:05-ի սահմաններում հերթականությամբ վերցրել է ընտրողների անձնագրերը և նայել: Դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը կանխել է խախտումը:

• Հանձնաժողովի նահագահը Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձի իրավունքն է խախտել՝ չտրամադրելով տեղեկություն արդեն քվեարկած ընտրողների քանակի վերաբերյալ:

29/03 Վանաձորի 5-րդ դպրոց

• Ժամը 13:30-ի սահմաներում ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Վ. Եխշատյանն ինքն է փոխարինել քվեարկության ծրարները կնքող և անձնագրերի վերջին էջը դրոշմակնքող հանձնաժողովի անդամին: Այդ ընթացքում մի քաղաքացու անձնագրում դրոշմակնիք չի դրվել: Դիտորդը պահանջել է արձանագրել խախտումը, նախագահը հրաժարվել է: Դիտորդը կազմել է հատուկ կարծիք, սակայն հանձնաժողովի նախագահը չի ստորագրել:

• Ժամը 10:00-13:00-ն ընտրատեղամասում կուտակումներ են եղել, դիտորդի միջամտությամբ հանձնաժողովի նախագահը սկսել է քվեարկողներին մեկ-մեկ թողնել ներս:

• քվեախցիկները դրված են եղել սեղանին՝ դեմքով դեպի հանձնաժողովը, քվեախցիկների ներքևի մասը բաց է եղել և քվեարկելիս քաղաքացիները քվեաթերթն այնպես են պահել, որ քվեարկությունն երևացել է:

29/08 Վանաձորի թիվ 17 միջնակարգ դպրոց

• Ձիվորական համազգեստով մի քաղաքացի քվեարկելուց հետո հեռախոսով նկարել է իր քվեաթերթիկը ու դուրս եկել:

• «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդը աշխատել է Ս. Սարգսյանի օգտին:

• 0532 L պետհամարանիշով միկրոավտոբուսն անընդհատ քաղաքացիների է տեղափոխել ընտրական տեղամաս:

• Ժամը 10:45-ին 2334 L պետհամարանիշով միկրոավտոբուսը քաղաքացիներին տեղափոխել է տեղամաս:

• Ժամը 10:45-ին տեղամասում 15-ից ավելի ընտրող է եղել, այդ նույն ժամին կուտակումներ է եղել նաև բակում:

• Ժամը 13:00-ին ընտրական տեղամասում եղել է 23 ընտրող:

• Ժամը 13:10-ին ընտրողներից մեկը բաց է քվեարկել:

29/10 Վանաձորի թիվ 40 մանկապարտեզ

• Տեղամասում պարբերաբար ներկա են գտնվել կողմնակի անձինք, սկզբում հանձնաժողովի նախագահը ոչինչ չի արել, սակայն, երբ դիտորդը ներկայացրել է իր դիտողությունները, նախագահը դուրս է հրավիրել կողմնակի անձանց՝ հրաժարվելով արձանագրություն կազմել:

• Տեղամասում միաժամանակ ներկա է գտնվել Սերժ Սարգսյանի երկու վստահված անձ, որի վերաբերյալ ևս նախագահն արձանագրություն չի կազմել և դուրս է հրավիրել միայն դիտորդի դիտողությունից հետո:

• Ընտրողներն առանց քվեաթերթիկները ծրարում տեղավորելու դեպի դուրս ծալած են դուրս եկել քվեախցերից:

29/11 Վանաձորի թիվ 30 դպրոց

• Ժամը 12:40-14:00-ն միանգամից քվեարկության է մասնակցել 273 մարդ, որի հետևանքով տեղամասում կուտակումներ են եղել:

• Ժամը 14:00-ի սահմաններում մի քաղաքացի է ներկայացել քվեարկության ու բողոքել, որ իր անձնագիրը տարել են՝ խոստանալով, որ փող կտան: Նույն բողոքներով ժամը 17:30-ին, տեղամաս է ներկայացել մեկ այլ կին: Վերջինիս մի տղամարդ դուրս է տարել, հետո միասին ներս են եկել, կինը քվեարկել է և փորձել է ցույց տալ, որ ինքը խոսքի տերն է:

• Քվեաթերթիկները հաշվելիս դիտորդն արձանագրել է, որ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմ քվեարկած 1 թերթիկ դրված է Սերժ Սարգսյանի փաթեթում: Սերժ Սարգսյանի քվեաթերթիկների փաթեթը վերահաշվարկելուց հետո պարզվել է, որ Լևոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկած ևս 6 թերթիկ հաշվել են Սերժ Սարգսյանի օգտին:

29/17 գյուղ Ազնվաձոր, ակումբի շենք

• Քվեարկածների 50 տոկոսը քվեարկել է ուրիշի օգնությամբ:

29/19 գյուղ Դարպաս, համայնքի կենցաղի տուն

• Ընտրական տեղամասում ընտրողների թիվը գերազանցել է 15-ը, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը կանխել է խախտումը:

• Մինչև 50 մ տարածության վրա ընտրողների և ավտոմեքենաների կուտակում է եղել, հանձնաժողովի նախագահը դիտորդի դիտողությունից հետո կանխել է միջադեպը:

29/28 Սպիտակի թիվ 3 դպրոցի շենք

• Ժամը 18:30-20:00-ն ընտրական տեղամասում կուտակումներ են եղել, դիտորդի զգուշացումից հետո հանձնաժողովի նախագահը միջոցառումներ է ձեռնարկել կուտակումները կանխելու համար:

29/29 Սպիտակի թիվ 2 միջնակարգ դպրոց

• Ընտրական տեղամասից 40 մ հեռավորության վրա փակցված են եղել Սերժ Սարգսյանի նախընտրական պաստառները, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը խանութի աշխատողին դիմել է պաստառները հանելու համար: Հանձնաժողովի նախագահը մերժել է: Դիտորդի կողմից կազմվել է արձանագրություն:

• «07» տաքսի ծառայության աշխատակիցները քաղաքացիներին տեղափոխել են ընտրական տեղամասեր:

• Ընտրողների մի մասը խցիկում քվեարկելուց հետո առանց քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու մոտեցել է քվեատուփի մոտ: Հանձնաժողովի նախագահը քայլեր չի ձեռնարկել նման դեպքերը կանխարգելելու համար:

• Անչափահաս քաղաքացին փորձել է օգնել ընտրել իր տատիկին և պապիկին: Դիտորդի դիտողությունից հետո կանխվել է:

• Մի ընտրող քվեախցիկից դուրս գալուց հետո հանձնաժողովի անդամներին է մոտեցել, ցույց տվել քվեաթերթիկը և բարձրաձայն արտասանել, թե ում է ընտրել:

• Ոչ սահմանված նշումով քվեաթերթիկը ճանաչվել է վավեր Սերժ Սարգսյանի վստահված անձի արձագանքից հետո:

• Տարեց ընտրողը դիտորդին խոստովանել է, որ ընտրության գալիս իրեն 5000 դրամ են տվել:

30/02 Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոց

• Վստահված անձինք, «Ընտրությունը քոնն է» և «Ֆրիդրոֆ Նանսենի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ների դիտորդները ժամանակ առ ժամանակ մոտեցել են ընտրության եկած քաղաքացիներին, զրուցել նրանց հետ:

• Վստահված անձինք զանգել են իրենց ծանոթ ընտրողներին և կանչել ընտրելու:

• Մի քաղաքացի բարձրաձայն հայտնել է, թե ում է ընտրելու:

• Ընտրողներից մեկը առանց քվեախցիկ մտնելու քվեաթերթիկի վրա նշում է կատարել, սակայն, արձանագրություն չի կազմվել:

• Ժամը 16:30-ից տեղամասում մեծ կուտակումներ են եղել:

• 18:50-ին մի քաղաքացի ցանկացել է ընտրել անձնագրային բաժնից վերցրած տեղեկանքով, որը չի հանդիսացել 9-րդ ձև, դիտորդի դիտողությունից հետո խախտումը կանխվել է:

• Արդյունքներն ամփոփելիս 4 անվավեր քվեաթերթիկ ճանաչվել են վավեր, 2 քվեաթերթիկը Սերժ Սարգսյանի օգտին է եղել, 2-ը՝ Արթուր Բաղդասարյանի:

• Ժամը 20:00-ից հետո տեղամասում բացի ոստիկաններից ներկա է եղել նաև դպրոցի պահակը:

• Տեղամասում պարբերաբար ներկա գտնվող քաղաքացիներից մեկը սպառնացել է ընտրողներից մեկին:

• Քաղաքացիներն ընտրության գալուց առաջ անձնագրերը ձեռքներին մտել են մոտակայքում գտնվող Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբ, այնուհետև տեղամաս՝ քվեարկելու:

• Մի քաղաքացի, որը աշխատել է Ս. Սարգսյանի նախընտրական շտաբում, ընտրելուց հետո իր հետ ընտրության եկած մոտ 4 հոգու անձնագրերը հավաքել է՝ ասելով, որ կտանի շտաբ, հետո շենքում կտա իրենց անձնագրերը:

30/14 Վանաձորի թիվ 5 մանկապարտեզ

• Քվեարկության եկած քաղաքացին ներկայացել է Սերժ Սարգսյանի բուկլետը ձեռքին ու բացատրել, որ նույն օրը շտաբում են տվել, ու ասել, որ չմոռանա՝ ում ընտրի:

• Քվեարկությունից հետո քաղաքացու անձնագրում դրոշմակնիք չի դրվել: Կազմվել է արձանագրություն:

30/15 Վանաձորի թիվ 8 դպրոց

• Ընտրական տեղամասում կուտակում է եղել, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը հատուկ միջոցառում է ձեռնարկել խախտումը կանխելու համար և ոստիկանության աշխատակիցը ընտրողներին մեկ- մեկ է ներս թողել:

30/18 Վանաձորի թիվ 9 միջնակարգ դպրոց

• Ընտրական տեղամասում պարբերաբար ներկա են գտնվել կողմնակի անձինք:

• Ընտրական տեղամասում եղել են կուտակումներ, հանձնաժողովի նախագահն

այդ կապակցությամբ ձեռնարկել է հատուկ միջոցառումներ:

• Նախագահի՝ տեղամասում ներկա չլինելու և քվեաթերթիկների նոր հարուրյակ չտրամադրելու պատճառով քվեարկությունն ավելի քան 10 րոպեով դադարեցվել է:

• 2 քվեաթերթիկի ետևում առկա է եղել հանձնաժողովի միայն 2 անդամի ստորագրությունը, հանձնաժողովի 3-րդ անդամը ստորագրել է և հանձնել քվեաթերթիկն ընտրողին:

• Ընտրական տեղամասում ներկա են եղել միևնույն վստահված անձի 2 ներկայացուցիչ, ինչը կանխվել է հանձնաժողովի նախագահի կողմից:

30/20 Վանաձորի Գյուղտեխնիկումի շենք

• Ընտրական տեղամասում կնիքը օգտագործված է եղել, հանձնաժողովի նախագահը դիտորդին պատասխանել է, որ ԿԸՀ-ն թույլ է տալիս, ամեն ընտրության ժամանակ նոր կնիքներ չեն տալիս:

• Նախագահի տեղակալը անընդհատ հրաժարվել է կատարել իր աշխատանքները, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը դիտողություն է արել տեղակալին:

• Ընտրական տեղամասում կուտակումներ են եղել, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը կանխել է խախտումը:

30/22 Վանաձորի 1-ին երաժշտական դպրոց

• Տեղամասում միաժամանակ ներկա են եղել Սերժ Սարգսյանի երկու վստահված անձինք: Դիտորդը դիտողություն է արել նախագահին, որից հետո մեկը դուրս է եկել:

• Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղամասից հեռացրել է Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Սոֆյա Քալանթարյանին: Հանձնաժողովի նախագահ Էդիկ Վահանյանն արձանագրություն է կազմել և ոստիկանության աշխատակիցներին հրավիրել ընտրատեղամաս՝ Սոֆյա Քալանթարյանին հեռացնելու:

30/25 Վանաձորի 2-րդ մանկապարտեզ

• Քվեարկությանը մասնակցած 1284 քաղաքացուց 25-ը քվեարկել է այլ անձանց օգնությամբ:

• 2 անգամ քվեարկության եկած անձը քվեարկել է մեկ ուրիշի փոխարեն:

• Մի քաղաքացու անձնագրում դրոշմակնիքը դրվել է ուրիշ էջի վրա, արձանագրություն չի կազմվել:

• Եղել են քաղաքացիներ, որոնք ընտրացուցակներից հանված են եղել, կամ էլ փոխարենը ուրիշ քաղաքացիներ են գրանցված եղել:

30/27 Վանաձորի թիվ 1 միջնակարգ դպրոց

• Հանձնաժողովի նախագահը կնիքը հանելուց անմիջապես հետո թանաքոտել է՝ չստուգելով կնիքի չոր լինելը: Վստահված անձի կողմից պահանջվել է արձանագրություն կազմել, սակայն հանձնաժողովի նախագահը չի կազմել:

• Ժամը 11:30-14:30-ի սահմաններում 2 միկրոավտոբուսով /մեկը դեղին պետհամարանիշով/ ընտրողներին տեղափոխել են ընտրական տեղամաս և առաջացել են կուտակումներ: Ոչ մի միջոցառում կուտակումը կանխելու համար չի ձեռնարկվել:

30/29 Վանածորի թիվ 3 դպրոց

• Ընտրական տեղամասում 1 ժամից ավելի եղել է կուտակում, նույնիսկ 30 ընտրողից ավելի ընտրող է միաժամանակ եղել տեղամասում, հանձնաժողովի նախագահը ոչ մի համապատասխան միջոց չի ձեռնարկել կուտակումը կանխարգելելու համար:

• Հանձնաժողովի նահագահը դրոշմակնքել է քաղաքացու անձնագրի կազմը:

• Քվեաթերթիկների ամփոփման ժամանակ Սերժ Սարգսյանի օգտին քվեարկված քվեաթերթիկների մեջ վստահված անձը նկատել է առանց նշումի քվեաթերթիկ, որը հաշվվել է հօգուտ Ս. Սարգսյանի: Դիտորդն առաջարկել է վերստուգել քվեաթերթիկները, սակայն, քվեարկությամբ հանձնաժողովը նման որոշում չի կայացրել: Նույն քվեաթերթիկների մեջ դիտորդը հայտնաբերել է մեկ չսահմանված նմուշի քվեաթերթիկ, որը հաշվվել է Սերժ Սարգսյանի օգտին: Քվեաթերթիկը Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած ձայների ընդհանուր թվից չի հանվել:

• Ընտրական տեղամասում հանձնաժողովի նախագահը սահմանափակել է դիտորդի և վստահված անձանց տեղաշարժման իրավունքը:

• Ընտրական տեղամասում մի քանի անգամ ներկա են գտնվել այլ անձինք, որոնք դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահի կողմից դուրս են հրավիրվել:

• Մի քվեախցիկում դիտորդի կողմից արձանագրվել է 3 ընտրողի միաժամանակյա քվեարկություն:

• Հանձնաժողովի նախագահը կնիքը հանելուց անմիջապես հետո թանաքոտել է՝ չստուգելով կնիքի չոր լինելը:

• Ընտրական տեղամասում միաժամանակ ներկա են գտնվել Սերժ Սարգսյանի 2 վստահված անձ:

• Հանձնաժողովի նախագահն անընդհատ շրջել է քվեախցիկների շուրջ և մեկ-երկու անգամ նայել է քվեախցիկի մեջ, ընտրողներից մի քանիսն էլ դրսում բողոքել են, որովհետև նրանց կարծիքով նախագահը տեսել է, թե ում են իրենք քվե տվել:

30/33 Վանածորի մշակույթի պալատ

• Ժամը 12:00-16:00-ն քաղաքացիներին խմբերով քվեարկության են տարել հատուկ միկրոավտոբուսներով /06LU/, որի պատճառով տեղամասում կուտակումներ են առաջացել: Դիտորդի դիտողությամբ նախագահը կարգավորել է և ներս է թողել մեկ-մեկ:

• Ժամը 15:30-16:00-ն մի քաղաքացի քվեարկել է անձնագրի պատճենով, դիտորդի պահանջով այս փաստն արձանագրվել է:

• Առավոտյան 8:00-18:40-ն ընկած ժամանակահատվածում տեղամասում միաժամանակ ներկա են գտնվել Սերժ Սարգսյանի երկու վստահված անձ:

• Ժամը 12:00-16:00-ն քաղաքացիները քվեախցերից դուրս են եկել քվեաթերթիկները դեպի դուրս ծալած, առանց ծրարների մեջ տեղավորելու, քվեատուփի մեջ գցելուց առաջ փորձել են ցույց տալ Սերժ Սարգսյանի վստահված անձին: Դիտորդը դիտողություն է ներկայացրել, սակայն արձանագրություն չի կազմվել:

• Տեղամասի լուսամուտից 12:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում քվեարկությանը հետևել են երկու անձինք:

31/03 Վանածորի թիվ 25 միջնակարգ դպրոց

• Ընտրողներից մի քանիսը խցիկում քվեարկելուց հետո առանց քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու մոտեցել են քվեատուփին, հանձնաժողովի նախագահի կողմից ձեռնարկվել է հատուկ միջոցառում խախտումը կանխելու նպատակով:

• Մի ընտանիքից 2 անձ փորձել են միաժամանակ մի քվեախցիկում քվեարկել, դի-

տորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը կանխել է խախտումը:

• Ընտրողներից մեկը, որը հանդիսացել է այլ տեղամասի հանձնաժողովի անդամ, մեկ այլ ընտրողի ցույց է տվել իր՝ արդեն Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած քվեաթերթիկը և ասել. «Տե՛ս, թե որտեղ պիտի քվեարկես»:

• Հանձնաժողովի քարտուղարի՝ Խաչատրյան Նվարդի սեղանին դրված է եղել Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիրը: Դիտորդի դիտողությունից հետո գրքույկը վերցրել են սեղանից:

• Հանձնաժողովի նախագահի կողմից խախտվել է վստահված անձի և դիտորդի տեղաշարժման իրավունքը:

• Առավոտյան ժամը 10:30-12:30-ի սահմաններում գոյացել են կուտակումներ: Իրավապահ մարմինների կողմից կանխվել է քաղաքացիների կողմից՝ ուժ գործադրելով տեղամաս մտնելը:

31/05 Վանաձորի թիվ 25 դպրոց

• Սերժ Սարգսյանի օգտին քվեարկած քվեաթերթիկների մեծ մասը ծալած են եղել դեպի դուրս:

31/15 Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոց

• 2 ընտրող չեն թույլատրել դրոշմակնքել իրենց անձնագրում:

31/17 գյուղ Լերմոնտովո, մշակույթի տուն

• Ընտրողների մեծամասնությունը դիտորդին խոստովանել է, որ 5.000-ական դրամ է ստացել գյուղի խանութից կամ Սերժ Սարգսյանի գրասենյակից, դրա համար էլ պարտավոր է ընտրել Սերժ Սարգսյանին:

31/18 գյուղ Շահումյան, մշակույթի տուն

• Ընտրական տեղամասի 30-40 տոկոսը քվեարկել է ուրիշի օգնությամբ:

• Գյուղապետը ներկա է եղել ընտրական տեղամասում, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրել նրան, սակայն հետո էլի եկել է տեղամաս, նույնիսկ սուրճ խմել:

• Ընտրական տեղամասում բաց քվեարկության դեպք է եղել Սերժ Սարգսյանի օգտին, տվյալ քվեաթերթիկը մարել են ու նոր քվեաթերթիկ տվել այդ ընտրողին:

• Հանձնաժողովի անդամները չեն թաքցրել, որ իրենց ասված է մոտ 700 քվե ապահովել Սերժ Սարգսյանի օգտին:

31/19 գյուղ Փամբակ, ակումբի շենք

• Մի ընտրող բարձրաձայն արտասանել է Սերժ Սարգսյանի անունը, ասել, որ նրան է ընտրել:

31/23 գյուղ Ձորագետ, դպրոցի շենք

• Հանձնաժողովի նախագահը և դպրոցի տնօրենը՝ Սերժ Սարգսյանի վստահված անձը, ժամը 8:00-14:30-ն ընկած ժամանակահատվածում անընդհատ քվեախցիկի մոտ կանգնած հետևել են, թե ընտրողները ում են ընտրում, դիտորդի դիտողությունից հետո խախտումը կանխվել է:

31/24 գյուղ Դեբեդ

• Քվեախցիկի վերևում ամրացված է եղել էլեկտրական լար՝ փոքր լուսավորիչ սարքով: Դրա առկայությունը հոգեբանական ճնշում է առաջացրել և կարող էր մեկնաբանվել որպես փոքր տեսախցիկ: Վստահված անձինք, դիտորդները մի քանի անգամ առաջարկել են հանել այն կամ գոնե ծածկել, քանի որ միևնույն է, միացված չէ և լույս չի տալիս: Հանձնաժողովի նախագահը մերժել է:

• Տեղամասում քվեարկել է 507 քաղաքացի, որից 48-ն ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չի ունեցել, որի առնչությամբ հանձնաժողովի նախագահն արձանագրություն է կազմել:

31/25 գյուղ Եղեգնուտ

• Հանձնաժողովի նախագահն անընդհատ տարբեր ժեստերով խոսել է համագյուղացիների հետ:

• Տեղամասում միաժամանակ ներկա են գտնվել Սերժ Սարգսյանի 2 վստահված անձինք:

31/26 Ձորագյուղ, դպրոցի շենք

• Մեքենայով տարեց մարդկանց բերել են տեղամաս, պատճառաբանել, թե տարեց մարդիկ են, օգնում ենք:

• Ընտրողների մոտ 70 տոկոսը քվեարկել են ուրիշի օգնությամբ:

• Հանձնաժողովի նախագահը `դպրոցի տնօրենն է հանդիսացել:

31/31 գյուղ Մարգահովիտ

• Մի քանի ընտրողներ քվեաթերթիկը առանց ծրարի մեջ դնելու դուրս են եկել քվեախցից, դիտորդի դիտողությունից հետո հանձնաժողովի նախագահը հատուկ միջոցառումներ է ձեռնարկել նմանօրինակ դեպքերը կանխելու համար, սակայն էլի նմանատիպ մի քանի դեպք է եղել:

31/35 Ալավերդու Մադան թաղամասի տնակ

• Հանձնաժողովի նախագահը կնիքը բացելուց հետո հնարավորություն չի տվել ներկաներին ստուգել՝ արդյոք կնիքը չոր է, թե ոչ: Դիտորդի դիտողությամբ կազմվել է արձանագրություն:

• Գյուղի նախագահը, ով միաժամանակ հանձնաժողովի անդամ է հանդիսացել, 06 մակնիշի 2 ավտոմեքենաների վարորդներին զգուշացել է, որ գնան, գյուղից բնակիչներին տեղափոխեն ընտրատեղամաս:

31/43 Ալավերդու թիվ 12 դպրոց

• 14:30-15:30-ն ընկած ժամանակահատվածում ընտրական տեղամասում կուտակումներ են եղել, հանձնաժողովի նախագահը միջոցառումներ է ձեռնարկել կուտակումները կանխելու համար:

• Մի քաղաքացի բարձրաձայն արտասանել է, որ ուզում է Արթուր Բաղդասարյանին ընտրել, հետո էլ ասել է, թե մտափոխվել է և ուզում է ավտոբուսների վրա փակցրած պաստառների մարդուն ընտրել:

32/02 Տաշիր

• Հանձնաժողովի անդամները ժամը 7:30-ին են ժամանել ընտրական տեղամաս:

• Քաղաքացին ընտրել է իր ծնողների փոխարեն:

• Մինչև 50 մ տարածության վրա կանգնած են եղել Տաշիրի քաղաքապետը, Տաշիրի ոստիկանության պետը:

• Տեղամասում գտնվող ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդի վրա հանձնաժողովի անդամները մեծ ճնշում են գործադրել՝ միջնորդելով նույնիսկ դիտորդի հարազատներին: Արդյունքում դիտորդը ստիպված է եղել լքել տեղամասը:

32/03 Տաշիր

• Հանձնաժողովի «Ժառանգություն» կուսակցության անդամները տեղամաս են ներկայացել առավոտյան 11:00-ին՝ պատճառաբանելով, թե ճանապարհները փակ են: Սակայն միևնույն տեղամասում գտնվող ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդն առանց խոչընդոտների տեղամաս է ներկայացել առավոտյան 07:00-ին: